ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՀԱԳՆ ՀԱԿՈԲՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԸ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

*Նվիրում եմ*
*հայրիկիս հիշատակին*

*To my father*

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**VAHAGN HAKOBYAN**

# ISSUES OF YEREVAN KHANATE HISTORY IN THE SECOND HALF OF THE XVIII CENTURY ACCORDING TO PERSIAN DOCUMENTARY SOURCES OF MATENADARAN

Editor K. Kostikyan

Yerevan 2021

9(47.925)
Հ-17

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՎԱՀԱԳՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԸ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

64117

Խմբագիր՝ Ք. Կոստիկյան

Երևան 2021

ՀՏԴ 930
ԳՄԴ 63.2
Ե 813

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Ք. **Կոստիկյան**

Ե 813 **Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության հարցերն ըստ Մատենադարանի պարսկերեն վավերագրական նյութերի** / Կազմեց՝ Վ. Հակոբյան.- Եր.: Մատենադարան, 2021. 200 էջ:

Գրքում Մատենադարանի պարսկերեն վավերագրական նյութերի, հայկական և օտար աղբյուրների, ուսումնասիրության և համեմատական վերլուծության միջոցով ներկայացված են Երևանի խանության ԺԸ դարի երկրորդ կեսի պատմությանը վերաբերվող առանցքային հարցեր: Գիրքը նախատեսված է աղբյուրագետների, պատմաբանների, հայագետների, իրանագետների, միջազգայնագետների, վերոնշյալ թեմայով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 930
ԳՄԴ 63.2

ISBN 978-9939-9257-9-0
© Մաշտոցյան Մատենադարան, 2021
© Վահագն Հակոբյան, 2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..................... 7

**ԳԼՈՒԽ I.**

ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԸ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԱԼԵԶՈՒ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..................... 17

1.1. Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության պարսկերեն վավերագրերը որպես պարսկական գրագրության նմուշներ ..................... 17

1.2. Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության պարսկերեն վավերագրերի բովանդակային առանձնահատկությունները ..................... 24

**ԳԼՈՒԽ II.**

ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ..................... 38

2.1. Երևանի խանության տարածքը և վարչական միավորները..................... 38

2.2. Երևանի խանության բնակչության էթնիկ կազմը..................... 47

2.3. Երևանի խանության տնտեսական համակարգը..................... 62

**ԳԼՈՒԽ III.**

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ 1750-1770-ԱԿԱՆՆԵՐԻՆ..................... 82

3.1. Երևանի խանությունը տարածաշրջանային քաղաքական իրադրությունում 1750-1770-ականներին..................... 82

3.2. Երևանի խանությունը ռուս-վրաց-թուրքական հարաբերությունների համատեքստում 1760-1770-ականներին..................... 99

3.3. Երևանի Հուսեյն Ալի խանի և Հերակլ Բ-ի փոխհարաբերությունները ........ 112

ԳԼՈՒԽ IV.

ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1780-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ........ 127

4.1. Երևանի խանությունը 1780-ականների ռուս-իրանական հարաբերությունների համատեքստում ........ 127

4.2. Երևանի խանությունը ռուս-վրաց-թուրքական հարաբերությունների համատեքստում 1780-ականներին ........ 133

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ........ 148

CONCLUSION ........ 150

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ........ 152

Անտիպ աղբյուրներ՝ ձեռագրեր և վավերագրեր ........ 152

Աղբյուրներ ........ 152

Գրականություն ........ 156

Հոդվածներ ........ 158

Ց Ա Ն Կ Ե Ր ........ 160

Աշխարհագրական անուններ ........ 160

Անձնանուններ ........ 163

ՀԱՎԵԼՎԱԾ ........ 167

Բառարան հարկային, սոցիալական, վարչական և այլ եզրույթների ........ 167



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԺԸ. դարի երկրորդ կեսին Հյուսիսային Իրանում և Այսրկովկասում գոյություն ունեին Երևանի, Նախիջևանի, Խոյի, Մակուի, Ղարադաղի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի (1765թ. հետո այս խանությանն է միացվում նաև Դերբենդի խանությունը), Բաքվի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի, Արդաբիլի, Մարաղայի, Սավուջ-Բուլաղի, Ղարաբաղի խանությունները[1]: Նադիր շահի սպանությունից հետո Իրանում կենտրոնական ուժեղ իշխանության բացակայության պայմաններում այս խանությունները որոշ ինքնուրույնություն: Ռուս-թուրք-իրանական մրցակցության սրման պայմաններում որոշակի դերակատարում ուներ Երևանի խանությունը, որի նկատմամբ կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր իր ազդեցությունը տարածել՝ հաշվի առնելով տարածաշրջանում նրա ունեցած ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակությունը:

Սույն աշխատությունում փորձել ենք համակողմանի քննել Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության հարցերը՝ հիմք ընդունելով Մատենադարանի պարսկերեն վավերագրական նյութերի տվյալները՝ ամփոփված խանական հրովարտակներում, նամակներում և էջմիածնի կալվածագրերում: Ուսումնասիրության համար ժամանակագրական ընտրությունը պայմանավորված է խանության կիսանկախ կարգավիճակով, որը տևում է Նադիր շահի մահից հետո մինչև 1795թ. Աղա Մուհամմադ խանի զորքերի կողմից Երևա-

[1] Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800), Երևան 1958, էջ 29:

նի խանության ռազմակալումը և դրա Մուհամմադ խանի նպատակեցումը: Այդ ընթացքում Երևանի խանությունը փաստացի վերածվել էր մի կիսանկախ պետական միավորի, որն ուներ իր կառավարման համակարգը, առանձին տնտեսությունը, զինված ուժերը և այդ ամենի գլուխ կանգնած խանը հիմնականում վարում էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն:

Սույն աշխատության թեմայի ընտրության և հետագայում հետազոտման հարցում իր մասնագիտական խորհուրդներով և ուղղորդումներով մեծ ներդրում է ունեցել պ.գ.թ. դոկտոր, պրոֆեսոր Պ. Չոբանյանը:

Պարսկալեզու վավերագրերը վերծանելու, դրանք թարգմանելու և աշխատությունը դրանց շուրջ կառուցելու հարցում անգնահատելի ներդրում ունի պ.գ.թ. դոկտոր Ք. Կոստիկյանը:

## Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն

Երևանի խաների պարսկալեզու վավերագրերը և նամականին, որոնք աշխատության շարադրման համար օգտագործվել են որպես հիմնական աղբյուր, պահպանվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում և Արաբատառ ձեռագրերի ֆոնդում: Կաթողիկոսական դիվանի վավերագրերը հիմնականում փաստաթղթերի բնօրինակներն են: Իսկ Արաբատառ ձեռագրերի ֆոնդում պավող նամականին Երևանի Հուսեյն Ալի խանի (1759-1783թթ.), նրա որդիներ Ղուլամ Ալի խանի (1783-1784թթ.) և Մոհամմադ խանի (1784-1805թթ.) նամակների և հրովարտակների պատճենների ժողովածուն է, որը կազմել է խանական դիվանի գրագիր Միրզա Մոհամմադ Մուսայլամը: Իրանական իշխանությունների հրապարակած հրովարտակների մեծ մասը հայերեն, ռուսերեն և անգլերեն թարգմանությունների հետ զուգահեռ մի քանի հատորներով հրատարակվել են



Հ. Փափազյանի և Ք. Կոստիկյանի կողմից[2], ինչը հեշտացնում է այդ կարգի այլ աղբյուրների ուսումնասիրումը: Ավելին, Մատենադարանի պարսկերեն հրովարտակների չորրորդ պրակը հավելյալ նյութ է ապահովում Իրանի գահին ԺԸ. դարի երկրորդ կեսին հավակնող և իշխանությունը գրաված տիրակալների և Երևանի խաների ու էջմիածնի կաթողիկոսների փոխհարաբերությունների վերաբերյալ:

Պարսկալեզու վավերագրերում և նամակներում առկա տեղեկությունները լրացվում են այլ աղբյուրների շնորհիվ: Մեծ արժեք են ներկայացնում էջմիածնի կաթողիկոսներ Սիմեոն Երևանցու և Ղուկաս Կարնեցու նամակները, որոնք հրատարակվել են Գյուտ ավագ քահանա Աղանյանցի կողմից մի քանի հատորով[3]: Այդ նամակները, որոնց մի մասն ուղղված են տարածաշրջանի տարբեր առաջնորդների՝ Հերակլ Բ-ին, Իրանի խաներին, օսմանյան փաշաներին և այլոց, կարևոր տեղեկություններ են հաղորդում ժամանակաշրջանի միջազգային իրադրության, հայ կաթողիկոսների դիվանագիտական կապերի վերաբերյալ: Իսկ հայ հոգևորականներին և այլ գործիչներին ուղարկված նամակներում կաթողիկոսները երբեմն մանրամասնորեն շարադրում են իրենց ապրած ժամանակահատվածում Երևանի խանությունում տեղի ունեցող իրադարձությունները:

---

2 **Հ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ-ԺԶդդ. ), Երևան 1956, Երևան 1959, **Ք. Կոստիկյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731) Երևան 2005, **Ք. Կոստիկյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ չորրորդ (1734 1797), Երևան 2008:

3 **Գ. Աղանյանց**, Դիվան հայոց պատմության, գիրք Ա-Բ, Թիֆլիս 1893, **Գ. Աղանյանց**, Դիվան Հայոց պատմության, գիրք Գ. Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, Թիֆլիս 1894թ, **Գ. Աղանյանց**, Դիվան հայոց պատմության, գիրք Դ. Ղուկաս կաթողիկոս (1780-1800) Թիֆլիս 1899, **Գ. Աղանյանց**, Դիվան Հայոց պատմության, գիրք Ը. Սիմեոն կաթողիկոսի յիշատակարան մասն երկրորդ (1767-1776), Թիֆլիս 1908:

Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը ժամանակաշրջանի անփոխարինելի սկզբնաղբյուր է Էջմիածնի վանքի տնտեսությունն ուսումնասիրելու, պարսկալեզու վավերագրերում առկա տեղեկությունները լրացնելու և ամբողջացնելու համար[4]: Կաթողիկոսն իր աշխատությունում նկարագրում է տարբեր ժամանակներում Էջմիածնին պատկանած կալվածները, դրանց ձեռքբերման հանգամանքներն ու դրանց նկատմամբ վանքի ունեցած իրավունքները:

Թեմայի ուսումնասիրման համար մեծ կարևորություն ունեն նաև վրացական, ռուսական և օսմանյան աղբյուրները: Դրանց հետազոտումը հնարավորություն է ընձեռում առավել բազմաբովանդակ քննության ենթարկել թեման: Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից հրատարակված վրացերեն սկզբնաղբյուրները արժեքավոր տեղեկություններ են հայտնում խնդրո առարկա ժամանակաշրջանում վրաց արքաների դեպի Երևան իրականացրած արշավանքների, տարածաշրջանում տեղի ունեցած այլ իրադարձությունների վերաբերյալ[5]: Այդ աղբյուրների հեղինակներից ոմանք իրենց կողմից շարադրված պատմական իրադարձությունների անմիջական մասնակիցներն են եղել, ինչն էլ ավելի է կարևորում աղբյուրի նշանակությունը: Այդուհանդերձ, վրաց հեղինակների հաղորդած տեղեկություններին պետք է վերապահումով մոտենալ, քանի որ հեղինակները, ցանկանալով փառաբանել վրաց արքաներին, երբեմն ոչ օբյեկտիվ են ներկայացնում իրադարձությունները՝ վրաց արքաներին մեծ հաջողություններ վերագրելով, չափազանցելով նրանց զորքի, նրանց կողմից գերվածների թվերը և այլն:

Աշխատությունում օգտվել ենք Ա. Սաֆրաստյանի աշխատասիրությամբ հրատարակված թուրքական սկզբնաղբյուրներից, որոնցում, ինչպես վրացական սկզբնաղբյուրներում, հանդիպում ենք իրադարձությունները ոչ օբյեկտիվորեն ներկայացնելու, երբեմն չափազանցությունների դիմելու երևույթների[6]: Մեր կողմից ուսումնասիրված թուրքական աղբյուրներում հատկապես արժեքավոր է սուլթան Աբդուլ Համիդ I Ղազիի (1774-1789թթ.) Երևանի Հուսեյն Ալի խանին ուղղված ֆերմանը, որը բացառիկ տեղեկություններ է հաղորդում Հուսեյն Ալի խանի և Օսմանյան կայսրության հարաբերությունների, տարածաշրջանի քաղաքական իրադրության վերաբերյալ:

Թեմային առնչվող օտարալեզու սկզբնաղբյուրների շարքում կարևոր են հատկապես ռուսականները: Դրանք հիմնականում տարածաշրջանում դիվանագիտական, ռազմական, առևտրային և այլ գործունեություն իրականացրած անձանց հաշվետվությունները, նամակները և օրագրություններն են, որոնցից մի մասը պահվում է Ռուսաստանի դաշնության արխիվներում: Դրանցից մի քանիսը հրատարակվել են Մ. Ներսիսյանի խմբագրությամբ[7]: Ժողովածուներում ընդգրկված են հայ նշանավոր գործիչների, վրաց Հերակլ Բ[8] թագավորի, Իրանի մի շարք խաների, ռուսական իշխանությունների ներկայացուցիչների և տարածաշրջանի քաղաքական կյանքում ակտիվ մասնակցություն ունեցող այլ անձանց նամակներ, զեկույցներ, հրամաններ և նմանատիպ այլ գրավոր փաստաթղթեր:

[4] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, «Ջամբռ», Երևան 2003:

[5] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան 1955:

[6] **Ա. Սաֆրաստյան,** Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հատոր Ա, Երևան 1964:

[7] Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, сборник документов, т. III, В. Восканян, Дж. Галустян, В. Мартиросян, Ереван 1978, Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800гг., сборник документов. т. IV, А. Алексанян, В. Мартиросян, М. Нерсисян, П. Чобанян, Ереван 1990.

[8] Տվյալ ժամանակահատվածում գոյություն ուներ երեք վրացական թագավորություն. դրանցից Իմերեթիայում թագավորում էր Սողոմոնը, իսկ Իմերեթիայից արևելք՝ Քարթլիում, թագավորում էր Թեյմուրազ Բ-ը, Կախեթում՝ վերջինիս որդի Հերակլ Բ-ը: 1762թ. հետո Քարթլին և Կախեթը միացան Հերակլ Բ-ի իշխանության ներքո որպես միասնական թագավորություն: Քանի որ Հերակլ Բ-ի թագավորությունը սկզբնաղբյուրներում և իր ժամանակի փաստաթղթերում կոչվում է նաև Վրաստան: Մենք ևս սույն աշխատությունում Վրաստան անվան տակ նկատի կունենանք Հերակլ Բ-ի թագավորությունը:

Դրանց հաղորդած տեղեկությունների միջոցով կարողանում ենք առավել խորքային հետազոտության ենթարկել Այսրկովկասում ռուսական իշխանությունների ծավալած գործունեությունն ու տարածաշրջանին վերաբերվող այլ կարևոր անցուդարձերը:

Թեմայի շարադրման ընթացքում հետազոտություններ են իրականացվել Ռուսաստանի հին ակտերի պետական արխիվում և Ռուսաստանի ռազմա-պատմական պետական արխիվում, ինչի շրջանակներում ծանոթացել ենք չհրատարակված փաստաթղթերի. մասնավորապես 1780-1785թթ. Իրանում Ռուսաստանի հյուպատոս Իվան Վասիլևիչ Տումանովսկու որոշ նամակներին և Իրանի խաների ռուսական իշխանություններին ուղղված նամակագրությանը: Այս նամակներում հեղինակները հանգամանորեն շարադրում են Քերիմ խանի մահվանից հետո Իրանում ստեղծված իրադրությունը, ծավալված գահակալական պայքարը, իրանական խաների նկրտումները Հարավային Կովկասի տարածքների նկատմամբ և նրանց հարաբերությունները Ռուսաստանի հետ: Այս տեղեկությունները կարևոր են Ռուսաստանի Այսրկովկասյան քաղաքականությունը լիարժեք ուսումնասիրելու համար:

Թեմայի շարադրման ընթացքում օգտվել ենք նաև Կովկասյան Հնագրագիտական հանձնաժողովի կողմից հրատարակված Ռուսական հրամանատարների, պաշտոնյաների և Այսրկովկասի իշխողների նամակներից ու այլ փաստաթղթերից[9]: Այս վավերագրերը կարևոր տեղեկություններ են հաղորդում ԺԸ. դարի երկրորդ կեսում Այսրկովկասի միջխանական բախումների, ժողովրդագրական փոփոխությունների և տարածաշրջանում ընթացող այլ կարևոր իրադարձությունների վերաբերյալ:

9 **АКТЫ** собранные кавказскую археографическою комиссиею, т. 1, Тифлись 1866, **АКТЫ** собранные кавказскую археографическоую комиссиею, т. VI/1, Тифлись 1866, **АКТЫ** собраные кавказскую археографическую комиссиею, т. VIII, Тифлис 1881.



Ռուսական սկզբնաղբյուրների շարքում առանձնահատուկ կարևորություն ունի Ի. Շոպենի աշխատությունը նվիրված Երևանի նահանգի վիճակագրական նկարագրությանը[10]: Հեղինակն իր աշխատանքը գրելու համար ուսումնասիրություն է իրականացրել 1829-1831թթ., ինչի շնորհիվ Երևանի խանության տարածքի, բնակչության, կառավարման համակարգի և այլ մանրամասների վերաբերյալ նրա հաղորդած տեղեկությունները աչքի են ընկնում իրենց արժանահավատությամբ: Աշխատանքում հեղինակը մանրակրկիտ նկարագրում է խանության սահմանները, ներքին վարչական բաժանումը, աղյուսակների տեսքով ներկայացնում խանության բնակչության կազմը՝ ըստ էթնիկ պատկանելության և հաղորդում գանազան այլ վիճակագրական տվյալներ:

ԺԸ. դարի երկրորդ կեսում Այսրկովկասում Ռուսաստանի, Օսմանյան կայսրության և Իրանում ազդեցություն ունեցող գործիչների ծավալած գործունեության մասին է Օ. Մարկովայի աշխատությունը[11]: Հեղինակը խորքային քննության է ենթարկել տերությունների մրցակցությունը Այսրկովկասում առավել մանրամասն անդրադառնալով ռուս-թուրքական, ռուս-իրանական հարաբերություններին և դրանցում վրացական թագավորությունների դերին: Մարկովան այս աշխատությունը գրելիս հիմնականում օգտվել է արխիվային փաստաթղթերից, ինչն ավելի է բարձրացնում աշխատանքի կարևորությունը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Ռուսաստանի այսրկովկասյան քաղաքականության, Այսրկովկասում և Իրանում ընթացող իրադարձությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Պ. Բուտկովի աշխատու-

10 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, Санктпетербург 1852.

11 **О. Маркова,** Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва 1966.

թյունը[12]: Չնայած այստեղ առկա են որոշակի թվագրական սխալներ, այնուամենայնիվ աշխատությունում առկա տեղեկությունները կարևոր են տարածաշրջանում ընթացող դեպքերի ուսումնասիրման համար: Թեմային վերաբերող փաստագրական առատ նյութ պարունակող արժեքավոր ուսումնասիրություններից են նաև Ա. Ցագարելու աշխատությունները[13], որոնցում, հեղինակն օգտագործել է վրացական, ռուսական, իրանական իշխանությունների և հայության ղեկավարության միջև գրագրության նյութերը:

Երևանի խանությունում եղած հողատիրության ձևերի և հարկային համակարգի ուսումնասիրման համար անփոխարինելի արժեք ունեն Ի. Պետրուշևսկու[14] և Հ. Փափազյանի աշխատությունները[15]: Երկու հեղինակներն էլ իրենց աշխատությունները շարադրելիս օգվել են գլխավորապես պարսկական վավերագրերից: Պետրուշևսկին Մատենադարանի պարսկերեն վավերագրերին զուգահեռ օգտվել է նաև ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Թիֆլիսի մասնաճյուղ Ն. Մառի անվան ինստիտուտի կողմից հրատարակված Նախիջևանի և Ղուրայի խանությունների վավերագրերից, իրանական, արևմտաեվրոպական, ռուսական սկզբնաղբյուրներից: Հեղինակն իր աշխատությունում նկարագրում է ֆեոդալական հարաբերություններն Այսրկովկասում, գործող հողատիրության ձևերն ու հարկային համակարգը` հանգամանորեն բացատրելով հարկային համակագին և հողատիրությանը վերաբերվող տերմինների ծագումնաբանությունը, դրանց նշանակու-

[12] **П. Бутков**, Материали для новой истории Кавказа, с 1722 по 1803 года,ч. 1, Санктпетербург 1869.

[13] **А. Цагарели**, Грамоты и другие исторические документы 18 столетия, относящиеся кь Грузии, Том I, сь 1768 по 1774. **А. Цагарели,** Сношения росии с кавказом в 16-18 столетиях, Реч проф. А. Цагарели 8 февраля 1891.

[14] **П. Петрушевский,** Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв. Ленинград 1949.

[15] А. Папазян, Аграрние отношение в Восточной Армении в XVI-XVII веках, Ереван 1972.



թյունն ու կիրառությունը: Հ. Փափազյանը ևս իր աշխատանքը շարադրելիս օգտվել է պարսկական վավերագրական ու պատմագրական նյութերից, ռուսական և արևմտաեվրոպական սկզբնաղբյուրներից: Հեղինակն իր աշխատանքում զգալի տեղ է հատկացրել նաև հայկական աղբյուրների հաղորդած տեղեկություններին: Թերևս սա պայմանավորված է աշխատության թեմատիկ ուղղվածությամբ: Եթե Պետրուշևսկու աշխատությունը վերաբերվում է Այսրկովկասի ֆեոդալական հարաբերություններին, ապա Փափազյանը կենտրոնացել է Արևելյան Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների վրա` սահմանափակվելով ԺԶ.-ԺԷ. դարերով: Հեղինակն իր աշխատանքում քննության է ենթարկել Արևելյան Հայաստանում հայ հողատեր ֆեոդալների, որպես դասակարգ, վերանալու գործընթացը, եկեղեցական հողատիրությանը և հարկային համակարգին վերաբերվող հարցեր: Պետրուշևսկու և Փափազյանի այս աշխատություններն հնարավոր են դարձնում առավել խորքային և առարկայական ձևով հետազոտել Երևանի խանության սոցիալ-տնտեսական պատմության հարցերը, քանի որ դրանք իրենց մեջ կրում էին նախորդ` Սեֆյան ժամանակաշրջանին բնորոշ շատ հատկանիշներ:

Աշխատանքը շարադրելիս օգտվել ենք Պ. Չոբանյանի աշխատությունից[16]: Հեղինակն իր աշխատությունում հատուկ ուշադրություն է դարձրել ԺԸ. դարի երկրորդ կեսին հայ-ռուսական, հայ-վրացական և վրաց-ռուսական հարաբերություններին` լուսաբանելով Այսրկովկասում ընթացող քաղաքական դեպքերին վերաբերվող բազմաթիվ կարևոր հարցեր: Չոբանյանն այս հետազոտությունն իրականացնելիս օգտվել է հայկական, վրացական, ռուսական և այլ սկզբնաղբյուրներից, ինչի շնորհիվ աշխատությունում առկա տեղեկատվությունն աչքի է ընկնում իր արժանահավատությամբ: Հեղինակը, օգտվելով բազմալեզու սկզբնաղբյուրներից, թեմային վե-

[16] **Պ. Չոբանյան,** Հայ-ռուս- վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Երևան 2006:

րաբերվող հարցերը խորքային քննության է ենթարկել և շարադրել մատչելի լեզվով, ինչն ավելի է բարձրացնում աշխատության գիտական արժեքը:

Երևանի խանության ԺԸ. դարի վերջին քառամյակի պատմության շարադրման հաջողված փորձ է Վ. Գրիգորյանի աշխատությունը[17]: Այն շարադրվել է հայկական, ռուսական սկզբնաղբյուրների և գրականության հիման վրա: Հեղինակն օգտագործել է նաև մի քանի պարսկալեզու վավերագիր: Վ. Գրիգորյանի կողմից օգտագործված սկզբնաղբյուրներից հիշատակման են արժանի կաթողիկոս Ղուկաս Կարնեցու նամակների սևագրությունները, որոնք պահվում են Մ. Մ. Մատենադարանի համապատասխան ֆոնդերում: Ի տարբերություն մեր կողմից ուսումնասիրված պատմագիտական մյուս աշխատությունների, որոնք ընդհանուր առմամբ Այսրկովկասի պատմության տարբեր հարցերի վերաբերյալ են, և դրանցում Երևանի խանության պատմությանը անդրադարձ է կատարվում Այսրկովկասի պատմության համատեքստում, Վ. Գրիգորյանի աշխատությունը վերաբերվում է միայն Երևանի խանությանը: Այս աշխատությունում հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է խանության քսան տարվա պատմությունը՝ թեմայի վերաբերյալ հետազոտողներին տրամադրելով հարուստ նյութ:

Այսպիսով, թեման հետազոտելիս Մատենադարանի պարսկերեն վավերագրական նյութերին զուգահեռ ուսումնասիրել ենք նաև հայերեն, օսմանյան, ռուսական և վրացական սկզբնաղբյուրներ՝ փորձելով աշխատությունում համակողմանիորեն ներկայացնել Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության հարցերը:

[17] Վ. Գրիգորյան, նշվ. աշխ.:



# ԳԼՈՒԽ I.

## ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԸ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԱԼԵԶՈՒ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1.1. Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության պարսկերեն վավերագրերը որպես պարսկական գրագրության նմուշներ

Մատենադարանի պարսկերեն հրովարտակները հրապարակված են Իրանի գերագույն տիրակալների՝ շահերի և երկրի տարբեր երկրամասերի կառավարիչների՝ խաների կողմից: Հրովարտակների կառուցվածքային ուսումնասիրության համար դրանք սովորաբար դիտարկում են երեք հիմնական մասերով՝ մաթլա (مطلع սկիզբ), մաթն ( - متن բուն տեքստ՝ այսինքն վավերագրի բովանդակությունը), խաթեմե ( خاتمه - վավերագրի ավարտը)[18]:

Վավերագրերը հաճախ կրում են այն կազմող պաշտոնյաների, վավերագրում արծարծվող հարցերի քննությանը ներկա եղած վկաների, գործարքի (եթե վավերագիրը գործարքի վերաբերյալ է) մասնակիցների և այն անձանց կնիքների դրոշմը, ում անունից, որ դրանք հրապարակվել են:

Շահական և խանական հրովարտակների միջև կան կառուցվածքային տարբերություններ:

Սեֆյանների, հետագայում նաև Զենդերի շրջանում, խնդրագրերին ի պատասխան հրապարակված հրովարտակները կոչվում

[18] Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը Հայոց պատմության սկզբնաղբյուր (XVII դարի II կես – XIX դարի I կես), Երևան 2017, էջ 198:

էին ռաղամ[19]: Մատենադարանի շահական հրովարտակների մեծ մասը վերաբերվում են Էջմիածնի վանքի իրավունքներին և պարտավորություններին: Էջմիածնի վանքին էին պատկանում գյուղեր, առուներ, ձիթհաններ և այլ կալվածքներ, որոնց նկատմամբ վանքի իրավունքներն ու դրանց տեսակները ամրագրվում էին շահական հրովարտակներով: Այդ հրովարտակների մի մասը գրվել են տարբեր գործիչների, այդ թվում նաև Էջմիածնի կաթողիկոսների խնդրագրերի հիման վրա: Հրովարտակների սկզբում դրված է շահի կնիքը[20]: Սեֆյան կառավարիչների կնիքները ուղղանկյուն կամ օվալաձև էին, երբեմն շրջանաձև[21]:

Կնիքի ներսում գրված է կառավարչի անունը և շիա իսլամին բնորոշ կրոնական բնույթի արտահայտություններ: Սեֆյանների շրջանում դիվանում կար հատուկ աշխատող՝ կնիքապան (մոհրդար): Հրովարտակում կառավարչի կնիքը դրվում էր կառավարչի կողմից, իսկ կնիքապանը հրովարտակի հակառակ կողմում դնում էր փոքր դրոշմակնիք[22]: Հրովարտակի տեքստի սկզբում գրվում էր, թե ինչ խնդրով է խնդրարկուն դիմել շահին: Այնուհետև շարադրվում էր շահի վճիռը: Շահի վճռում սովորաբար նշվում էր նաև, որ պետք է վարվել այնպես, ինչպես թելադրում է շար՛ը և ինչպես, որ ընդունված է եղել հնում: Ապա վճռին հաջորդում էր հրամանը, որ հետևեն իր այդ որոշման կատարմանը և այստեղ լինում էր նաև զգուշացում, որ այդ հրամանին հակառակ չփորձեն գործել: Երբեմն նշվում էր, թե որ տարածքի կառավարիչներին էր ուղղված հրամանը: Մեր կողմից ուսումնասիրված հրովարտակները հիմնականում վերաբերվել են Երևանի բեկլարբեկությունում ընթացող իրադարձություններին, ուստի հրովարտակներում, որպես դրանց իրականացման հասցեատեր, նշվում էին Երևանի բեկլարբեկները:

[19] سر هنگ دکتر جهانگیر. قاسم مقامی. بر شناخت اسناد تاریخی.تهران1350.ص 78

[20] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 353, 354, 355, 401, 405, թղթ. 4, վավ. 131:

[21] Տե՛ս հավելված, նկար 1,2:

[22] The Encyclopedia of Islam, New Edition, B. Lewis, Ch. Pellat, J. Schasht, vol. II, Leiden, E.J. Brill 1991, p. 312.



Հրովարտակների վերջում գրվում էին դրանց հրապարակման տարին և ամիսը: Դրանց առկայությունը մեծ կարևորություն է ներկայացնում, քանի որ հասկանալի է դառնում, թե հրամանագրում արծարծվող թեմաները երբ են տեղի ունեցել: Հրովարտակները հասցեատերերին առաքելուց առաջ ուղարկում էին ֆինանսական վարչակազմի տարբեր բաժիններ, որտեղ պաշտոնյաները ապահովում էին հրովարտակի վավերացումն ու գրանցումը համապատասխան մատյաններում[23]: Փաստաթղթերը սկզբում բերվում էին մուսթովֆիի[24] մոտ, հետո շրջանառվում տարբեր բաժիններում, վերջում կրկին գալիս մուսթովֆիի մոտ[25]: Հրովարտակների հակառակ կողմում գրվում էր նաև, թե ում կողմից այն գրվեց, ում կողմից գրանցվեց: Գրողի և գրանցողների անունների կողքին դրվում էին նաև նրանց կնիքները: Վավերագրերից շատերի հակառակ կողմում կա դրանց հայերեն համառոտագրությունը, որտեղ գրված է, թե ում հրովարտակն է, ինչի մասին է, ինչպես նաև հրովարտակի արձակման ամսաթիվը հայկական թվագրությամբ, որն իհարկե կատարել են վավերագրի հայ մշակողները[26]:

Խանական հրամանագրերը որոշակի կառուցվածքային տարբերություններ ունեն շահական հրամանագրերից: Խաների կնիքը մշտապես դրվում է հրամանագրի վերջում՝ ստորին մասում: Հրովարտակները սկսվում են թողրայով, որը հիմնականում հետևյալն է՝ «բարձր հրաման եղավ - حکم عالی شد»: Իսկ պաշտոնյան, ում ուղղված է հրամանագիրը, նշվում է թողրայից հետո: Խանական հրամանագրերում հիմնականում բացակայում է խնդրագրի մասը, ուստի հասցեատիրոջ անվանումից հետո

[23] The Encyclopedia of Islam, p. 312.

[24] Այսպես էին կոչվում պետության, արքունի, ինչպես նաև կրոնական հաստատությունների ֆինանսական, հաշվապահական գործերի գլխավոր կառավարիչները: Մուսթոֆիներ կային խոշոր նահանգային վարչական կենտրոններում, որոնք վերահսկում ու կառավարում էին տվյալ նահանգի կամ երկրամասի հաշվապահական գործերը:

[25] The Encyclopedia of Islam, p. 312.

[26] **Ք. Կոստիկյան.** Հրովարտակներ, պրակ չորրորդ, վավ. 35, 37, էջ 73, 76: ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1327, վավ. 1353:

նշվում է, թե ինչ խնդրի առկայությամբ է պայմանավորված հրովարտակի հրապարակումը, որից հետո շարադրվում է հրամանը: Հրամանի բուն բովանդակությանը, ինչպես և շահական հրովարտակներում էր, հաջորդում է խաթեմեն, որտեղ զգուշացվում էր, որ հրամանը պարտադիր պետք է կյանքի կոչվի, որից հետո գրվում է դրա արձակման ամսաթիվը որից հետո խանի կնիքն է: Կնիքն օվալաձև է, ներսում գրված է խանի անունը՝ օրինակ «Ազատ» - ازاد», գրության մնացած հատվածն անընթեռնելի է[27]: Տարբեր են հրովարտակների հակառակ կողմերի նշումները: Դրանցից ոմանց հակառակ կողմում նշված է, թե ում կողմից է գրի առնված, ում կողմից է աչքի անցկացված, ում կողմից է գրանցված և յուրաքանչյուրի անվան դիմաց նրա կնիքը[28]: Ազատ խանի որոշ հրովարտակների հակառակ կողմում բացակայում են այն գրողի, գրանցողի և դրա հետ կապ ունեցող այլ անձանց տվյալները: Հակառակ կողմում պարսկերեն գրված է, թե ում է այն ուղղված և հայերեն հակիրճ շարադրանք կա, ավելացված հետագայում, որով հիմնականում ճիշտ տեղեկություն է հաղորդվում հրովարտակի բովանդակության վերաբերյալ[29]: Խանական հրամանագրերը աչքի չեն ընկնում իրենց գեղարվեստական զարդարանքով ու վայելչագրությամբ․ դրանք ավելի զուսպ են ու հակիրճ:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքում առկա է նաև վրաց Հերակլ Բ արքայի հրովարտակը[30]: Դրա վերջում

[27] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1323, 1326, 1327, 1339. Ազատ խանի այլ հրամանագրեր հրատարակվել են Ք. Կոստիկյանի կողմից: Տե՛ս **Ք. Կոստիկյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ չորրորդ (1734 1797), Երևան 2008, վավ. 38, էջ 317-318, վավ. 40-47, էջ 321-343:

[28] Նույն տեղում, վավ. 38, էջ 317-318, վավ. 45,46, 47, 330-343, ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1327, 1339:

[29] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1323, 1326, **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, վավ. 41, պարսկերեն տարբերակն ու բնօրինակը՝ էջ 321-323, հայերեն թարգմանությունը՝ 79:

[30] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1զ, վավ. 406, **Ք. Կոստիկյան,** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ չորրորդ (1734 1797), վավ. 39:



դրված է վրաց արքայի կնիքը, որի ներսում գրված են հետևյալ տողերը. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Հերակլ»:

Այս հանգամանքը ցույց է տալիս, որ չնայած այդ շրջանում Արևելյան Վրաստանը անկախացել էր, պարսկական քաղաքակրթական ազդեցությունն այնքան մեծ էր, որ ըստ երևույթին, վրաց արքան իր գրագրության մեջ ուղղակի հետևում էր ավանդաբար շարունակվող գրագրության կանոններին[31]: Միաժամանակ այս և Գեորգի արքայազնի հրովարտակները, ինչպես նաև նրանց ու Երևանի խանի փոխանակած նամակները փաստում են, որ մահմեդական խաների հետ փոխհարաբերություններում վրաց թագավորը իր հրամանագրերն ու նամակները գրում էր Կովկասում այդ շրջանում որպես միջազգային հաղորդակցման լեզու ծառայող պարսկերենով և ավանդաբար հետևելով պարսկական գրագրության կանոններին՝ իր կնիքը, որպես խանի կնիք, դնում հրամանագրի վերջում:

**Նամականի:** Նամակագրությունը գրավոր աղբյուրների առանձին տեսակ է, որը կարող է հանդիսանալ պատմական տարբեր փուլերի և հարցերի ուսումնասիրման գլխավոր աղբյուրը: Նամակագիտությունը պատմագրության բաղադրիչներից է[32]: Դրա նպատակն է տարբեր դարաշրջանի նամակների ներքին բովանդակային կառուցվածքի և հաղորդվող տեղեկատվության ուսումնասիրումը[33], որն անհրաժեշտ է համեմատել և զուգակցել նամակում արծարծվող երևույթը փաստերի հետ[34]:

Մատենադարանի արաբատառ N 233 ձեռագիրը Երևանի Հուսեյն Ալի, Ղուլամ Ալի, Մուհամմադ խաների 200 նամակների ու հրովարտակների պատճենների ժողովածուն է: Այն որոշ չափով ուսումնասիրվել է Հ. Փափազյանի և Ք. Կոստիկյանի կողմից: Հ. Փափազյանը հրատարակել է երկու վավերագրեր[35], ինչպես նաև

[31] Նույն տեղում:

[32] **В. Сметанин,** Византийское общество XIII-XV веков по данным эпистолографии, Свердловск 1987, с. 18.

[33] Նշվ. աշխ., էջ 19.

[34] Նշվ. աշխ., էջ 16.

[35] **Հ. Փափազյան,** Երևանի Մոհամմադ խան Ղաջարի՝ Միրզա-Աղա Միպկիին և Ահմադ-Աղա Զիյանիին շնորհած աղայության հրամանագրեր(XVIIIդ.),

վավերագրերի բովանդակության վերաբերյալ տեղեկություն է հաղորդել Վ. Գրիգորյանին, ով այն օգտագործել է իր աշխատությունում[36]: Վավերագրերի վերնագրերը հրատարակվել են Ք. Կոստիկյանի կողմից Մատենադարանի պարսկերեն ձեռագրացուցակում[37]: Ձեռագրի էջերի վերին հատվածում, առկա է մատիտով էջանշում, որն ըստ էության կատարվել է ուշ, հնարավոր է Հ. Փափազյանի կողմից: Վերջինս իր հրատարակած վավերագրերը հղում է համապատասխան այդ էջադրման[38]: Ձեռագիրը Մատենադարանի ձեռագրերի մշակման ու էջադրման սկզբունքով էջադրել է նաև Ք. Կոստիկյանը: Հղումներ կատարելիս մենք առաջնորդվել ենք այս էջադրումով: Ձեռագիրը կազմվել է Հուսեյն Ալի խանի և Մուհամմադ խանի գլխավոր քարտուղար Միրզա Մուհամմադ Մոսալլամի կողմից:[39] Ձեռագիրը գրի է առնվել նրա ենթակա գրագիրներից մեկի կողմից, ում անունը նշված չէ: Ձեռագիրը գրված է շեքասթե-նասթա’լիղ գրով, սև թանաքով, նամակների և հրովարտակների վերնագրերը՝ կարմիր թանաքով: Դաղստանի խաներին ուղղված հինգ նամակներն արաբերենով են գրված[40]: Ձեռագրի յուրաքանչյուր էջում 14 տող է, ներառյալ վերնագրերը, որոնք չեն սկսվում նոր էջից, նոր տողից. յուրաքանչյուր նամակի ավարտին անմիջապես հաջորդում է մյուս նամակը:

Թերթերից մի քանիսը վնասված են, որոշ թերթերում առկա են ջնջված հատվածներ[41]: Ժողովածուի մի քանի նամակներ թվագրված են[42]: Դրանցից ամենավաղը թվագրված է հիջրայի 1107 (1695/6) թվականով[43], իսկ ամենաուշը՝ հիջրայի 1201 (1786/7) թվականով[44]: Պահպանված չէ նաև փաստաթղթերի բնօրինակների ստեղծման ժամանակագրական հաջորդականությունը, Մուհամմադ խանի կողմից ուղարկված նամակին կարող են հաջորդել Հուսեյն Ալի խանի և Ղուլամ Ալի խանի նամակները: Սա դժվարացնում է նամակի, հրովարտակի պատմության և դրանցում ներկայացված իրադարձությունների հստակ ժամանակագրության ճշտումը: Վավերագրերի վերնագրերում գրված են, թե ում են ուղղված և ինչի մասին են: Որոշ վավերագրերի վերնագրերում գրված է, թե ում կողմից է այն գրված, ինչն օգնում է առավել շատ տեղեկություն ստանալ վավերագրի, դրա հաղորդած տեղեկության վերաբերյալ:

Խանական հրամանագրերը տասնչորսն են: Դրանք իրենց կառուցվածքով նման են ժողովածույում ընդօրինակված խանական նամակներին. վերնագրերը կարմիր են և չեն սկսվում նոր տողից, պարզապես շարունակվում են նախորդ վավերագրից անմիջապես հետո, թողրան, տեքստը և խաթեմեն առանձնացված չեն իրարից: Հրովարտակները վերաբերվում են տիտղոսների և պաշտոնների շնորհմանը[45], վակֆային ունեցվածքի նկատմամբ իրավունքների հաստատմանը[46]: Հրամանագրեր են տրված նաև խանական դիվանատան գլխավոր աստղագետին և այլ պաշտոնյաների[47]:

Նամակները հիմնականում սկսվում են, քանի որ - چنانکه բառակապակցությամբ, ինչին հաջորդում են ժամանակաշրջանի

Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIII, Քրդագիտություն, Երևան 1985, էջ 276-277:

36 **Վ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 80:

37 **K. Kostikyan**, Catalogue of Persian Manuscripts in The Matenadaran, Yerevan 2017, p. 105-109.

38 **Հ. Փափազյան,** Երևանի Մոհամմադ խան Ղաջարի՝ Միրզա-Աղա Սիպկիին և Ահմադ-Աղա Չիլանիին շնորհած ազատության հրամանագրերը (XVIIIդ.), էջ 272-277:

39 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 22ա:

40 Նույն տեղում, 184բ-188բ էջերն արաբերեն են, բացառությամբ 186ա էջի, որը գրված է պարսկերեն նասխ գրով:

41 Նույն տեղում, էջ 211ա-218բ, 224ա-225բ, 233բ-239բ:

42 Նույն տեղում, էջ 85բ-87ա՝ Ղուկաս Կարնեցուն ուղղված հրովարտակը, էջ 118բ-119ա՝ ղազիի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ, և այլ վավերագրեր:

43 Նույն տեղում, էջ 157բ-158ա: Սա Սեֆյան Սուլթան Հուսեյն շահի հրովարտակն է Դաղեֆալին՝ վրաց թագուհուն՝ Նյալեթի կառավարիչ նշանակելու վերաբերյալ:

44 Նույն տեղում, էջ 105ա-106ա՝ ցանքատարածություններ նվիրելու վերաբերյալ:

45 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, 88բ-90ա, 106ա- 106բ:

46 Նույն տեղում, էջ 87ա-88ա:

47 Նույն տեղում, էջ 85ա-85բ:

գրագրությանը հատուկ գովաբանությունն ու պերճախոս արտահայտությունների շարքը։ Մեծարանքի խոսքերը ծանրաբեռնված են խրթին ճերբողական-այլաբանական արտահայտություններով։ Դրանք ուղղված են Ալլահին, նամակի հասցեատիրոջը, խանի մոտ եկած դեսպաններին, նամակում շարադրված հարցերի հետ առնչություն ունեցող անձանց։ Գովաբանական արտահայտությունները համեմված են Ղուրանից մեջբերված արտահայտություններով, երկնային ու երկրային երևույթների հետ համեմատություններով։

## 1.2. Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության պարսկերեն վավերագրերի բովանդակային առանձնահատկությունները

Մատենադարանի վերոնշյալ պարսկերեն վավերագրական նյութերը կարևոր տեղեկություններ են բովանդակում հայ ժողովրդի պատմության զանազան հարցերի վերաբերյալ։ Դրանք արժեքավոր սկզբնաղբյուրներ են ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության ուսումնասիրման համար։ Վավերագրերի մի մասն իրավական նշանակություն ունեցող փաստաթղթեր են, որոնցով ամրագրվել են իրանահպատակ ժողովուրդների գույքային, հարկային և այլ բնույթի իրավունքներն ու պարտականությունները։ Ուստի վավերագրերի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ստույգ տեղեկություն ձեռք բերել ժամանակաշրջանի իրավական համակարգի բաղադրիչների, տարբեր իրադարձություններում դրանց դրսևորումների և այլ իրավական հարցերի վերաբերյալ։ Իրավական համակարգի ուսումնասիրումը կարևոր է նաև միջնադարյան Հայաստանում բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի հետազոտման տեսանկյունից, որպեսզի հասկանալի լինի թե սոցիալ-տնտեսական գործունեություն իրականացնելիս ինչ իրավունքներ և պարտավորություններ ուներ հայ գյուղացիությունը, քաղաքային արհեստավորների և վաճառականների խավը, հայ հոգևորականությունը։



Հրամանագրերը բացահայտում են նաև Երևանի խանությունում առկա տարբեր խնդիրները, որոնց առնչվում էին հայ հոգևորականությունն ու հասարակության այլ խավերը։ Շատ են հատկապես վանքապատկան կալվածքների վերաբերյալ տեղեկություններ պարունակող հրամանագրերը։ Դրանց ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում վեր հանել արժեքավոր տեղեկություններ և լույս սփռել Էջմիածնի վանական հողատիրության պատմության վրա՝ տալով այնպիսի կարևոր հարցերի պատասխաններ, ինչպիսիք են. Էջմիածնի վանքը տարբեր ժամանակներում ինչ կալվածքներ է ունեցել, ինչպիսի իրավունքներ և պարտականություններ[48] է ունեցել այդ կալվածքների նկատմամբ, այդ իրավունքներից որոնք է կարողացել իրագործել, որոնք՝ ոչ, ինչ ապօրինի պահանջներ են ներկայացվել վանքին կալվածքների, հոգևորականների գործունեության և այլնի համար, ովքեր և ինչ հանգամանքներում են վանքին խոչընդոտել իրականացնել իր իրավունքները կալվածքների նկատմամբ, ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել վանքի իրավունքները տարբեր տիրակալների օրոք։

1650թ. շահ Աբբաս Բ-ի հրամանագրով հաստատվում են վանքի վակֆային կալվածքները[49]։ Այս վավերագրում առկա է վակֆային կալվածքների ցանկը։ Ուսումնասիրելով այն և համեմատելով 1431թ. կալվածագրում նշված վակֆային ունեցվածքի հետ, տեսնում ենք, որ վանքի կալվածքները զգալի չափով նվազել են։ Վանքապատկան կալվածքների հետագա պատմության ուսումնասիրման համար կարևոր է Իբրահիմ շահի 1748թ. և 1749թ. հրամանագրերի հետազոտումը, քանի որ այս վավերագրերում ևս նշվում են Էջմիածնապատկան գյուղերը։ 1748թ. հրամանագրերից մեկում Իբրահիմ շահը հրամայել է, որ վանքի կալվածքներն ազատվեն հարկերից, ինչպես եղել է Նադիրի ռազմ-

---

[48] Խոսքը հարկեր հավաքելու և պետության հարկեր տալու իրավունքի և պարտականության մասին է։

[49] Նույն տեղում, էջ 137-138։

ներով[50]: Իսկ 1749թ. փետրվարի 15-ի հրամանագրում Իբրահիմ շահը Էջմածնի վանքի կալվածքները հարկերից ազատելու հրամանում հղում է կատարել իր իսկ նախկին հրամաններին[51]:

Այսպիսով շահական հրովարտակների ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել, թե Էջմիածնի վանքին տարբեր ժամանակներում, ինչ կալվածքներ են պատկանել, ինչպես է վանքը դրանք ձեռք բերել և կորցրել:

Հրովարտակներում նշվում են նաև այն հարկատեսակները, որոնք Էջմիածինը վճարելիս է եղել և որոնցից վանքն ազատված է եղել: Նման տեղեկությունը հատկապես կարևոր է Հայոց եկեղեցու իրավական կարգավիճակը քննելու առումով՝ հաշվի առնելով, որ եկեղեցին գործում էր մահմեդական կայսրությունում: Ուստի հարկավոր է հասկանալ, թե ինչպես էին եկեղեցական իրավական նորմերը զուգորդվում մահմեդական իրավական նորմերին, ինչ ընդհանրություններ և տարբերություններ կային, դրանցից որքանով էին կարողանում օգտվել հայ հոգևորականները: Օրինակ, կալվածքներին վակֆային իրավունքով տիրելու արտոնությունից հաջողությամբ կարողանում էին օգտվել հայ կաթողիկոսները և օգտագործելով նախկին կալվածագրերը, կարողանում էին վանքի տնօրինության ներքո պահել մի քանի գյուղեր՝ իրենց ամբողջ ունեցվածքով: Իսկ ջիզյա և այլ հարկեր վճարելու պարտավորությունը երբեմն թեթևացնում կամ չրջանցում էին, ինչպես տեղի ունեցավ Նադիր շահի 1735թ. հրամանագրով: Համաձայն այդ հրամանագրի Երևանի խանության թվով 17 վանքեր բոլոր տեսակի հարկերի դիմաց սահմանված չափով որոշակի գումար էին վճարում և ազատվում հարկային այլ պարտավորություններից[52]:

Հարկատեսակների թվարկումը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել նաև Երևանի խանությունում գործող հարկային

[50] **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, վավ. 35, պարսկերենը և բնագիրը՝ էջ 309-311, հայերեն թարգմանությունը՝ էջ 72-73:

[51] Նույն տեղում, վավ. 37, պարսկերենը և բնագիրը՝ էջ 314-316, հայերեն թարգմանությունը՝ էջ 75-76:

[52] Նույն տեղում, վավ. 9, էջ 35-38:



համակարգը, հասկանալ, թե ինչպիսի հարկեր էր գանձվում բնակչությունից, կրոնական հաստատություններից, ինչ հանգամանքներում կարող էին փոփոխվել հարկաչափերը:

Շահական հրովարտակներում արժեքավոր տեղեկություններ կան նաև Երևանի խանությունում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների, Էջմիածնի կաթողիկոսների և շահերի հարաբերությունների և այլ կարևոր դեպքերի վերաբերյալ: Աշխատանքի մյուս հատվածներում առավել մանրամասն կքննենք դիտարկվող ժամանակաշրջանի Երևանի խանության պատմությանն առնչվող շահական հրովարտակները և դրանց հաղորդած տեղեկությունները այլ աղբյուրների տեղեկությունների հետ համադրությամբ:

**Խանական հրամանագրեր**: Նադիր շահի մահվանից հետո Իրանում երկար ժամանակ գոյություն չուներ ուժեղ կենտրոնացված իշխանություն: Շահական գահին տիրելու համար պայքարի մեջ մտան տարբեր խաներ: Իբրահիմ շահի հրովարտակներից հետո մենք տևական պատմական ժամանակահատված՝ 1749-1795թթ., չենք հանդիպում Էջմիածնի վանքին և Երևանի խանությանը վերաբերվող շահական հրամանագրի[53]: Էջմիածնի վանքին և Երևանի խանությանը վերաբերվող հրովարտակներ հրապարակում էին ինչպես Երևանի Հասան Ալի, Հուսեյն Ալի, Ղուլամ Ալի, Մուհամմադ խաները, այնպես էլ նրա նկատմամբ հավակնություններ հանդես բերող և նրա հարևան իրանական տարածքներում ուժեղացած Ազատ խանը, Ֆաթհալի խանն ու Քերիմ խանը:

Մինչ այժմ ճշգրտված չէր Երևանի խանությունում դիտարկվող ժամանակահատվածում իշխած խաների ցանկն ու ժամանա-

[53] XVIII դարի II կեսում Իրանում շահ չկար և պայքար էր ընթանում շահական գահի համար: Ուստի Էջմիածնին վերաբերվող առաջին շահական հրամանագիրը Աղա Մուհամմադ շահի հիջրայի 1210 թվի՝ առաջին ամսի (1795թ. սեպտեմբերի 15 - հոկտեմբերի 14) հրամանագիրն է Երևանի Մուհամմադ խանի անունով, որին հայտնվում է, որ Ղուկաս կաթողիկոսը շահին նվիրված ու նրա կողմից հարգված անձանցից է, ուստի անհրաժեշտ է նրան պատվել ու ամեն կարգի աջակցություն ցուցաբերել: Տե՛ս Ք. Կոստիկյան, Հրովարտակներ, պրակ չորրորդ, վավ. 54:

կագրությունը: Այս հարցը կարիք ուներ խորքային ուսումնասիրման, քանի որ չկար Երևանում իշխած խաների ամբողջական ցանկը և հստակ ժամանակագրությունը: Հ. Փափազյանի, Վ. Գրիգորյանի և այլ հեղինակների մոտ նշված ցանկերում առկա են մի շարք ժամանակագրական և այլ անճշտություններ: Աշխատության մեջ վերոհիշյալ պարսկերեն վավերագրերի տվյալների, խանական հրամանագրերի և կնիքների քննությամբ հնարավոր եղավ ճշգրտել ԺԸ. դարի երկրորդ կեսում Երևանում իշխած խաների ցանկը՝ հստակ ժամանակագրությամբ:

Երևանի խանությունը, Իրանում ուժեղ կենտրոնացված իշխանության բացակայությամբ պայմանավորված, կիսանկախ էր, իսկ տեղի կառավարիչ խաները համեմատաբար անկախ էին իրենց ներքին քաղաքականությունում: Հետևաբար Երևանի խանությունում առկա տարբեր խնդիրների համար, եթե նախկինում Էջմիածնի կաթողիկոսները դիմում էին շահին, այժմ դիմում էին Երևանի խանին կամ Երևանի խանությունն իր ազդեցության տակ առած իրանական խանին: Այդ իսկ պատճառով ժամանակի շատ իրադարձությունների վերաբերյալ տեղեկություններ առկա են խանական հրովարտակներում:

Սկզբնական շրջանում Երևանի խանության նկատմամբ իր գերիշխանությունը հաստատեց Ատրպատականի Ազատ խանը: Վերջինս մի քանի տարի իշխեց խանությունում և մի շարք հրովարտակներ հրապարակեց Երևանի հայ բնակչությանը և հոգևորականությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Ազատ խանի մեր կողմից ուսումնասիրված պարսկերեն հրովարտակները Էջմիածնի վանքի կալվածքների, հարկային իրավունքների, Երևանում կառավարիչ նշանակելու և այլ կարևոր անցուդարձերի վերաբերյալ են: Դրանցից մի քանիսով խանը հաստատում է նախկինում վանքին տրված արտոնությունները, նշում, թե դրանք վանքի որ կալվածքներին են վերաբերվում՝ հնարավորություն տալով պարզելու, թե Ազատ խանի տիրապետության օրոք ինչ կալվածքներ է ունեցել վանքը և ինչ իրավունք-



ներ է կիրառել դրանց նկատմամբ[54]: Հրովարտակներից մեկով Ազատ խանը հաստատում է Էջմիածնի վանքի իրավունքը Կարբի գետից դեպի Էջմիածին բերված ջրանցքի ջրի նկատմամբ[55]: Հրովարտակը գրվել է ի պատասխան Ալեքսանդր կաթողիկոսի խնդրագրի: Հրովարտակին կից ներկայացված են ջրանցքի ջրի բաշխման պատմությունը, դրա հետ առնչություն ունեցող անձանց, այդ թվում նաև Կարբի գյուղի մելիք Մելիք Աֆթանդիլի, նախկին միրաբների վկայությունները: Բոլոր վկայությունների վերջում դրված են դրանց հեղինակների կնիքները: Դա կարևոր է ժամանակաշրջանում սեփականության իրավունքի ապացուցման և հաստատման իրավական գործընթացների կազմակերպման և իրականացման ձևերը քննելու և հասկանալու տեսանկյունից: Հրովարտակի բովանդակությունից իմանում ենք, որ Վաղարշապատում բնակչությունը բրդի և բամբակի գտմամբ է զբաղվել[56] և ջրանցքը, որի ջուրն օգտագործվել է այդ աշխատանքների համար, կառուցվել է շահ Աբբաս Բ-ի օրոք[57]: Տեղեկանում ենք նաև, որ Կարբի գյուղն այդ ժամանակ շեն գյուղ է եղել և ունեցել է հայ մելիք: Հրովարտակում նշվում է նաև, որ այդ ջրանցքի ջրով ոռոգվել են նաև մահմեդականների գյուղերը:

Ազատ խանի մի քանի հրամանագրեր ուղղված են Երևանի բեկլարբեկ Խալիլ խանին և այլ պաշտոնյաների, որոնցով նա կարգադրում է հոգ տանել Էջմիածնի վանքի հոգևորականների մասին և նեղություն չտալ վանքին[58]: Այս հրովարտակների ուսումնասիրումը հնարավորություն է տալիս հասկանալ Էջմիածնի կաթողիկոսների ու Խալիլ խանի հարաբերությունները, պարզել ովքեր էին խանության ազդեցիկ հայ մելիքները, ինչ հարաբերություններ ունեին Ազատ խանի հետ:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերում կարևոր տեղ են զբաղեցնում մահմեդական տի-

---

[54] Նույն տեղում, վավ. 38, 40, 41:
[55] Նույն տեղում, վավ. 46:
[56] Նույն տեղում, էջ 87:
[57] Նույն տեղում, էջ 84:
[58] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1323, 1326:

րակալների կողմից Էջմիածնի կաթողիկոսների իրավունքները հաստատող վավերագրերը: Խնդրո առարկա ժամանակաշրջանում նման հրովարտակներ են հրապարակել Երևանի Հուսեյն Ալի խանը, Իրանի գահին հավակնող Ազատ խանը, Քերիմ խանը: Մասնավորապես, Ազատ խանը 1753թ. հրապարակված իր հրովարտակով հաստատել է Ալեքսանդր կաթողիկոսի իրավունքները[59]:

Այդ հրովարտակն էականորեն տարբերվում է Հուսեյն Ալի խանի և Քերիմ խանի կողմից հրապարակված այն հրովարտակներից, որոնցով վերջիններս հաստատել են Սիմեոն Երևանցու կաթողիկոսական իրավունքերը: 1763թ. հրապարակված այդ հրովարտակներում բացի Սիմեոն Երևանցու կաթողիկոսական իրավունքներից, թվարկվում և հաստատվում են նաև կաթողիկոսի և Հայոց Եկեղեցու իրավունքները-տասնչորս կետերով[60]:

Հուսեյն Ալի խանը 1780թ. հրապարակած հրովարտակով հաստատում է նաև Ղուկաս Կարնեցու կաթողիկոսական իրավունքները[61]:

Երևանի խանության վարչական բաժանման, գյուղերի անունների, խանական կալվածքների և այլ հարցերի վերաբերյալ կարևոր տեղեկություններ ենք գտնում Մուհամմադ խանի կալվածքները նկարագրող վավերագրից[62]: Այս վավերագրից օգտվել է Վ. Գրիգորյանն իր աշխատությունում[63]: Այն վերնագրված է صورت املاک مختص محمد قاجار ایروانی – Երևանի Մուհամմադ Ղաջարին նախատեսված մուլքերի ցանկը[64]: Այնուհետև նշված է թե որ նահիէի՝ մահալի, որ գյուղում քանի դանգ մուլք, «քարվանսարա», «դուքյան», այգի է պատկանում Մուհամմադ խանին:

[59] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1327:
[60] Նույն տեղում, վավ. 1353: Տե՛ս հավելված, նկար 3, 4, նաև Ք. Կոստիկյան, Հրովարտակներ, պրակ չորրորդ, վավ. 49:
[61] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 85բ-87ա:
[62] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1և, վավ. 861: Տե՛ս հավելված, նկար 5, 6:
[63] **Վ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 33:
[64] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1և, վավ. 861:



Վրաց Հերակլ Բ արքայի հրովարտակներից մի քանիսը պաշտպանում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն անհարկի հարկապահանջությունից ու հավելագանձումներից:

ԺԸ. դարի երկրորդ կեսին Այսրկովկասում Իրանի ազդեցության նվազմամբ պայմանավորված միջֆեոդալական մարտերին զուգահեռ ռուսական և օսմանյան իշխանություններն ակտիվ դիվանագիտական գործունեություն էին ծավալում իրենց ազդեցությունը տարածաշրջանում տարածելու ուղղությամբ: Այդ ժամանակաշրջանում Երևանի խաները հիմնականում անկախ էին հարևան խանությունների, փաշայությունների, վրացական թագավորությունների, Ռուսական և Օսմանյան կայսրությունների հետ հարաբերություններում: Ուստի Երևանի խաները, իրենց մասնակցությունն ունենալով տարածաշրջանային քաղաքական իրադարձություններին, ակտիվ նամակագրական կապ ունեին տարածաշրջանի տիրակալների հետ: Մատենադարանի արաբատառ № 233 ձեռագիրը բաղկացած է այս նամակների և խաների մի շարք հրովարտակների պատճեններից:

Այս վավերագրական նյութերի քննությամբ կարողանում ենք նորովի լուսաբանել-Երևանի խանության և տարածաշրջանի ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության մի շարք հարցեր: Հաջի Մեջլումի եղբոր որդուն՝ Հաջի Իբրահիմ բեկին պալատական արարողապետ՝ իշիք աղասի, նշանակելու վերաբերյալ վավերագրում նշվում են վերջինիս ենթակա պաշտոնյաները, ինչի շնորհիվ իմանում ենք, թե խանի դիվանում ինչ պաշտոնյաներ կային[65]: Դիվանի կառուցվածքի վերաբերյալ առկա տեղեկությունը հարստացնում է ղազիի՝ դատավորի նշանակելու վերաբերյալ հրովարտակը[66]: Հաջի Մուհամադ դերվիշին դերվիշների առաջնորդ նշանակելու վերաբերյալ հրովարտակից տեղեկանում ենք, որ խանությունում գործել են մեծ թվով դերվիշներ ու դերվիշական միաբանություն[67]:

[65] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 166բ-167ա:
[66] Նույն տեղում, էջ 118բ-119ա:
[67] Նույն տեղում, էջ 106ա-106բ:

Նամականու մեջ ընդգրկված երկու հրամանագրերը Երևանի Մուհամմադ խանի կողմից Միրզա-Աղա Սիպկիին և Ահմադ-Աղա Ջիլանիին աղայություն շնորհելու կապակցությամբ, հրատարակվել են Հ. Փափազյանի կողմից[68]: Այդ հրամանագրերով Երևանի խանը Աղա Սիպկիին և Ահմադ-Աղա Ջիլանիին հաստատում է քրդական Սիպկի և Ջիլան աշիրաթների աղաների պաշտոններում: Այս հրամանագրերը կարևոր են Երևանի խանության խնդրո առարկա ժամանակաշրջանի ժողովրդագրության, Երևանի խանի և խանությունում բնակվող քուրդ բնակչության հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից:

Մատենադարանի արաբատառ N 233 ձեռագրի նամակները, ըստ դրանց հասցեատերերի, կարելի է բաժանել մի քանի խմբերի. Ա. Քարթլի-Կախեթի թագավորության արքունիք ուղարկված, Բ. օսմանյան իշխանություններին ուղարկված, Գ. Այսրկովկասի և Իրանի տարբեր խանություններ ուղարկված, Դ. ռուսական և Ե. իրանական իշխանություններին ուղարկված նամակներ:

1759 թ. Երևանի խանությունը դարձավ վրաց Հերակլ Բ արքայի հարկատուն, որից հետո վերջինիս և Երևանի խաների միջև ակտիվ նամակագրական կապ հաստատվեց: Հարկատվությունը կանոնավոր բնույթ չէր կրում և երբեմն խնդիրներ էր առաջացնում կողմերի միջև, ինչը հանգեցնում էր ռազմական բախման[69]: Վրացական արքունիք ուղարկված նամակներն արժեքավոր տվյալներ են բովանդակում Երևանի խաների և Հերակլ Բ-ի փոխհարաբերությունների, հարկատվության, կողմերի միջև առկա խնդիրների և այլ կարևոր հարցերի քննության համար:

Վրացական արքունիք ուղարկված նամակների հասցեատերերը մի քանիսն են՝ Հերակլ Բ արքան, արքայազն Գեորգին, Դարեջան թագուհին, ով նամակներում հայտնի է դադե փալ – دده فال պարսկերեն անվանումով: Այս նամակների շարքում շատ են ցավակցական, շնորհավորական և նման արարողակարգային բնույթ կրող նամակները: Այդպիսի նամակների համար առիթ են հանդիսացել արքայազն Լևոնի մահը, Երևանի Հուսեյն Ալի խանի մահը, Հերակլ Բ-ի ռազմական հաջողությունները և այլ դեպքեր: Նամակներում քիչ տեղ է հատկացված կողմերի հարաբերությունների, ժամանակի կարևոր իրադարձությունների նկարագրությանը[70]: Նամակների հեղինակները գերադասել են կարևոր հարցերը, որոնք պետք է գաղտնի մնային, չշարադրել նամակներում, այլ նամակատարի միջոցով հաղորդել հասցեատիրոջը, որի մասին հաճախ նշվում է նամակում:

Նամակների մի մասը վերաբերվում է Երևանի խաների վրաց արքունիքին տրվող հարկին: Այդ նամակները կարևոր տեղեկություն են պարունակում նաև Երևանի խաների վասալական պարտավորությունները կատարելու, դրանցից խուսափելու մեթոդների[71], Երևանի խաների և վրաց արքունի գործիչների միջև տեղի ունեցող դրամական գործարքներում ընդունված դրամական միավորի[72], Երևանի խանությունում տարածված գյուղատնտեսական արտադրատեսակների[73] և այլ կարևոր երևույթների ու իրադարձությունների վերաբերյալ: Նամակներում հեղինակները նկարագրում էին նաև իրենց արտաքին ձեռնարկումները, ինչի շնորհիվ արժեքավոր տեղեկություններ ենք ստանում խնդրո առարկա ժամանակաշրջանում տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ[74]: Վրացական արքունիք ուղարկված նամակներն ընդհանուր առմամբ կարևոր տեղեկություններ են պարունակում Երևանի խանության և Քարթլի-Կախեթի թագավորության փոխհարաբերությունների, տարածաշրջանային իրադարձությունների վերաբերյալ:

---

68 **Հ. Փափազյան**, Երևանի Մոհամմադ խան Ղաջարի՝ Միրզա-Աղա Սիպկիին և Ահմադ-Աղա Ջիլանիին շնորհած աղայության հրամանագրերը (XVIIIդ.), էջ 272-277:

69 Այս մասին առավել մանրամասն տես աշխատության համապատասխան հատվածներում:

70 Երբեմն մի քանի տող, կամ մի քանի բառ:

71 Տե՛ս ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 121ա-121բ

72 Նույն տեղում, էջ 59ա-60ա, 38բ-41բ:

73 Երբեմն գումարի փոխարեն գյուղմթերք էին ուղարկում վրացական արքունիք: Տե՛ս ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 37բ-38բ:

74 Նույն տեղում, էջ 80բ-81բ, 110ա- 111ա:

Օսմանյան իշխանություններին ուղարկված նամակները կարելի է բաժանել երկու խմբի. Օսմանյան կայսրության արքունիք՝ Բարձր Դուռ ուղարկված նամակներ, փաշայություններ ուղարկված նամակներ: Օսմանյան իշխանությունների հետ նամակագրական կապը հատկապես ակտիվացավ Գեորգևսկյան պայմանագրին հաջորդող ժամանակահատվածում. օսմանյան իշխանությունները սկսեցին ակտիվ դիվանագիտական գործունեություն ծավալել Երևանի խաներին իրենց կողմը գրավելու և խանությունը Օսմանյան կայսրության ենթակա տարածքի վերածելու ուղղությամբ: Երևանի խաների գրած նամակներն այս առումով կարևոր տեղեկություններ են հաղորդում ժամանակի միջազգային հարաբերությունների, խաների և օսմանյան իշխանությունների հարաբերությունների և կարևոր այլ հարցերի վերաբերյալ: Այս վավերագրերի հաղորդած տեղեկությունների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում առավել խորքային քննության ենթարկել ժամանակաշրջանի շատ իրադարձություններ և նոր իրողություններ վեր հանել Օսմանյան կայսրության Այսրկովկասյան քաղաքականության, Երևանի խաների և օսմանյան իշխանությունների փոխհարաբերությունների վերաբերյալ[75]: Նամակներում անդրադարձ է կատարվում նաև հարևան խանությունների, վրացական թագավորության և Ռուսաստանի հետ Երևանի խանության և Օսմանյան կայսրության հարաբերություններին[76]:

Երևանի Հուսեյն Ալի և Ղուլամ Ալի խաներն ակտիվ նամակագրական կապ են ունեցել Ախալցխայի Սուլեյման փաշայի հետ: Վերջինս կարևոր դերակատարում ուներ այսրկովկասյան քաղաքական կյանքում և հաճախ միջնորդի դեր էր խաղում Երևանի խաների և Հերակլ Բ թագավորի, Երևանի խաների և Օսմանյան կայսրության միջև[77]: Սուլեյման փաշային ուղարկված նամակներից մեկում Երևանի Ղուլամ Ալի խանը մանրամասնորեն նկարագրում է 1780-ականների սկզբին Այսրկովկասում ըն-

[75] Նույն տեղում, էջ 132ա-132բ, 196բ-197բ, 197բ-199ա և այլն:
[76] Նույն տեղում, էջ 112բ-113ա, 113ա-115բ:
[77] Նույն տեղում, էջ 145բ-147բ, 164ա-165բ, 106բ-108բ:



թացող քաղաքական գործընթացները, տարածաշրջանի խաների միջև տեղի ունեցող բանակցությունները, Իրանում գահի համար մղվող պայքարը և այդ իրադրությունում Օսմանյան կայսրության դիրքորոշումը[78]:

Նամակների մի մասը գրվել է ի պատասխան օսմանյան փաշաներից և Բարձր Դռնից եկած նամակների և դրանցում տեղեկություններ կան նաև խաներին գրված նամակների բովանդակության վերաբերյալ: Բարձր Դուռ ուղարկված նամակներից մի քանիսը շնորհակալական նամակներ են օսմանյան իշխանություններից ուղարկված նվերների և գումարի համար: Այդ նամակներում նշված է, թե ինչ նվերներ և որքան գումար են օսմանյան իշխանություններն ուղարկել[79]: Նամակներում խաները, շնորհակալություն հայտնելով նվերների և գումարի համար, նշել են, թե ինչպիսի հարաբերություններ են պատրաստվում ունենալ Վրաստանի և ռուսական իշխանությունների հետ: Այս տեղեկությունը կարևոր է նաև ռուս-թուրք-վրացական հարաբերությունները, ինչպես նաև դրա համատեքստում Երևանի խանության դերակատարումը քննելու տեսանկյունից:

Ժողովածուի մեջ ներկայացված նամականին կարևոր տեղեկություն է հաղորդում նաև Իրանի Ալի Մարդան խանի և Երևանի խաների հարաբերությունների վերաբերյալ: Թեմայի վերաբերյալ կատարված որևէ ուսումնասիրությունում հիշատակված չէ Երևանի խաների և Ալի Մարդան խանի միջև հաստատված կապի մասին: Ժողովածուի մեջ ներկայացված են Ղուլամ Ալի խանի Ալի Մարդան խանին ուղղված նամակները[80]: Դրանցից երկուսը Ալի Մարդան խանի հրամանների՝ ֆարմանների վերաբերյալ են[81]: Ալի Մարդան խանի գործունեության և Իրանում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկու-

[78] Նույն տեղում, էջ 106բ-108բ:
[79] Նույն տեղում, էջ 74ա-76բ:
[80] Նույն տեղում, էջ 165բ-166բ.
[81] Նույն տեղում, էջ 156ա-157ա, 169ա-169բ: Ֆարմանը Նադիր շահի ժամանակաշրջանից սկսած պաշտոնական գրություն էր համարվում, Տե՛ս سرهنگ دکتر جهانگیر قائم مقامی، بر شناخت اسناد تاریخی، تهران1350، ص.46.

թյուն է հաղորդում հատկապես վրաց Հերակլ Բ արքային Ղուլամ Ալի խանի կողմից ուղարկված նամակը[82]:

1780-ականներին Այսրկովկասում ռուսական իշխանություննների վարած քաղաքականության, Երևանի Հուսեյն Ալի խանի հետ նրանց հարաբերությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ռուսական իշխանություններին հասցեագրված նամակները[83]: Այդ նամակների մի մասը թերևս պատմագրությանը մինչ այս անհայտ և դեռևս չուսումնասիրված վավերագրեր են, որոնց շնորհիվ նոր արժեքավոր տեղեկություններ ենք ստանում խնդրո առարկա ժամանակաշրջանում Երևանի խանության շուրջ ընթացող քաղաքական զարգացումների, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև ընթացող մրցակցության վերաբերյալ:

Առկա է նամակագրություն Խոյի Ահմադ, Ղարաբաղի Իբրահիմ, Նախիջևանի Քյալբալի խաների հետ, որոնք կարևոր տեղեկություններ են բովանդակում Երևանի խանության և այդ խանությունների փոխհարաբերությունների վերաբերյալ:

Պարսկական վավերագրերում հայկական բնակավայրերը, շրջաններն ու վանքերը առավելապես նշվում են օտար կամ օտարահունչ անուններով[84]:

Այսպիսով՝ Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ուսումնասիրման շնորհիվ կարևոր տեղեկություններ ենք ստանում Երևանի խանության և Այսրկովկասի տարածաշրջանի տվյալ ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հարցերի վերաբերյալ: Դրանց շնորհիվ հնարավոր է լինում խորքային հետազոտության ենթարկել և նորովի լուսաբանել Երևանի խանության քաղաքական պատմությունը, խանության վարչաքաղաքական ու հարկային համակարգը, նրա էթնոդավանական կառուցվածքին, Էջմիածնի վանական հողատիրությանը վերաբերվող կարևոր հարցեր: Խանական նամականին արժեքավոր և թերևս անփոխարինելի սկզբնաղբյուր է Երևանի խաների վարած արտաքին քաղաքականության ուսումնասիրման համար: Նամականու հետազոտման շնորհիվ հարուստ տեղեկություն ենք ստանում նաև տարածաշրջանում տվյալ շրջանում զարգացող քաղաքական անցուդարձի և ձևավորվող իրադրության վերաբերյալ:

Միաժամանակ նաև պարսկերեն վավերագրերը հարուստ տվյալներ են պարունակում ժամանակաշրջանի պարսկական գրագրությանը հատուկ ոճի, շահական և խանական կնիքների ու հրովարտակների կառուցվածքի վերաբերյալ:

[82] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, Է, էջ 169ա-169բ:

[83] Նույն տեղում, էջ էջ 192ա-192բ, 194բ-194բ:

[84] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Ք. Կոստիկյան**, Հայոց վանքերի անվանումները պարսկերեն վավերագրերում, **Ք. Կոստիկյան, Մ. Խեչո**, Մատենադարանի պարսկերեն շարիաթական նոտարական փաստաթղթերը (ԺԷ-ԺԸ դարեր), Երևան 2018, էջ 34, 38, **Հ. Փափազյան**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դար), Տեղեկագիր հ. 7-8, Երևան 1960, էջ 25, ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 106բ-108բ, 83բ-85ա և այլն:

## ԳԼՈՒԽ II.

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### 2.1. Երևանի խանության տարածքը և վարչական միավորները

Նադիր շահի օրոք (1736-1747թթ.) Երևանի բեկլարբեկությունից առանձնանում է Նախիջևանը և դառնում առանձին վարչական միավոր: Այս հիմքի վրա Նադիր շահի սպանությունից հետո Իրանում սկսված խառնակ ժամանակաշրջանում ձևավորվում են Երևանի ու Նախիջևանի խանությունները: Երևանի խանության համար պայքարի մեջ մտան տարբեր ուժեր և մի քանի տարվա ընթացքում խանությունում իշխանության գլուխ եկան մի քանի խաներ: 1749թ. որպես Երևանի խան է հիշատակվում Հուսեյն խանը[85]: Այնուհետև Ատրպատականի Ազատ խանի 1750թ. արշավանքի ժամանակ, որպես Երևանի խան է հիշատակվում Հասան Ալի խանը[86], որին նույն տարում փոխարինում է Աբդուլ խանը 1750-1752թթ.[87], Հասան Ալի խանը կրկին գալիս է իշխանության 1752թ.[88]: Սակայն շուտով նրան փոխարինում է Խալիլ խանը 1752-1755թթ.[89], ում 1755թ. հաջորդում է Հասան Ալի խան Ղաջարը[90]: Վերջինիս 1759թ. փոխարինում է իր եղբայր Հուսեյն Ալի խան Ղաջարը, ով իշխում է մինչև 1783թ.,[91] այնուհետև վերջինիս որդի Ղուլամ Ալի խան Ղաջարը՝ 1783-1784թթ.,[92] Մուհամմադ խան Ղաջարը՝ 1784-1805թթ.[93]:

Խանության սահմանները ԺԸ. դարի երկրորդ կեսին գրեթե անփոփոխ մնացին բացառությամբ Շորագյալի: Վերջինիս պատկանելության վերաբերյալ հակասական են ուսումնասիրողների հաղորդած տեղեկությունները: Վ. Գրիգորյանը, անդրադառնալով Շորագյալի պատկանելությանը, նշում է, որ Երևանի Հուսեյն Ալի խանի (1759-1783թթ) օրոք այն եղել է Երևանի կազմում և վրաց տիրապետության տակ է անցել Հերակլ Բ-ի 1779թ.-ի Երևան կատարած արշավանքից հետո[94]: Նախ Վ. Գրիգորյանի, ինչպես այլ ուսումնասիրողների մոտ՝ Հ. Փափազյան, Շահխաթունյանց, Ե. Շահազիզ և այլն[95], Հուսեյն Ալի խանի կառավարման տարիները տարբեր և սխալ են նշվում: Վերջինս կառավարել է 1759-1783թթ.[96]: Նշելով, որ Շորագյալը Երևանի կազմում է եղել Հուսեյն Ալի խանի օրոք, Վ. Գրիգորյանը հղում է կատարում գեներալ Ի. Լազարևի 1800թ. հոկտեմբերի 4-ին գրված նամակին ուղղված գեներալ Կ. Կնորրինգին,[97] իսկ Շորագյալի կրկին Հերակլ Բ-ի տիրապետության տակ անցնելու մասին տեղեկությունը հղվում է Լ. Մելիքսեթ-Բեկի մեզ արդեն հայտնի աշխատությանը: Պետք է նշել, որ Լազարևի նամակում չի նշվում, որ Շորագյալը Երևանի խանության կազմում է եղել Հուսեյն Ալի խանի օրոք: Նամակի հեղինակը նշում է, որ այն ժամանակավորապես շնորհվել է Հե-

---

[85] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 172:,

[86] Բարոն օ. Հակստհաուզենի ճանփորդության մի գլուխ, Կռունկ հայոց աշխարհին, Տփխիս 1862, էջ 278:

[87] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ. , էջ 136-137

[88] Լ. Մելիքսեթ-Բեկ, էջ 142:,

[89] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1326:

[90] Նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 427:

[91] Նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 427:

[92] **А. Иоаннисян**, Россия и Армянское освободотельное движение в 80-х годах 18 столетияе. Ереван 1947, с. 266-267.

[93] Հայկական սովետական հանրագիտարան, Հ. Գ, Երևան 1977, էջ 571:

[94] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 32:

[95] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատոր Գ, Երևան 1977, **Հ. Փափազյանի** Երևանի խանություն հոդվածը, էջ 571, **Ե. Շահազիզ**, Հին Երևանը, Երևան 1931, էջ 85, **Հ. Շահխաթունյանց**, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ.2 , Էջմիածին 1842, էջ 139:

[96] ՄՄ, Կաթողիկոսական դիվանի 1գ թղթապանակի, № 427 վավերագիրը Երևանի Հուսեյն Ալի խանի հրովարտակն է, որն արձակված է 1759թ. -ին: Սույն վավերագիրն փաստում է, որ Հուսեյն Ալի խանն իշխել է սկսած 1759թ . -ից:

[97] **АКТЫ** собранные кавказскую археографическою комиссиею, т. 1, Тифлис 1866, с. 158

րակլ Բ-ի կողմից, ապա ետ վերցվել[98]: Ընդ որում չի բացատրվում, որ Հերակլ Բ-ը, Շորագյալը նվիրել է Երևանի խանությանը Երևանի Հասան Ալի խանի օրոք (1755-1759թթ.) կամ դրանից առաջ: Ինչ վերաբերվում է Շորագյալի 1779թ. վրաց թագավորի Երևան իրականացված արշավանքի ժամանակ վրաց տիրապետության տակ անցնելու տեսակետին, ապա այս տեսակետը նույնպես արժանահավատ չէ: Ժամանակակից սկզբնաղբյուրներում՝ Օման Խերխեուլիձե, Դավիթ Բագրատիոն և այլ[99] հեղինակները, անդրադառնալով այդ արշավանքին, մանրամասնորեն ներկայացնում են այն՝ նշելով, որ Հերակլ Բ-ը Երևանի խանին պատժելու համար ութ հայկական գյուղերի բնակիչների տեղափոխեց Քարթլի-Կախեթ: Սակայն մեզ հասանելի ոչ մի սկզբնաղբյուրում արժանահավատ հիշատակություն չկա այն մասին, որ վերոնշյալ արշավանքի ժամանակ տարածքներ ևս խլվեցին Երևանի խանից: Արշավանքների հետևանքների քննման համար արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հուսեյն Ալի խանի Ախալցխայի Սուլեյման փաշային գրած նամակը[100]:

Նամակում Հուսեյն Ալի խանը հայտնում է, որ դիմել է Հերակլ Բ-ին, որպեսզի ետ վերադարձնի Երևանից գաղթեցրած բնակչությանը և խնդրում է Սուլեյման փաշային, որպեսզի վերջինս միջնորդի Հերակլ Բ-ի մոտ բնակչությանը ետ ուղարկելու համար[101]: Այս նամակում ևս տեղեկություն չի հաղորդվում Հերակլ Բ-ի կողմից որևէ տարածքի նվաճման վերաբերյալ:

Ն. Դուբրովինն իր աշխատությունում նշում է, որ 1795թ.-ին Աղա Մուհամմադ խանը Քարթլի-Կախեթի թագավորությունից հեռանալուց հետո Փամբակը, Ղազախը և Բորչալուն, որոնք պատկանում էին Հերակլ Բ-ին, հանձնում է Երևանի Մուհամմադ խանին (1784-1803թթ.)[102]: Կարծում ենք հեղինակի կողմից Շորագյալը չի նշվել, քանի որ այն մինչ այդ Երևանի խանության

98 Նույն տեղում, էջ158.
99 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ. , էջ 179, էջ 200:
100 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 145բ-147բ: Տե՛ս հավելված, նկար 7, 8, 9, 10, 11:
101 Նույն տեղում, էջ 147ա:
102 **Н. Дубровин**, История войны и владычества русских на Кавказе, т. 3, Санктпетербург 1886, с. 65.



տարածքում է եղել: Շորագյալը 1813թ. Գյուլիստանի պայմանագրով անցավ Ռուսաստանին: Ի. Շոպենը, թերևս այս հանգամանքով էլ պայմանավորված, խանության սահմանները նկարագրել է առանց Շորագյալը դրա մեջ նկարագրելու:

Այսպիսով, սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների քննության և վերլուծության արդյունքներով պետք է պնդել, որ գոյություն չունի որևէ հիմնավոր փաստարկ, համաձայն որի Շորագյալը ԺԸ. դարի երկրորդ կեսին Երևանի խանության կազմում չի եղել:

Խանությունը ընդգրկում էր 7500 մղոն$^2$ տարածք[103]: Դրա սահմանները արևմուտքում Արփաչայով ձգվում էր Ղըզլ-Քիլիսա գյուղի մոտից հյուսիսից հարավ մինչև Ախուրյան գետի ստորին հոսանքի վրա գտնվող Հաջի-Բայրամլու գյուղը: Այստեղից գետն անցնելով՝ ուղղվում արևմուտք և հասնում մինչև Կարբի-դաղ լեռնաշղթան, որտեղ սահմանն անցնում էր Արաքսը և նույն լեռնաշղթայով ուղղվում դեպի հարավ-արևմուտք մինչև Քյոռ-օղլի դաղը, հետո թեքվում էր հարավ-արևելք՝ քիչ հարավային թեքումով, Հայկական պարի ջրբաժան բարձրություններով մինչև Փոքր Մասիսը, այնուհետև շարունակվում դեպի հարավ-արևմուտք, մինչև Արաքս: Այն հատելով սահմանն անցնում էր Նախիջևանի և Շարուրի դաշտերն անջատող լեռնաշղթայով, ապա Վարդենիսի լեռնաշղթայով, Զանգեզուրի լեռների հյուսիսային հատվածով ու Արևելյան Սևանի լեռներով, շարունակվելով Փամբակի լեռների և Արագածի հյուսիսային լանջերը Ախուրյանի հետ միացնող գծով և Բազարչիկ գյուղի վրայից անցնելով՝ գնում հասնում էր Ղըզլ-Քիլիսա գյուղը[104]:

Մեզ հասանելի սկզբնաղբյուրներում Երևանի խանության ԺԸ դարի երկրորդ կեսի վարչական բաժանմանը վերաբերվող տեղեկություններ չկան: Սակայն առկա մի շարք սկզբնաղբյուրների ուսումնասիրումը, որոնք վերաբերվում են 1740-ականներին, 19-րդ դարի սկզբին Երևանի խանության վարչական բաժանմանը, նույնպես կարևոր են այդ հարցի ուսումնասիրման համար՝ հաշվի

103 Encyclopedia iranica, The Persian khanate of Erevan, http://www.iranicaonline.org/articles/erevan-1#ii
104 И. Шопен, նշվ. աշխ. , էջ 351-353.

առնելով նաև այն հանգամանքը, որ դժվար թե խանությունում կարճ ժամանակահատվածում էական վարչական փոփոխություններ տեղի ունեցած լինեն: Նախ պետք է նշել, որ Երևանի խանության վարչական բաժանման հիմքում ընկած էր ոռոգման համակարգը, որը կարևոր նշանակություն ուներ գյուղատնտեսության համար[105]: Ըստ Աբրահամ Կրետացու 1740-ականներին Երևանի խանությունը բաժանված էր ինը վարչական շրջանների՝ մահալների: Դրանք էին Կարբի, Ղըրխբուլաղի, Զորագյալի, Իկտիրի, Ծաղկաձորի, Գեղարքունիքի, Ապարանի և Շիրակավանի[106]: Ըստ Թ. Հակոբյանի 1779թ.-ից սկսած, երբ Զորագյալն անցավ Քարթլի-Կախեթի թագավորությանը, Երևանի մահալների թիվը դարձավ 8: Հեղինակը նշում է, որ 18-րդ դարի վերջում Երևանը բաժանվում է նոր վարչական շրջանների և մահալների թիվը հասնում է 12-ի: Իսկ ըստ Ի. Շոպենի, ով իր հետազոտական աշխատանքներն իրականացրել է 1829-1831թթ, այսինքն Երևանի Ռուսաստանին միանալուց անմիջապես հետո, մահալների թիվը եղել է 15-ը: Թ. Հակոբյանը նշում է, որ խանությունը 15 մահալների է բաժանվել 1805-1828թթ.-ի ընթացքում[107]: Համաձայն վերջինիս և Ի. Շոպենի հաղորդման, Երևանի խանության մահալները հետևյալներն էին. 1. Ղըրխբուլաղի (Աբովյանի), 2. Զանգիբասարի, 3. Գառնի-բասարի (Արտաշատի), 4. Վեդի-բասարի (Արարատի), 5. Շարուրի, 6. Սուրմալուի, 7. Դարաքենդ-փարչենիսի, 8. Սա՛աթլիի, 9. Թալինի, 10. Սեյիդլի-Ախսախլիի, 11. Սարդարաբադի, 12. Կարբիբասար (Աշտարակի), 13. Ապարանի, 14. Դարաչիչակի (Ծաղկաձորի), 15. Գյոկչայի (Գեղարքունիքի)[108]: Ինչպես տեսանք վերոնշյալ հեղինակները մահալները թվելիս չեն նշում Զորագյալը: Մահալների վերաբերյալ այլ տեղեկություններ է հայտնում անգլիացի Սըր Ռոբերթ Քեր Փորթըրը, ով 1817-1820թթ.ին ճամփորդելով Հարավային Կովկասում, Իրանում, Միջագետքում և Թուրքիայում, եղել է նաև Երևանում: Ըստ նրա՝ խա-

[105] Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 33:

[106] Աբրահամ Կաթողիկոս Կրետացիոյ, Պատմութիւն Անցիցն և Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ 1870, էջ 61-62:

[107] Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1500-1800), Երևան 1971, էջ 145:

[108] И. Шопен, նշվ. աշխ. , էջ 444-446.



նության մահալները, ներառյալ Զորագյալի մահալը, եղել են 15-ը[109]: Վերջինիս և Ի. Շոպենի հաղորդած տեղեկությունների միջև առկա հակասությունը քննելիս, մենք հակված ենք ընդունել Թ. Հակոբյանի տեսակետը՝ համաձայն որի առավել արժանահավատ է Ի. Շոպենի տեղեկությունը, քանի որ Սըր Ռոբերթ Քեր Փորթըրի հաղորդած տեղեկություններում մի շարք անճշտություններ ևս կան[110]:

Ավարտելով Երևանի խանության վարչական բաժանման հարցի քննությունը, հարկ ենք համարում նշել, որ Մուհամմադ խանի օրոք (1784-1804թթ.) Ղըրխբուլաղի մահալի մեջ միավորված է եղել նաև Զանգի-բասարի մահալը: Այս հանգամանքը հաստատվում է Մուհամմադ խանին պատկանող մուլքերի մի ցուցակի ուսումնասիրությամբ, որտեղ Զանգի-բասարի գյուղերը նշված են որպես Ղըրխբուլաղի գյուղեր[111]: Երևանը 18-րդ դարում և դրանից առաջ առանձին վարչական միավոր է եղել և չի մտել որևէ մահալի մեջ[112]: Այն բերդաքաղաք էր և չի կարելի համարել քաղաք իր առանձին բերդով[113]: Սկզբնաղբյուրներում առկա են բազմաթիվ հիշատակումներ բերդի կառուցվածքի և տեղադրության վերաբերյալ: Դրա վերաբերյալ հաղորդումներն ուսումնասիրել է Կ. Ղաֆադարյանը, ով բերդի տեղանքի մասին հաղորդում է հետևյալը. *«Այս բերդը Հրազդանի բարձրադիր գետափին գրավում էր մոտ 18 հեկտար տարածություն, նրա հողակերտ հսկայական պատերն ու ահարկու աշտարակները դրված էին քարե հիմքերի վրա: Ներսում բացի բերդի բնակիչ պարսիկների տներից եղել են Սարդարի ապարանքն իր նշանավոր «շուշաբանդով», կանանոցը կամ հարեմը, երկու մզկիթ. մեկը հասարակաց, մյուսը՝ Սարդարի համար, ընդարձակ զորանոց և այլ շինություններ: Բերդն ուներ դեպի Հրազդանի ձորն իջնող գետնուղի, որ բերդի մոտ ճյուղավորված էր երկու մասի, մեկի մուտքը*

[109] Հ. Հակոբյան, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հատոր Զ, Երևան 1934, էջ 769:

[110] Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը(1801-1879), Երևան 1959, էջ 12:

[111] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 861: Տե՛ս հավելված, նկար 5,6:

[112] Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը( 1500-1800), էջ 146:

[113] Նույն տեղում, էջ 147:

*գտնվում էր բերդի ներսում, ազատ տարածության վրա, կամարակապ մեծ դռնով, իսկ մյուսինը՝ Սարդարի պալատում»*[114]: (Նույն էջի հիմամ մեջ հեղինակը նշում է հետևյալը. *«բերդի միջից դեպի Հրազդան գետն իջնող գետնուղին մենք ուսումնասիրել ենք 1933թ., երբ ջրանցքի համար հողային աշխատանքներ էին կատարվում բերդի տակ, նրա զառիթափ լանջին, այժմյան գինու գործարանի պատերի մոտակայքում դեպի կամուրջն իջնող հին խճուղու կողքին, բացվեց գետնուղին)»*[115]:

Երևանում ակտիվ շինարարական աշխատանքներ են իրականացվել Հուսեյն Ալի խանի օրոք: Վերջինս բերդն ամրացնելու համար հրավիրել է Խոյի տիրակալ Ահմադ խանի ճարտարապետ Միրզա Ջաֆարին[116]: Բերդում եղած պետական պաշտոնյաների և Երևանի խանի՝ սարդարի, վարչական ապարատի վերաբերյալ տեղեկություններ է հայտնում Ի. Շոպենը: Մահալների կառավարիչները նշանակվում էին սարդարի կողմից և կոչվում էին միրբոլուքներ: Հնարավոր էր, որ երկու, երեք և ավելի մահալների կառավարումը հանձնվեր մեկ միրբոլուքի[117]: Հայաբնակ մահալների կառավարիչ նշանակվում էր հայերից և սովորաբար կոչվում էր մելիք[118]:

Երևանի խանի դիվանը բաղկացած է եղել վեզիրից կամ գլխավոր նախարարից, և մի քանի միրզաներից, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հատուկ գործառույթը կառավարման մեջ: Դիվանը բաղկացած է եղել չորս բաժանմունքից՝ պալատի կամ սարդարի տան կառավարչությունից, զինվորական բաժանմունքից, ֆինանսական բաժանմունքից և կատարողական կամ ոստիկանական բաժանմունքից[119]: Ֆինանսական և ոստիկանական բաժանմունքները գրեթե ձուլված էին միմյանց: Պալատի բաժանմունքը ղեկավարել է կամ ինքը սարդարը կամ նրա վստահելի

[114] **Կ. Ղաֆադարյան,** Երևան, Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան 1975, էջ 98:

[115] Նույն տեղում, էջ 98:

[116] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 56ա:

[117] **Թ. Հակոբյան**, Երևանի պատմությունը 1801-1879թթ., էջ 13, **И. Шопен,** նշվ. աշխ., էջ 448.

[118] **Թ. Հակոբյան**, Երևանի պատմությունը 1801-1879թթ., էջ 13:

[119] Նույն տեղում, էջ 23, **И. Шопен,** նշվ. աշխ., էջ 451.



մարդկանցից մեկը: Խանի դիվանում գործել է նաև արարողապետի՝ իշիք աղասու պաշտոնը: Իշիք աղասուն էին ենթարկվում ջարչիները և յասավուլները[120]: Ռազմական բաժանմունքը վերջին սարդար Հուսեյնի (1807-1828թթ.) օրոք գլխավորել է նրա փոքր եղբայրը՝ Հասան խանը, ով համարվում էր խանության զինված ուժերի հրամանատարը: Երևանի խանության զինված ուժերի մեջ էին մտնում երկու զումարտակ սարբազներ՝ հետևակայիններ, հեծյալ զորամասեր, որոնց թիվը տարբեր ժամանակներում տարբեր է եղել, մի քանի դաշտային հրանոթներ, ֆալկոնետներ, որոնք տեղից տեղ էին տեղափոխվում ուղտերով: Խանի ռազմական ուժերի մեջ կար նաև բերդապաշտպան հրետանին, որն անմիջապես ենթարկվում էր քաղաքի պարետին: Զինվորական մասերի ցուցակները պահելու և անձնակազմը միշտ ստուգելու համար դիվանում գործում էր առանձին գրագիր՝ միրզա: Երևանի խանը[121] Խոյի Ահմադ խանի որդուն գրած նամակում տեղեկություն է հայտնում բերդում առկա զորատեսակների և դրանց քանակի մասին:

Համաձայն խանի հաղորդած տեղեկության բերդի կայազորում բացի սարբազներից առկա են եղել նաև 10 000 թուֆանկչիներ՝ հրացանակիրներ[122]: Կարծում ենք հրացանակիրների թիվը չափազանցված է, քանի որ Երևանի խանի ունեցած զորքի ընդհանուր թիվը տարբեր սկզբնաղբյուրներում շատ ավելի քիչ է նշվում: Բացի այդ, նամակը գրված է պերճախոս ոճով և դրանում առկա մնացած տեղեկությունները ևս չափազանցված են, ինչպես օրինակ բերդի զինամթերքի և սննդի պաշարների մասին տեղեկությունը, համաձայն որի այն կարող է վերոնշյալ քանակի զինվորականներին ապահովվել 10-12 տարի[123]: Հարկ ենք համարում նշել, որ խանի հրացանակիրների մեջ շատ էր հայերի քանակը: Դրա մասին է վկայում 1766թ.-ին Սիմեոն Երևանցու գրած

[120] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 166բ -167ա:

[121] Ցավոք սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները բավարար չեն ճշտելու թե որ խանի մասին է խոսքը: Ըստ էության նամակի հեղինակը Հուսեյն Ալի, Ղուլամ Ալի և Մուհամմադ խաներից մեկն է, քանի որ նամակը նրանց նամակների և հրովարտակների ժողովածուում է:

[122] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 109բ:

[123] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 109ա:

ճամակը, որտեղ հեղինակը, նկարագրելով տարածաշրջանի խաների միջև ծագած պատերազմը, նշում է որ Երևան ներխուժած լեզգիներից պաշտպանվելու համար կաթողիկոսը գնում է Երևան, բազում մարդիկ է վարձում, խանից և շատ հայ թուփանկչիներ է վերցնում և ետ գալիս Էջմիածին՝ այն պաշտպանելու[124]: Խանության զորքի մասին տեղեկություններ են հայտնում նաև ժամանակակից այլ սկզբնաղբյուրներ: 1769թ.-ին Հերակլը նկարագրելով Վրաստանին հարակից տարածքները, Երևանին անդրադառնալիս նշում է, որ այն ռազմի դաշտ կարող է դուրս բերել 2000 զինվոր,[125] ռուսական բանակի գնդապետ Ս. Բուռնաշևը, ով 1783թ.-ին Հերակլի արքունիքում էր, նշում է, որ Երևանի խանության զորքի թիվը 5000 էր, որից 1/3-ը հայեր էին[126]:

Դիվանում հատկապես կարևոր էր ֆինանսական և ոստիկանական (կատարողական) բաժանմունքը: Կատարողական բաժանմունքը զբաղվում էր ոչ միայն ֆինանսական հարցերով, այլ նաև ապահովում էր շարիաթի կամ մահմեդական հոգևոր դատարանի վճիռների կատարումը[127]: Հերակլի Բ-ի ազդեցության ներքո անցնելուց հետո ամենայն հավանականությամբ Երևանում մշտապես կամ ժամանակ առ ժամանակ գտնվել է նրա ներկայացուցիչը, որն ամենայն հավանականությամբ պաշտոնապես խանի դիվանի մեջ չէր, սակայն տեղյակ էր խանության ներքին կյանքին: Դրա մասին է փաստում Պապունա Օրբելիանին, ով նշում է, որ 1749թ. վրաց թագավորները Թիֆլիսից Երևանի խանի հետ Երևան են ուղարկում Ջազա Թարխնիշվիլուն, իբրև հյուրընկալի (մեյմանդար)[128]:

[124] **Գ. Աղանյանց**, Դիվան Հայոց պատմության, գիրք Գ. Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 494:

[125] Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, сборник документов, т. IV, с. 94.

[126] **С. Бурнашев**, Описание областей Азербайджанских в Персии и их политического состояния, Курск 1793, с. 17, **Վ. Գրիգորյան**, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800), էջ 38:

[127] **Թ. Հակոբյան**, Երևանի պատմությունը 1801-1879թթ., էջ 24, **И. Шопен**, նշվ. աշխ., էջ 452.

[128] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 130:



## 2.2. Երևանի խանության բնակչության էթնիկ կազմը

Խանության տարածքում բացի հայերից ապրում էին նաև պարսիկներ, թյուրքեր և այլ ժողովուրդների ոչ մեծաքանակ էթնոդավանական խմբեր: 18-րդ դարի առաջին քառորդի վերջում




Երևան քաղաքում բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էր հայությունը[129]: Երևան քաղաքի մահմեդականները հիմնականում ապրում էին քաղաքի արևելյան մասում, իսկ հայերն արևմտյան[130]: Առավել ստույգ հայերն ապրում էին Ծահար և

[129] **Մ. Կարապետյան**, Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800թթ. : Պատմաբանասիրական հանդես, Երևան 1987, № 3, էջ 3:

[130] **Линч**, Армения, путевые очерки и этюды, Х.Ф.Б. Линча, том I, русские провинции, типография М. Мартиросяна, Тифлис 1910, с. 276:

Կոնդ թաղամասերում: Խանության հայ բնակչության ութսուն տոկոսը բնակվում էր Ղըրխբուլաղի, Սուրմալուի, Սարդարաբադի և Կարբիբասարի մահալներում[131]:

Քաղաքի հայ բնակչության թվաքանակի մասին մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերաբերյալ հիշատակումներից մեկն առկա է Աբրահամ Երևանցու մոտ՝ օսմանյան բանակին Երևանի հայ բնակչության ցուցաբերած դիմադրության նկարագրությունում: 1724-թ.-ին Երևանը օսմանյան բանակի կողմից պաշարվելու ժամանակ քաղաքի դիմադրությունը լիովին կազմակերպեցին հայերը: Այդ ժամանակ օսմանյան բանակին դիմագրավելու համար Երևանի Ձորագյուղ թաղամասում հավաքվել էին 9443 սպառազեն ազգությամբ հայ տղամարդիկ[132]: Ըստ Աբրահամ Երևանցու այդ ժամանակ քաղաքում հաշվվում էր 28000 հայ[133]: Այնուհետև օսմանյան բանակի կողմից Երևանը գրավելուց հետո թուրքական իշխանությունները հաշվառում են անցկացնում, որի նպատակը ճշգրիտ հարկահավաքության կազմակերպումն էր: Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի «Երևանի» ֆոնդում պահվող վավերագրերը վերաբերում են այդ ժամանակ օսմանյան իշխանությունների *«Արարատյան երկրից»* ստացվող եկամուտներին: Վավերագրերից մի քանիսն ուսումնասիրվել են Հակոբ Փափազյանի կողմից[134]: Ըստ այդ փաստաթղթերի թուրքական իշխանությունները 1725թ.-ին առաջին հաշվառումն են իրականացնում Ղըրխբուլաղի, Կարբիի, Գառնիի, Ծարուրի, Սուրմալուի, Դարաչիչակի և Դարալագյազի շրջաններում և բաժանում 14317 ջիզյայի թերթիկ[135]:

[131] **G. Bournoutian, Eastern Armenia in the last decades of Persian rule, 1807-1828: a political and socioeconomic study of the khanate of Erevan on the eve of the Russian conquest**, California 1982, p. 61:

[132] **Աբրահամ Երևանցի**, Պատմություն պատերազմաց, 1721-1736, Երևան 1938, էջ 17:

[133] **Մ. Կարապետյան**, նշվ. աշխ. , էջ 95:

[134] **Հ. Փափազյան,** Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը: Պատմաբանասիրական հանդես, 1984, № 3:

[135] **Հ. Փափազյան**, նշվ. աշխ. , էջ 200:



Այսինքն, Երևանի խանության ընդամենը մի քանի շրջաններում չափահաս քրիստոնյա տղամարդկանց թիվը կազմել է մոտ 14317: Պետք է նշել, որ ջիզյայի թերթիկների քանակով չափահաս հայերի թվի մասին վերջնական տեղեկություն չենք կարող ունենալ, քանի որ Երևանում բնակվում էին նաև մեծ թվով մահմեդականացված հայեր: Հայերի մահմեդականացմանը նպաստում էր Իրանում ընդունված «Իմամ Ջաֆարի» օրենքը: Համաձայն դրա մահմեդականություն ընդունած նախկին քրիստոնյան կարող էր ժառանգել իր քրիստոնյա ազգականի ամբողջ ունեցվածքը անկախ ազգակցականության աստիճանից՝ քրիստոնյա ժառանգորդներին զրկելով ժառանգությունը ստանալու իրավունքից: Այս պայմաններում Արևելյան Հայաստանում մահմեդականություն էին ընդունում ոչ միայն չունևոր հայերը, այլ նաև ունևորները՝ իրենց ունեցվածքը մահմեդականացված ազգականներից պահպանելու համար[136]: Սակայն մահմեդականացված հայերը երբեմն փորձում էին օգտագործելով մահմեդական լինելու հանգամանքը խլել նաև իրենց հետ ազգակցական կապ չունեցող հայերի ունեցվածքը: Նման երևույթներից մեկի վերաբերյալ է շահ Սուլեյմանի 1667թ.-ի հրամանագիրը, որով նա Երևանի բեկլարբեկ Սեֆի Ղուլի խանին հայտնում է որ քրիստոնյաների մահից հետո ոմանք նրանց հարստությանը տեր դառնալու համար մահացածի ազգականներից որևէ մեկին հորդորում են մահմեդականություն ընդունել[137]: Երբեմն մահմեդականները կեղծ վկաների օգնությամբ կարողանում էին «ապացուցել», որ իրենք մահացած քրիստոնյայի ազգականն են և դառնում էին նրա ժառանգորդը[138]: Քրիստոնյա ժառանգներին կարող էր հնարավորություն տրվել անմիջապես մահմեդականություն ընդունել և հաստատել իրենց իրավունքները: Սակայն դա պետք է տեղի ունենար նախքան ժա-

[136] Այս օրենքի կիրառության և հետևանքների մասին առավել մանրամասն տե՛ս **Մ. Կարապետյան**, «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (XVII-XVIII), Պատմա-բանասիրական հանդես, 1988, № 1, էջ 219-221:

[137] **Ք. Կոստիկյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), վավերագիր 18, էջ 56:

[138] **Հ. Փափազյան,** Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր մատենադարանի, Երևան 1956, էջ 88:

ռանգությունը մահմեդական ազգականների միջև բաժանելը, այլապես ժառանգությունը պատկանում էր ավելի վաղ մահմեդականություն ընդունածին[139]:

Երևանի խանությունում ժողովրդագրական գործընթացների վրա զգալի ազդեցություն ունեցան նաև թուրք-պարսկական պատերազմները, որոնց արդյունքում 1735թ.ին Երևանը կրկին անցավ պարսկական տիրապետության տակ: Պատերազմի ավարտից հետո Նադիր շահի վարած ներքին քաղաքականությունն էականորեն ազդեց Հարավային Կովկասի, այդ թվում նաև Երևանի խանության ժողովրդագրական պատկերի վրա: Նադիրը բռնագաղթեր էր կազմակերպում, նպատակ ունենալով թուլացնել տերության տարբեր հատվածներում իր նկատմամբ անբարենպաստ տրամադրված ուժերին: Նրա հրամանով Թիֆլիսից Խորասան բռնագաղթեցվեց 6000 ընտանիք.[140] Մուղանում թագադրվելուց առաջ 300 հայ ընտանիք բռնագաղթեցվեց Երևանից[141]: Հետագայում կաթողիկոս Ղազար Ջահկեցին ակտիվ քայլեր ձեռնարկեց Օսմանյան կայսրության տարածքից Երևանի խանություն հայ բնակչության գաղթեցնելու ուղղությամբ: Դրա մասին է վկայում Նադիր շահի 1741թ.-ի հրովարտակը, որով շահն արգելում էր կաթողիկոսի ջանքերով Արևելյան Հայաստան վերաբնակեցված հայերին անհանգստացնել: Պետք է նշել, որ հրամանի համար հիմք էր հանդիսացել Ղազար կաթողիկոսի խնդրագիրը, որով վերջինս հաղորդել էր շահին, որ իր վերաբնակեցրած գյուղացիներին անհանգստացնում և բռնի կերպով այլ վայրեր են տեղափոխում[142]:

Հայ բնակչությունից բացի Երևանի խանություն էին տեղափոխվում այլ էթնիկ խմբեր: Մասնավորապես 1738թ.-ի մայիսի 1-ին Իրանում Ռուսաստանի դեսպան Ս. Սրապովը արտաքին գոր-

[139] Նույն տեղում, էջ 91:
[140] **L. Lockhart**, Nadir shah, a critical study based Mainly upon contemporary sources, London 1938, p. 91.
[141] **Մ. Կարապետյան**, Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800թթ., էջ 99:
[142] **Ք. Կոստիկյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 53-54:



ծերի հանձնաժողովին ուղղված զեկույցում հայտնում է, որ Օսմանյան կայսրությունից Երևանի խանություն են տեղափոխվել 6000 ընտանիք արաբներ և քրդեր[143]: Հետագա տարիներին Երևանի խանությունում շարունակվեց հայության արտահոսքը և մահմեդականների ներգաղթը: Հայ բնակչության Երևանի խանությունից արտագաղթելուն նպաստում էին ներքին և արտաքին գործոնները: Ներքին գործոներից էին մահմեդական խաների և հոգևորականների վարած քաղաքականությունը[144], քոչվոր ցեղերի կենցաղվարությունը, որի հետևանքով գյուղացիությունը չէր կարող մշտապես խաղաղ պայմաններում մշակել հողատարածքները[145]:

Այդ ժամանակաշրջանում Երևանի խանությունում ապրում էին նաև բազմաթիվ քրդական ցեղեր: Դատելով նրանց ունեցած քաղաքական դերից, որին կանդրադառնանք մեր աշխատության մյուս հատվածում, պետք է ենթադրել, որ նրանք փոքրաքանակ չեն եղել: Թերևս դրա մասին են վկայում նաև Երևանի Մուհամմադ խանի հրամանագրերը շնորհված քրդական ցեղերից Սիպկի և Ջիլան ցեղերի առաջնորդներին[146]: Այս հրամանագրերով խանը հաստատում է Միրզա-Աղա Սիպկիի աղայությունը (իշխանությունը) Սիպկի ցեղի նկատմաբ և Ջիլանի քուրդ Ահմադ-Աղայի աղայությունը Ջիլան ցեղախմբի նկատմամբ: Ինչպես տեսանք, Երևանի քրդերի թվաքանակի մասին տեղեկություն է հայտնում նաև Ի. Շոպենը: Ըստ նրա՝ Երևանում վերջին սարդար Հուսեյնի օրոք ապրել են 2984 քրդական ընտանիք, որոնցից 2000 ը Ջիլանի քրդերն են եղել[147]: Սիպկի ցեղի մասին տեղեկություններ չկան,

[143] Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, сборник документов, т. III, док. 77, с. 114.
[144] Մահմեդական հոգևորականությունը հայ հողատերերին հողից զրկելու քաղաքականություն էր վարում: Տե՛ս **Հ. Փափազյան**, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, **Մ. Կարապետյան**, «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (XVII-XVIII) և այլն:
[145] Քոչվոր ցեղերն ամեն հարմար առիթի դեպքում ապստամբում էին խաների դեմ և թալանով զբաղվում: Տե՛ս **Վ. Գրիգորյան**, նշվ. աշխ., 90-91:
[146] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 188բ-189ա:
[147] **И. Шопен**, նշվ. աշխ. , էջ 542.

սակայն խանի կողմից ցեղապետի հաստատումը փաստում է նրանց ոչ փոքրաքանակ լինելու մասին։ Երևանում բնակվող ցեղերից մեկի մասին հիշատակում է Սիմեոն Երևանցին, համաձայն որի 1766թ.-ին Քեօլանի կոչվող տաջիկների ցեղն ապստամբում է Երևանի Հուսեյն Ալի խանի դեմ և գնում ապրելու Ղարաբաղի Իբրահիմ խանի իշխանության ներքո[148]։ Այս գործոնների հետևանքով խանությունում դանդաղորեն փոփոխվում էր ժողովրդագրական պատկերը։

Իսկ արտաքին գործոնները պատերազմներն էին, որոնց ժամանակ Երևանի հայերից շատերը ռազմական գործողությունների ընթացքում լքում էին իրենց բնակավայրերը, իսկ շատերն էլ՝ գերեվարվում նվաճողների կողմից։ Պատերազմների հետևանքով Երևանի խանությունում մի քանի անգամ տեղի ունեցավ բնակչության մեծ արտահոսք։ Հերակլ Բ արքան, ցանկանալով Դաղստանի լեռնականների արշավանքների տնտեսական հետևանքները հաղթահարել, խրախուսում էր հայ բնակչությանը ներգաղթը դեպի Վրաստան[149]։ Երբեմն դա անում էր հարկադրանքով։ Մասնավորապես հարկ ենք համարում նշել 1779թ-ին Հերակլ Բ-ի կողմից ութ հայկական գյուղերի բնակչության գերեվարումը և բնակեցումը իր երկրում[150]։ Այս գյուղերի բնակչության թվաքանակի մասին հստակ տեղեկատվություն չկա։ Ուսումնասիրելով այդ արշավանքից հետո խանության տնտեսական և դրանով պայմանավորված քաղաքական ծանր իրադրությունը, հասկանում ենք, որ գերեվարված բնակչության թվաքանակը փոքր չի եղել։ Թերևս այդ պատճառով Երևանի Հուսեյն Ալի խանը քայլեր է ձեռնարկում Հերակլ Բ-ի հետ հաշտվելու և խանությունից բռնագաղթված բնակչությանը ետ վերադարձնելու ուղ-

148 **Գ. Աղանյանց,** Դիվան Հայոց պատմության, գիրք Գ. Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 494։

149 **R. G. Suny,** The Making of the Georgian Nation, 2nd ed., Indiana University Press, 1994, p. 56.

150 Գյուղերի և նրանց առաջնորդների անվանումները առավել մանրամասն տե՛ս [Բարսեղ Սուրբունեանց], Յիշատակարան ազգային դեան պատմության համար.- «Կռունկ հայոց աշխարհի» ամսագիր, Գ. տարի, թիւ Դ., ապրիլ, Տփխիս 1862, էջ 280։



դությամբ[151]։ Հաշվի առնելով Ս. Բուռնաշևի վկայությունը Երևանի խանության 5000-անոց զորքի 1/3-րդ մասը հայերից բաղկացած լինելու մասին, կարծում ենք 1780-ականներին խանության բնակչության մեծ մասը շարունակում էր կազմել հայությունը։ Երևանի խանությունից բնակչության մեծ արտագաղթ եղավ հատկապես Աղա Մուհամմադ խանի 1795թ.-ի արշավանքի նախօրեին։ Հիմնականում արտագաղթում էին դեպի Քարթլի-Կախեթի, քանի որ հույս ունեին, որ Հերակլ Բ-ը կկարողանա դիմակայել Աղա Մուհամմադ խանին և իրենց այնտեղ վտանգ չի սպառնա[152]։ Այդ ժամանակ Թիֆլիս արտագաղթած հայերի թիվը հասնում էր 20 000-ի[153]։ Սկզբնաղբյուրներում տեղեկություն չկա այդ ժամանակ Վրաստան հեռացած հայության վերադարձի վերաբերյալ։ Խանությունում հայ բնակչության թվաքանակի նվազման չափը հասկանալու համար բերենք Քանաքեռի օրինակը, որին անդրադառնում է 1843թ.-ին Երևանում եղած Հակստհաուզենը։ Ըստ նրա Քանաքեռը *«...ի վերջին ժամանակս ի բազմադիմի հարուածոց, և ի վերջին զօրաժողովոյն Պարսից, գրեաթէ այս աւան խպառ աւերացաւ. և ես անձամբ իսկ շրջեալ դիտեցի զմնացորդս աւերակացն»*[154]։ Հեղինակը տեղեկություններ է

151 Այդ մասին է փաստում Հուսեյն Ալի խանի նամակը Ախալցխայի Սուլեյման փաշային։ Նամակում խանը հայտնում է, որ դիմել է վրաց արքային բնակչությանը ետ վերադարձնելու թույլտվության խնդրանքով։ Խանը խնդրում է, որ Սուլեյման փաշան ևս միջնորդի Հերակլ Բ-ի մոտ, որպեսզի բնակչությանը թույլատրվի ետ վերադառնալ (Տե՛ս ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 145բ-147բ)։

152 **Վ. Գրիգորյան,** Երևանի պատմությունը, էջ 157, **А. Арутюнян,** Жизнь Артемия Араратскаго Уроженца селения вагаршапатъ близъ горы Арарата, Санктпетербургъ 1813, с. 281.

153 **АКТЫ** собранные кавказскую археографическоую комиссиею, т. VI/1, Тифлисъ 1866, док. 559, 564, 568, 570, 573, 582, 586, 614, **С. Глинка**, Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, т. II, Москва 1838, с.163-166, **George A. Bournoutian, The Politics of Demography: Misuse of Sources on the Armenian Population of Mountainous Karabakh,** Volume 9 of the *Journal of the Society for Armenian Studies* (1996, 1997 [1999])., p. 103.

154 **Բարոն Օգոստ Ֆոն Հակստհաուզենայ,** Ճանփորդութիւն հայս կոյս կովկասու այն է ի Հայս և ի վիրս, Վաղարշապատ 1872թ., էջ 180։

հայտնում նաև Քանաքեռի բնակչության վերաբերյալ, ըստ որի այստեղ նախկինում բնակվել է 1390 ընտանիք, իսկ 1843թ.՝ 72[155]:

Որոշ հետազոտողներ, օգտվելով այն հանգամանքից, որ խանությունում դիտարկվող ժամանակաշրջանում մարդահամար չի իրականացվել և բնակչության ու էթնիկ պատկերի վերաբերյալ չկան ստույգ տեղեկություններ, փորձում են տարբեր սկզբնաղբյուրների միակողմանի և ոչ լիարժեք ուսումնասիրությունների, երբեմն նաև այլ հետազոտողների աշխատանքների սխալ ներկայացնելու միջոցով թյուր տեղեկատվություն հաղորդել իրենց ուսումնասիրություններում՝ փորձ անելով գիտական հանրույթում շրջանառության մեջ դնել այն տեսակետը, համաձայն որի հայությունը տարածաշրջանում՝ Երևանի և Ղարաբաղի խանություններում, մինչ ռուսական նվաճումները կազմել է բնակչության փոքրամասնություն և որ հայ բնակչությունն այստեղ բնիկ չի եղել, այլ եկվոր է եղել: Նման գործելաոճը հատկապես տարածված է ադրբեջանական պատմագրությունում, ինչպես նաև ադրբեջանական հովանավորչություն ունեցող այլազգի պատմաբանների մոտ ինչպիսիք են Աուդրեյ Ալստադտը, Սյուզան Գոլդենբերգը, Յագուբ Մահմուդովը և այլք[156]:

Երևանի խանության պատմության խեղաթյուրման փորձերից մեկն Ադրբեջանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի կողմից 2010թ.-ին Բաքվում հրատարակված պրոֆեսոր Յագուբ Մահմուդովի **Иреванское ханство, Российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана** աշ-

[155] Նույն տեղում, էջ 179:

[156] **A. Altstadt**, Ethnic Conflict in the Post-Soviet World: Case Studies and Analysis, New York 1997, **Suzan Goldenberg**, Pride of Small Nations: The Caucasus and Post-Soviet Disorder (London: Zed Books, 1994, **Я. Махмудов**, Иреванское ханство, Российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана, Баку 2010. Ադրբեջանական կեղծարարության մի քանի դեպքերի անդրադարձել է Ջ. Բուռնությանը իր "The Politics of Demography: Misuse of Sources on the Armenian Population of Mountainous Karabakh" հոդվածում: Տե՛ս. **G. Bournoutian**, The Politics of Demography: Misuse of Sources on the Armenian Population of Mountainous Karabakh, Journal of the Society for Armenian Studies, Society for Armenian Studies, 1999, vol. 9, p. 99-103.



խատությունն է: Քանի որ դրան ամբողջությամբ անդրադառնալը բավականին ծավալուն կլինի և մեր հիմնական խնդիրը չէ, ապա մեր աշխատությունում կանդրադառնանք գրքում ներկայացված Երևանի խանության բնակչությանը վերաբերվող տեղեկություններից մի քանիսին: Գրքի հեղինակը, որպես հիմնական աղբյուր օգտագործում է Ի. Շոպենի մեզ արդեն հայտնի աշխատությունը: Մահմուդովը, մեծ վստահություն հայտնելով այդ աշխատանքում առկա տեղեկատվության, աշխատության մասին գրում է, որ այն անփոխարինելի սկզբնաղբյուր է Երևանի խանության ռուսական նվաճումից առաջ և հետո ընկած ժամանակահատվածի ժողովրդագրական պատկերն ուսումնասիրելու համար[157]:

Այնուհետև հեղինակը սկսում է ներկայացնել Երևանի խանության ժողովրդագրական պատկերը: Բյուկ-չոբանկարա ցեղը Ի. Շոպենը 541-րդ էջում նշում է որպես քրդական ցեղ, իսկ Մահմուդովը, հղում կատարելով էջ 535-ի աղյուսակին և նշելով այդ ցեղի թիվը, այն հիշատակում է որպես ադրբեջանական ցեղ,[158] մինչդեռ աղյուսակում Բյուկ-չոբանկարա, ինչպես նաև ազերի հեղինակի կողմից նշված Կարափափախ ցեղերին Ի. Շոպենը հիշատակում է որպես մահմեդական ցեղեր, որոնք, ըստ նրա, դեռևս վրաց Գեորգի Բ (1072-1089թթ.) թագավորի օրոք տեղափոխվել են Վրաստան, որտեղից էլ հետագայում գաղթել են Հայաստան և Օսմանյան կայսրություն[159]: Պետք է փաստել, որ Ի. Շոպենն այստեղ որևէ հիշատակություն չունի այս ցեղերի ադրբեջանական լինելու վերաբերյալ: Իսկ Մահմուդովի կողմից որպես ադրբեջանցի հիշատակվող Այրումլու, Սադլի, Սեյիդլի-Ախսախլի ցեղերը, ըստ Ի. Շոպենի, Իկոնիայի սուլթանության կործանումից հետո Հայաստան տեղափոխված ցեղեր են, որտեղ ստացել են Այրումլու կամ Ռումելի ցեղանունները՝ քանի որ դեռևս Արևելահ-

[157] **Я. Махмудов,** նշվ. աշխ., էջ 76.

[158] **Я. Махмудов,** նշվ. աշխ., էջ 77. Հեղինակը հղում կատարելիս առաջնորդվել է աղյուսակի տվյալներով, քանի որ այստեղ նշված է այդ ցեղի ոչ թե էթնիկ, այլ կրոնական պատկանելությունը: Ի. Շոպենը, 541 էջում, Անդրադառնալով էթնիկ պատկանելիության հարցին, այն համարում է քրդական ցեղ: Տե՛ս. **И. Шопен, указ. соч., ст 541.**

[159] И. Шопен, **նշվ. աշխ.**, էջ 535.

ոմեական կայսրության գոյության ժամանակներից Փոքր Ասիայի տարածքը պարսիկների կողմից կոչվել է Ռում[160]: Համաձայն Ի. Շոպենի Երևանում ապրում էր 2984 քուրդ ընտանիք, որոնցից զիլան ցեղից 2000 ընտանիք[161]: Ադրբեջանցի հեղինակը նշում է, որ Հայաստանում կար ընդամենը 324 քուրդ[162] հղում անելով Ի. Շոպենին, մինչդեռ վերջինս նշում է այդքան եզդի, այլ ոչ քուրդ[163]:

Մահմուդովը, միաժամանակ ցանկանալով հայկական սկզբնաղբյուրներում առկա տեղեկատվությունը ներկայացնել որպես չափազանցություն և ոչ ճշգրիտ, հղում է կատարում Վ. Գրիգորյանի Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800) աշխատանքի 109 էջին և նշում հետևյալը. «глава *армянской общины на территории Иреванского ханства С.Тер-Саакян в письме князю Г.Потемкину, датированном декабрем 1784 года, признавал, что он, выполняя поручение Х. Аргутяна (религиозного руководителя армян России –* ***ред.****), значительно преувеличивал численность армян*»[164]: Վ. Գրիգորյանի շարադրանքի սխալ մեկնաբանությունից խուսափելու համար հարկ ենք համարում այն մեջբերել ամբողջությամբ. *«1784թ.-ի դեկտեմբերի 18-ին Ս. Տեր-Սահակյանը նամակով դիմում է իշխան Գ. Պոտյոմկինին և հայտնելով Հ. Արղությանի այս*[165] *ինչպես և նոյեմբերի 3-ին գրած նամակի մասին, տեղեկություններ է հաղորդում Պարսկաստանում տեղի ունեցած քաղաքական անցուդարձի և Ղարաբաղի մելիքների ծանր վիճակի մասին: Նա գրում է, որ ինքը համաձայն Հ. Արղությանի ցուցումի* *ներկայացուցիչ է ողջ հայության, որոնց թիվը չափազանցնելով նշում է ինը միլիոն և կամ ավելի»*[166]: Այսպիսով Վ. Գրիգորյանի մոտ որևէ հիշատակում չկա հայության թիվը չափազանցնելու մասին Հ. Արղությանի որևէ հանձնարարության վերաբերյալ: Հարկ ենք համարում մեջբերել նաև Հ. Արղությանի Ս. Տեր-Սահակյանին և Ս. Տեր-Սահակյանի Գ. Պոտյոմկինին գրված նամակների վերոնշյալ խնդրին վերաբերվող հատվածները: Հ. Արղությանի գրած նամակում կարդում ենք հետևյալը. *«Հոգի որդի՛, ոչ եթէ դու դեֆութաթ. այսինքն դեսպան և կամ միջնորդ ես յԵրևանու, այլև՝ բոլոր ազգին հայոց և ողորմելի մելիքացն Ղարաբաղու...»* [167]: Այսպիսով նամակում Հ. Արղությանը Տեր-Սահակյանին պարզապես հորդորում է հանդես գալ որպես ամբողջ հայության ներկայացուցիչ: Դրա մասին է վկայում Տեր-Սահակյանի նամակը, որտեղ վերջինս Պոտյոմկինին գրում է.« *ազգըն մեր մինչև Թ(9) միլիօն կամ այլ աւելի կարեմ ասել, որք միշտ աղօթօղ են բամբշին կենաց և գթառատ այցելութեանդ»*[168]:

Այսպիսով, Ց. Մահմուդովը, իր ուսումնասիրած սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները մասնակի ներկայացնելով, խեղաթյուրում է փաստերը և բնակչության թվաքականի վերաբերյալ սխալ տվյալ ներկայացնում՝ փորձելով գիտական շրջանառության մեջ դնել և առաջ քաշել սխալ պնդումներ:

Համաձայն մեր կողմից ուսումնասիրված սկզբնաղբյուրների Երևանի խանությունում հայերն ունեին «հասարակաց ազգային գլուխ»՝ ժառանգական մելիք Աղամալյան տոհմից, որը Երևանի խանության հայերի գլխավորն էր[169]: Բացի Աղամալյաններից, խանությունում այլ ազդեցիկ հայ մելիքներ ևս կային: Աբրահամ Կրետացին, նշելով, որ Երևանում 9 մահալ կար և 9 մելիք, հիշա-

[160] **Я. Махмудов,** նշվ. աշխ. , էջ 536.
[161] **Там же.**, с. 541.
[162] **Там же.**, с. 77.
[163] **И. Шопен,** նշվ. աշխ. , էջ 633-634.
[164] **Я. Махмудов,** նշվ. աշխ. , էջ 376.
[165] «Այս նամակ» նշելով Վ. Գրիգորյանը նկատի ունի 1784թ. -ի նոյեմբերի 24-ին Արղությանի Ս. Տեր-Սահակյանին գրած նամակը, որի մասին Վ. Գրիգորյանը հիշատակում է տեքստում մեջբերված հատվածից առաջ: Տե՛ս Վ. **Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 109:



[166] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ. , էջ 109:
[167] Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, сборник документов, т. III, с. 326.
[168] **Там же,** с. 326
[169] **Ե. Բ.**, Բարոն Օ. Հակստհաուզենի ճամփորդությունից մի գլուխ, «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագիր, Գ. տարի, թիւ Ա., հունւար, Տփխիս 1862, էջ 26:

տակում է Մելիքջանին, որպես Երևանի քալանթար, ինչպես նաև Մելիք Հակոբջանին[170], ով Նադիր շահի կողմից նշանակվում է Երևանի փողերանոցի կառավարիչ[171]: Ըստ Աբրահամ Կրետացու մահալների մելիքները հնազանդ էին քալանթարին և դողում են նրա առջև ինչպես նոքար[172]: Վերջիններիս ունեցած բարձր դիրքի մասին են վկայում պարսիկ տիրակալների հետ ունեցած նրանց հարաբերությունները: Այնուհետև Նադիր շահը 1738թ.-ի շաբան ամսի (նոյեմբերի 14-ից դեկտեմբերի 13-ը) հրամանագրով հաստատում է մելիք Մկրտումի և մելիք Հակոբջանի կալվածքների մուաֆության (հարկերից ազատված լինելու) իրավունքը[173]:

1752թ.-ի մայիսին արձակված հրամանագրով Ազատ խանը, ում ազդեցության ներքո էր անցել Երևանն այդ ժամանակ, Մինաս կաթողիկոսին հայտնում է, որ Մելիք Հակոբջանի միջոցով նրա խնդրանքն ստացել է, և Երևանի բեկլարբեգ է նշանակել Խալիլ խանին՝ հանձնարարելով նրան լավ վարվել Երևանի բնակչության և կաթողիկոս Մինասի հետ[174]: Այս հրամանագիրը փաստում է այն մասին, որ մելիք Հակոբջանը տվյալ ժամանակահատվածում պահպանել է իր ազդեցիկ դիրքը Երևանում և բարձր մակարդակի հարաբերություններ ունենալով Ազատ խանի հետ, նրան է փոխանցել (գուցե նաև միջնորդել) Մինաս կաթողիկոսի խնդրանքը:

---

170 Մելիք Հակոբջանը Երևանի նշանավոր հայ մելիքներից էր, ով մելիք Մկրտումի հետ իր կալվածքներին և հարկային արտոնություններին վերաբերվող իրավունքները ստացել էր Նադիր շահի հրովարտակով: Տե՛ս Հայոց պատմություն, հտ. երրորդ, նոր ժամանակաշրջան (17-րդ դարի երկրորդ կես – 1918), գր. Առաջին (17-րդ դարի երկրորդ կես – 19-րդ դարի վերջ), Երևան, 2010, էջ 58:

171 Հայոց պատմություն, հտ. երրորդ, նոր ժամանակաշրջան (17-րդ դարի երկրորդ կես – 1918), գր. Առաջին (17-րդ դարի երկրորդ կես – 19-րդ դարի վերջ), Երևան, 2010, էջ 66, **Աբրահամ Երևանցի**, նշվ. աշխ., էջ 72-74:

172 Աբրահամ Կաթողիկոս Կրետացին, նշվ. աշխ. , էջ 61-62:

173 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 1032:

174 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1326: Տե՛ս հավելված, նկար 12, 13:



18-րդ դարում յուրաքանչյուր մահալում հայ մելիքի առկայության մասին է վկայում նաև Բարոն Օ. Հակստհաուզենը: Վերջինս արժեքավոր տեղեկություններ է հաղորդում խանության հայ բնակչության «համայնքային» կյանքի կազմակերպման վերաբերյալ: Ըստ այդ տեղեկությունների խանության տարբեր հատվածներում ապրող հայ բնակչությունը կառավարվում էր ազգությամբ հայ ավագի կողմից, ով ազդեցիկ ընտանիքից էր և հիմնականում ժառանգաբար ստանում էր իր պաշտոնը: Հայաբնակ բնակավայրերի կառավարումը կատարվում էր հետևյալ կերպ: Հասարակությունում յուրաքանչյուր շենից հայոց իրենց հին սովորության համաձայն ընտրում էին երեք անձ՝ մեկը գլխավոր, երկուսն օգնական՝ շենը կառավարելու համար: Այս մարդիկ բանավոր կերպով վարում են մանր գործերի դատերը հողերի սահմանների և այլնի վերաբերյալ[175]: Մեծ հանցանքները՝ գողություն, սպանություն, վիրավորում, ուղարկում էին մելիքի մոտ, ով Երևանում էր նստում: Մելիքները ևս բանավոր էին դատում, կարող էին բանտարկել մարդկանց, սակայն մահապատժի չէին կարող ենթարկել, դրա իրավունքը միայն խանին էր տրված[176]:

Հարկ ենք համարում նշել, որ խոշոր կալվածքների վերաբերյալ հայերի և մահմեդականների միջև եղած դատերը անց են կացվել շարիաթի օրենքներին համապատասխան շարիաթական դատարանների կողմից, քանի որ խանությունում դատական համակարգը մահմեդական հոգևորականների ձեռքում էր[177]: Սակայն դա չէր խանգարում հայ հոգևորականությանը վանքին պատկանող կալվածքների և ունեցվածքի վերաբերյալ վեճերը լուծել առանց շարիաթական դատարանի: Հայ հոգևորականությունը, հանձինս Էջմիածնի կաթողիկոսների, իրենց կալվածքների վերաբերյալ խնդրանքներով դիմում էին Երևանի խաներին և Իրանի այլ տիրակալներին, օրինակ շահերին: Բացի այդ, շահ

---

175 Բարոն Օգոստ ֆոն Հակստհաուզեն, նշվ. աշխ. էջ 183:

176 Նույն տեղում, էջ 186:

177 **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը (1801-1879), էջ 25:

Աբբաս Բ-ի 1650թ.-ի հրամանագրով հայերին իրավունք էր տրվում միմյանց միջև առկա վեճերն ու խնդիրները հարթելու համար դիմել հայ հոգևորականությանը և արգելվում էր մուսուլմաններին խառնվել դրան[178]: Իսկ Քերիմ խանը, հատուկ հրամանագրով շեյխ-ուլ-իսլամից, ղազիներից, ամիլներից և մահմեդական քալանթարներից բացի, նաև հայ մելիքներին է արգելում միջամտել Էջմիածնի կաթողիկոսի գործունեությանը[179]: Պետք է նշել, որ Էջմիածնի վանքի ներկայացուցիչները հողային և հարկային տարբեր հարցերով նաև դիմում էին շարիաթական դատարանին: Կարևոր գործարքները, անգամ հայերի հետ իրականացվում էին շարիաթական դատարանի վճռով, որի որոշումները ավելի հեղինակավոր ու ազդեցիկ էին ինչպես Սեֆյան տիրապետության, այնպես էլ կիսանկախ խանությունների շրջանում: Օրինակ 1722թ.-ին Օշականի բնակիչների և էջմիածնի կաթողիկոսի միջև կայացած ֆինանսական գործարքը հաստատելու համար նրանք դիմում են Մոլլա Մահմադ Հուսեյն շեյխիսլամին[180]: Հատկանշական է այն փաստը, որ գործարքն իրականացվել է Օշականի հայ բնակչության և Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսի (1715-1725թթ.) միջև[181]:

Հայ հոգևորականությանը հայերի ներքին որոշ (ամուսնություն, ապահարզան, մանր վեճեր և այլ) խնդիրների կարգավորման հարցում դատական իշխանություն տալու հանգամանքը փաստում է այն մասին, որ խանության հայության առաջնորդներ ճանաչվում էին ոչ միայն հայ մելիքները, այլ նաև հոգևորականները: Թերևս էջմիածնի հոգևորականների հայության կյանքում խաղացած կարևոր դերի մասին է փաստում նաև այն հանգա-

178 Հ. **Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ, պրակ երկրորդ, (1601-1650թթ. ), էջ 146:

179 **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 92:

180 Նորք Գրական գիտական յեվ քաղաքական հանդես, № 2, Ցերեվան 1923, էջ 150, տե՛ս նաև **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, նշվ. աշխ., էջ 156: Գործարքի մանրամասներին կանդրադառնանք մեր աշխատության մյուս էջերում, ըստ քննարկվող թեմաների:

181 Սիմեոն կաթողիկոս Երևանցի, նշվ. աշխ., էջ 156:



մանքը, որ 1779թ.-ին Բայազետ գաղթած հայերին ետ կանչելու համար Հերակլ Բ-ը դիմում է Սիմեոն Երևանցուն, այլ ոչ հայ մելիքներին: Հատկանշական է այն փաստը, որ Սիմեոնի կոչով ետ վերադարձած և այնուհետև Հերակլ Բ-ի կողմից Քարթլի-Կախեթի բռնագաղթված հայ բնակչությունը Էջմիածնին պատկանող գյուղերից չէր.[182] Այսինքն՝ տնտեսական կախվածություն չուներ Էջմիածնի կաթողիոսից:

Հայ բնակչությունը կարևոր դեր էր խաղում նաև Երևանի խանության տնտեսական կյանքում: Խանը սիրաշահում էր հայերին, քանի որ խանության հայ բնակչության տնտեսական գործունեության հաշվին խանը մեծ եկամուտներ էր ստանում[183]: Դրա մասին են վկայում նաև ժամանակակից աղբյուրները: Ռայնեգսը, ով ռուսական իշխանությունների պատվերով 1771-1783թթ. հինգ հետազոտական ճանապարհորդություն է իրականացրել Կովկասում, 1783թ. փետրվարին, լինելով Երևանի Հուսեյն Ալի խանի հյուրը, ուսումնասիրում է բերդը և նշում, որ վաթսուն «լեռնականր»[184] բավական է խանին և բոլոր պարսիկներին Երևանից քշելու համար: Անդրադառնալով խանությունում հայերի դերին՝ նա նշում է, որ քաղաքը լի է հայերով և խանը ներսից պաշտպանված է հայերի կողմից: Խանության տնտեսության վերաբերյալ վերջինս իր զեկույցում գրում է, որ Երևանը հարուստ է Ղարաբաղից և Ղարադաղից: Այնուհետև հեղինակը նշում է, որ խանության հարստության մասին վկայում է մեկ տարի առաջ միայն քամրակից հավաքված գումարի չափը, որի 1/7-րդ մասը հավաքել է խանը և որը գնահատում է մոտ 476000 ռուբլի[185]: Որպեսզի հասկա-

182 Գյուղերի և նրանց առաջնորդների անվանումներն առավել մանրամասն տե՛ս [Բարսեղ Սուրբոտենանց], նշվ. աշխ., էջ 280:

183 **АКТЫ** собраные кавказскую археографическую комиссиею, т. 1, с. 118.

184 Այդ ժամանակ տարածաշրջանում պարբերաբար բնույթ էին կրում Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ասպատակիչ արշավանքները, որոնք անվանում էին նաև «լեռնականներ» :

185 **А. Иоаннисян**, Россия и Армянское освободотельное движение в 80-х годах 18 столетия, с. 214-215. .

նալի լինի, թե որքան մեծ էր այդ գումարն այն ժամանակվա համար, նշենք որ օրինակ խառատի տարեկան աշխատավարձը կազմում էր 242.6. ռուբլուն հավասար թուման[186]:

Այսպիսով, չնայած ներքին և արտաքին խոչընդոտներին, ինչպիսիք էին Իմամ Ջաֆարի օրենքը, քոչվոր ցեղերի կենցաղվարությունը, պատերազմները և այլն, ԺԸ. դարի երկրորդ կեսին հայությունը շարունակում էր կազմել խանության բնակչության մեծ մասը, ներհամայնքնային կյանքում ղեկավարվում էր հայազգի վերնախավի կողմից, կարևոր դերակատարում ուներ խանության տնտեսական և քաղաքական կյանքում:

### 2.3. Երևանի խանության տնտեսական համակարգը

Սկզբնաղբյուրներում քիչ տեղեկություն է առկա ԺԸ.-րդ դարի երկրորդ կեսին Երևանի խանությունում տիրող հողատիրության ձևերի մասին: Այստեղ հիմնականում պահպանվել էին Սեֆյան Իրանում ընդունված կարգերը: Ուստի խանության տնտեսության կարևոր բաղադրիչներից մեկի՝ հողատիրության, վերաբերյալ մեր ուսումնասիրությունն իրականացնելիս հետազոտել ենք նաև Սեֆյանի Իրանում գործող կարգերը՝ փորձելով ամբողջացնել մեր ուսումնասիրությունը: Իրանում գործում էին հողատիրության հետևյալ ձևերը՝ ա. պետական հողեր, որոնք կազմում էին մեծամասնությունը և դրանց տիրում էին պետական ծառայողները՝ ժամանակավոր, քանի դեռ ծառայության մեջ էին, բ. հողեր, որոնք պատկանում էին շահին՝ նրա սեփականությունն էին, գ. վանքապատկան հողեր, որոնք կարող էին լինել շահի կամ այլ անձանցից ստացված նվիրատվություններ՝ վակֆներ, դ. անհատներին «պատկանող» հողեր, որոնց նրանք տիրում էին 99

186 **Բ. Հարությունյան,** *Վարձու աշխատանքը Երևանի խանության մեջ XVIII դարում և XIX դարի առաջին քառորդում.* Պատմա-բանասիրական հանդես, № 1, Երևան 1959թ., էջ 93:



տարով, որի ընթացքում կարող էին վարվել հողի նկատմամբ ինչպես կցանկանային[187]:

Երևանի խանությունում մուլքը, որպես հարկ կազմում էր համախառն բերքի 1/10-րդ մասը, իսկ բահրաչեն 1/5-րդը[188]: Պաշտոնական փաստաթղթերում մուլք տերմինն օգտագործվում էր բնորոշելու ինչպես հողատարածքները, այնպես էլ առուները, ձիթհանքները և այլ սեփականություններ[189]: 14-15-րդ դարերից մուլքային հողերից հավաքվող հարկը պաշտոնական փաստաթղթերում կոչվում է բահրա-յե մալիքանե, կամ բահրաչե-յե մալիքանե, այսինքն մալիքանեի բաժինը, կամ մուլքի տիրոջ բաժինը[190]: Սկզբնաղբյուրները, այդ թվում առևտրական և այլ արխիվային փաստաթղթերը, վկայում են այն մասին, որ չնայած մուլքային հողերի տերը չուներ բացարձակ սեփականատիրական իրավունքներ դրա նկատմամբ, գյուղական համայնքը մուլքի տիրոջը համարում էր հողի սեփականատերը[191]: Մուլքը կարելի էր գնել և վաճառել, կամ ժառանգություն թողնել, դրանց տերերը կապ չուներ պետական պարտադիր ծառայություն իրականացնելու հետ[192]: Մուլք և բահրա տերմինների կողքին հիշատակվում է նաև թիուլ տերմինը: ԺԸ. դարում Երևանում թիուլը ընկալվում էր հետևյալ կերպ. մուլքի տիրոջը, որը իրավունք ուներ հավաքել բահրայի մի մասը՝ մալոջիհաթը և այլ հարկեր, իրավունք էր

187 **V. Minorsky,** Tadhkirat Al-Muluk, A manual of Safavid Administration (circa 1137-1725), Persian text in facimile (B.M. Or. 9496) Translated and explained by V. Minorsky, London 1943, p. 195.

188 **И. Петрушевский,** նշվ. աշխ. , էջ 229-232.

189 Տե՛ս Սեֆյան Շահ Աբբաս Ա-ի 1612թ. -ի հրովարտակը. **Հ. Փափազյան,** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ, պրակ երկրորդ, (1601-1650թթ. ), էջ 91, Երևանի բեկլարբեկ Ամիր-Գունա խան ղաջարի 1620թ. -ի հրամանագիրը, նույն տեղում, էջ 94, և այլն:

190 **Հ. Փափազյան,** Շարիաթական իրավական նորմերը և հողի ֆեոդալական սեփականության հարցը Արևելքում, Լրաբեր հասարակական գիտությունների, № 12, Երևան 1966, էջ 24:

191 **А. Папазян,** Аграрние отношение в Восточной Армении в XVI-XVII веках, с. 84.

192 **И. Петрушевский,** նշվ. աշխ. , էջ 228.

տրվում հավաքել նաև բահրայի մնացած մասը՝ փոքր բահրան կամ բահրաչեն: Այդ կերպ նույն մարդը համարվում էր և մուլքի և թիուլի տերը: Թիուլի այս տեսակը հարկային իմունիտետի իրավունք ունեցող մուաֆներից տարբերվում էր նրանով, որ այն ժառանգական չէր և պետք է վերահաստատվեր նոր հրամանագրով[193]:

Պետությունը, Երևանի խանության դեպքում պետական բարձրագույն կառավարիչ խանը, իր պաշտոնյաներին, որպես վարձատրություն հողեր էր հատկացնում, որտեղից նրանք ստանում էին բահրայի մի մասը՝ բերքի 1/10-ը, որը ընդունված էր կոչել մուլք[194], իսկ՝ 2/10-ը, որը կոչվում էր նաև բահրա, գանձվում էր պետության կողմից[195]: Կալվածքից գանձվող հարկերի պետությանը տրվող բաժինը կարող էր որպես թիուլ տրվել դրան մուլքային իրավունքով տնօրինողին և վերջինս կստանար ամբողջ բահրան: Թիուլների տերերն[196] այն ստանում էին առանց ժառանգելու և վաճառելու իրավունքի[197]: Այս հարկային համակարգը Երևանի խաների համար էլ ավելի մեծ եկամուտներ ապահովեց հատկապես կիսանկախ կարգավիճակ ձեռք բերելուց հետո, քանի որ կենտրոնական պետական ապարատից կախվածության բացակայության պայմաններում պետական հողերի եկամուտն ամբողջությամբ անցավ խանի վերահսկողության ներքո:

Սեֆյան Իրանում բոլոր պետական հողերը գրանցվում էին հատուկ մատյաններում, որոնք գտնվում էին տվյալ վիլայեթի ֆինանսական կառավարչի մոտ: Նախքան Երևանի խանության կիսանկախ կարգավիճակ ձեռք բերելը տեղի բոլոր պետական հո-

193 **Там же** с. 207.

194 1722թ. Օշականի բնակիչները էջմիածնի կաթողիկոսից հայտր հիսուն թումանի են պարտքով վերցնում՝ պարտավորվելով մյուս տարիներին կրկնակի մուլք տալ: Թ. Ավդալբեգյանն այս գործարքի օրինակով պնդում է, որ Արևելյան Հայաստանում մուլքը երբեմն կազմել է նաև բերքի 2/10-ը: Տե՛ս **Թ. Ավդալբեգյան**, Բահրան և մուլքը XVII-XVIII-րդ դարերում, Նորք Գրական գիտական յեվ քաղաքական հանդես, № 2, Երևան 1923, էջ 149-150:

195 **И. Петрушевский**, указ. соч., 1949, с. 267.

196 Կամ հողին թիուլային իրավունքով տնօրինողները:

197 **И. Петрушевский,** նշվ. աշխ. , էջ 207.



ների գրանցամատյանը գտնվում էր Թավրիզում, որտեղ գտնվում էր Ատրպատականի[198] վեզիրի նստավայրը: Պետական հողերից ստացված եկամուտներից վճարվում էր պետական ծառայողներին, զինվորականներին[199]: Իրանի ազդեցությունից դուրս գալուց հետո Երևանի խանությունում ամենախոշոր կալվածատերը Երևանի խանն էր: Մուհամմադ խանի կալվածքների ցուցակի համաձայն նա մուլքեր ուներ Ղրխբուլաղի մահալի տասներեք գյուղում, որոնցից մեկում՝ վեց դանգ, մեկում՝ մեկուկես, մեկում՝ կես, իննում՝ երեք դանգ, Գառնիի մահալի գյուղերում, որոնցից մեկում՝ երկու դանգ, վեցում՝ երեք դանգ, Կարբիի գյուղերում՝ երեք դանգ, մեկում՝ երկու, Սուրմալուի ինը գյուղում՝ երեք դանգ, Շարուրի ինը գյուղում՝ երեք դանգ, մեկում՝ երկու, երկուսում՝ կես դանգ և վեցում՝ երեք դանգ[200]:

198 Մասնագիտական գրականությունում և աղբյուրներում Ատրպատական անվան փոխարեն հաճախ հանդիպում ենք «Ազերբայջան» տեղանունը: Պարսից մատենագրության մեջ և վավերագրերում «Ազերբայջան» անվան տակ հաճախ նկատի են ունենում այն տարածքները, որոնք համապատասխանում են ժամանակակից Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Իրանի Իսլամական հանրապետության Ատրպատական նահանգի տարածքներին: Անդրադառնալով վերոնշյալ տարածքները «Ազերբայջան» անունով հիշատակելու հարցին՝ Հակոբ Փափազյանը նշում է, որ 15-րդ դարից հետո «Ազերբայջանը» Թավրիզ կենտրոնով, վարչական մի խոշոր միավոր էր, որի մեջ մտնում էր ոչ միայն բուն «Ազերբայջանը» կամ «Ատրպատականը», այլ նաև հին Աղվանքն ու պատմական Հայաստանի Արցախի ու Սյունիքի նահանգներն ամբողջությամբ, Վասպուրականն ու Այրարատ նահանգների արևելյան գավառների մեծ մասը: Հետևաբար ինչպես, որ արաբական աղբյուրների «Արմինիան» ունի լոկ վարչական իմաստ, այնպես էլ 15-րդ դարից հետո «ընդարձակ առումով» «Ազերբայջան» վարչական միավորի հիշատակումը պարսից մատենագրության մեջ և պատմական վավերագրերում, հաճախ ցույց է տալիս միայն տվյալ վիլայեթի կամ շրջանի զուտ ֆինանսական-վարչական ենթակայությունը: Տե՛ս **Հ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 2, կալվածագրեր, պրակ առաջին (ԺԴ-ԺԶ դդ.), Երևան 1968թ., էջ 144:

199 **Վ. Գրիգորյան**, նշվ. աշխ. , էջ 47, **А. Папазян**, Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII, с. 99-100:

200 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 861:

Հողերից գանձվող հարկերի տեսակներն ու չափերն ուսումնասիրելու համար կարևոր է քննել հիմնական հարկատեսակների անվանումները:

Երևանի խանությունում գործող հարկային համակարգն ուսումնասիրվել է տարբեր հետազոտողների կողմից. Ի. Պետրուշևսկի, Ս. Մարկոսյան, Հ. Փափազյան, Բ. Հարությունյան, Թ. Հակոբյան և այլն, որոնց հետազոտություններում սակայն հաշվի չեն առնվել Երևանի խանության պարսկալեզու սկզբնաղբյուրների տեղեկությունները: Այս վավերագրերի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս առավել ստույգ պատկերացում կազմել ԺԸ. դարի երկրորդ կեսում Երևանի խանությունում գործող հարկային համակարգի վերաբերյալ, քանի որ խանությունում միշտ չէ, որ գործել է միանման հարկային համակարգ. հարկերն ու տուրքերը կարող էին ավելանալ և պակասել կախված խաների կամքից և խանությունում տիրող քաղաքական և տնտեսական իրադրությունից:

Խանության գյուղացիությունից գանձվող գլխավոր հարկատեսակը մուլքը և բահրան էին[201]:

201 Պետրուշևսկին մուլք տերմինի ներքո բացատրում է 6 հասկացություն՝ 1) մուլք-սենյորիա, երբ մուլք անվան տակ հասկացվում էր ամբողջ իշխանությունը, 2) մուլք-խոշոր կամ մանր ֆեոդալական կալվածք, երբ խոսքը գնում էր մի կամ մի քանի գյուղերի սեփականության իրավունքի մասին, 3) մուլք-ջրատիրություն-երբ խոսքը վերաբերվում էր ջրային ռեսուրսներին՝ առուներին, եթե դրանք անցնում էին նրա կալվածքի տարածքով, 4) մուլք-ռենտա՝ ավելի կոնկրետ ռենտա-հարկի մի մասը (մալոջիհաթ կամ բահրա), որը հողատիրոջ կողմից հարկվում էր իրեն մուլքային իրավունքով պատկանող հողերից, իսկ մնացած մասը՝ փոքր բահրան, կամ բահրայեն, անցնում էր գանձարան, եթե մուլքադարը շահից կամ տեղի խանից չէր ստանում նաև բահրայեն գանձելու իրավունքը: 5) մուլք-ամեն տեսակ անշարժ գույքի, որը եկամուտ էր բերում սեփականատիրոջը, 6) մուլք-համայնքային կալվածքների՝ քանի որ Հայաստանում և Արևելյան Այսրկովկասում 17-18-րդ դարերում կային ոչ մեծ թվով ազատ համայնքներ, ապա նրանց կալվածքները համարվում էին մուլքեր: Տե՛ս **И. Петрушевский**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв. Ленинград 1949, с. 229-232



Խանության հարկատուների հաշվառման համակարգի մասին տեղեկություններ է հայտնում Ս. Մարկոսյանը: Չնայած հեղինակը չի նշում, թե ինչ սկզբնաղբյուրից է օգտվել, և հնարավոր չէ ճշտել այս տեղեկության արժանահավատությունը, այնուամենայնիվ, կարևոր համարելով հարցի քննության վերաբերյալ յուրաքանչյուր տեղեկատվություն, ստորև կներկայացնենք այն, միաժամանակ նշելով նաև այն աղբյուրները, որոնց հղում է կատարել հեղինակը:

Յուրաքանչյուր տարի խանը ցուցակագրում և հաստատում էր հարկային միավորները, որպեսզի բնակչությունը չկարողանար թաքցնել հարկերը: Նա կազմում էր երդեր, որոնք ընդգրկում էին երեք, չորս կամ հինգ ընտանիք և դրանք կոչվում էին բինաչի: Երբեմն մի ընտանիքը կարող էր մի երդ կազմել[202]: Բինաչիների հաշիվը պահում է ինքը խանը և անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր գյուղից գումար, անասուններ և այլն էր պահանջում ըստ բինաչիների հաշվի:[203] Բինաչին դա տնտեսական միավորի (կով, ծառ, ոչխար և այլն) և աշխատունակ տղամարդու հանրագումարն է[204]: Այսինքն եթե ընտանիքում կար երկու տնտեսական միավոր և երկու աշխատունակ տղամարդ ապա դրա բինաչների թիվը չորսն էր[205]:

Բացի բահրայից՝ բերքի 1/3-րդ մասը, խանության բնակչությունը վճարում էր բազմաթիվ այլ հարկեր և պարտադիր աշխատանքներ էր կատարում կալվածատիրոջ համար: Պետրուշևսկին կազմել է Արևելյան Հայաստանում և Արևելյան Այսրկովկասում հարկերի, տուրքերի և տարբեր հարկադիր աշխատանքների ցուցակը, որը հասնում է 35-ի[206]: Երևանի խանությունում տարածված էին նաև վաշխառուական տոկոսների դիմաց կատարվող աշխա-

202 **Ս. Մարկոսյան,** Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում: Քննական ուրվագծեր, Երևան 1959, էջ 419:

203 Նույն տեղում, էջ 431:

204 Նույն տեղում, էջ 433:

205 Նույն տեղում, էջ 433, **АКТЫ** собраные кавказскую археографическую комиссиею, т. VIII. Тифлис 1881, с. 516. И. **Шопен**, նշվ. աշխ. , էջ 986-987.

206 **И. Петрушевский,** նշվ. աշխ. , էջ 265.

տանքները, երբ վաշխառուն գումարի դիմաց գյուղացու հողը մի քանի տարով վերցնում էր և գյուղացին իր հողի վրա աշխատում էր կիսրարի սկզբունքով[207]: Երևան քաղաքի բնակչությունը քաղաքի գիշերային պաշտպանության կազմակերպման համար պարտավոր էին տարեկան 72 թուման վճարել խանին[208]: Երևանի խանությունում տարածված էր նաև պարսիկների մոտ ընդունված փիշքեշի երևույթը: Փիշքեշը համարվում էր նվեր, որը ենթակաները հանձնում էին իրենց վերադասներին: Սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունների ուսումնասիրումից իմանում ենք որ խանին փիշքեշի հանձնումը կանոնավոր բնույթ է կրել: Ըստ Շոպենի Երևանի խանը տարեկան 890 թուման փիշքեշ էր ստանում[209]: Սկզբնաղբյուրներում հիշատակություններ կան նաև Էջմիածնի վանքի կողմից տարբեր տիրակալների բարեհաճ վերաբերմունքին արժանանալու համար փիշքեշ վճարելու մասին: Այն միշտ չէ, որ գումարի տեսքով էր . 1778թ.-ին Քերիմ խանը հատուկ հրամանագրով Սիմեոն Երևանցուն հայտնում է ստացած փիշքեշի և նրա հանդեպ ունեցած շահական բարեհաճության մասին, թվարկելով նաև, թե ինչ նվերներ է ուղարկել կաթողիկոսը . 39 ձի, 33 ջորի, մեկ հատ ժամացույց, 50 զար ատլաս, 50 զար մետաքս, 30 զար հում մետաքս (աբրիշում), 60 զար մահուդ, 12 հատ դաշույն, 1 կլոր կաթսա, կանաչեղեն, համեմունքներ, 4 մեխակ, 3 սանր, 6 հատ հաշիշի տուփ[210]:

Խանության տնտեսական կյանքում կարևոր էր հատկապես գյուղատնտեսական հողատարածքների ոռոգման կազմակերպումը: Եթե առուն անցնում էր կալվածատիրոջ հողատարածքով, ապա գյուղացիները պարտավոր էին ջրի համար նրան հարկ վճարել[211]: Ջրից օգտվելու համար կռիվները գյուղացիների միջև

[207] **Բ. Հարությունյան**, *Վարձու աշխատանքը Երևանի խանության մեջ XVIII դարում և XIX դարի առաջին քառորդում.* Պատմա-բանասիրական հանդես, № 1, Երևան 1959թ., էջ 84:
[208] **И. Шопен**, указ. соч. с. 978.
[209] Նույն տեղում, էջ974.
[210] **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 96:
[211] **Վ. Գրիգորյան**, նշվ. աշխ. , էջ 52:



սովորական երևույթ էին: Այդ գործը կարգավորելու համար հատուկ պաշտոնյաներ կային՝ միրաբները: Նրանց վարձատրությունը ևս խանության բնակչությունից էր գանձվում: Միայն Երևան քաղաքի բնակիչները պարտավոր էին տարեկան 976 թուման վճարել միրաբներին[212]: Սակայն միշտ չէ, որ միրաբները կարողանում էին ջրի բաշխումն այնպես կազմակերպել, որ գյուղացիների միջև անհամաձայնություններ չլինեին: Նման դեպքերում վիճող կողմերն իրենց իրավունքերը պաշտպանելու համար դիմում էին ավելի բարձր պաշտոնյաների: Նման օրինակներից է Կարբի գետից դեպի Էջմիածին բերված ջրանցքի ջրի բաշխման շուրջ առաջացած խնդիրը, որի լուծման համար Ալեքսանդր կաթողիկոսը խնդրագիր է ներկայացնում Ազատ խանին: Ազատ խանը 1755թ. հունիսի 5-ի հրամանագրով հաստատում է Էջմիածնի վանքի իրավունքները Կարբի գետի ջրի կեսի նկատմամբ[213]: Հատկանշական է այն հանգամանքը, որ Ալեքսանդր կաթողիկոսը խնդրագրին կցել է նաև նախկին միրաբների, մի շարք պաշտոնյաների, այդ թվում նաև Կարբի մահալի մելիք Մելիք Աֆթանդիլի գրավոր վկայությունները ջրի բաշխման վերաբերյալ, որպես ապացույց Էջմիածնի ջրի մի մասի տնօրինության իրավունքի[214]: Հետագայում Էջմիածնի վանքի այս իրավունքը վերահաստատվեց նաև Քերիմ խանի կողմից[215]:

Երևանի խանությունում հիշատակվում է նաև «դարուղա» կոչվող պաշտոնյաների մասին: «Դարուղա» տերմինը ըստ Հ. Փափազյանի մոնղոլական ծագում ունի և այդպես էին անվանում գլխավոր ոստիկանապետին և հարկահանին[216]: Դարուղաները սեֆյան ժամանակաշրջանում համարվում էին շրջանում ոստիկանական իշխանության բարձրագույն ներկայացուցիչը, իսկ կի-

[212] **И. Шопен**, указ. соч. с. 976.
[213] **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 86:
[214] Նույն տեղում, էջ 86-88:
[215] Նույն տեղում, էջ 94:
[216] **Հ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. I. Հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ-ԺԶդդ. ), էջ 108:

սանկախ խանությունների շրջանում նրանք խանի կամ այլ խոշոր ֆեոդալի անունից կառավարողներն էին: Հետագայում դարուղաների ֆունկցիան դարձավ հարկահավաքությունը: Դրա դիմաց նրանք չէին վարձատրվում կալվածատերերի կողմից: Դրա համար նրանց հատուկ հարկ էր վճարվում, որը հայտնի էր չիլյաք անունով և կազմում էր բերքի 1/40-րդ մասը[217]:

Քերիմ խանը 1763/1764թ. հրամանագրով, հաստատելով Սիմեոնի կաթողիկոսական և Էջմիածնի վանքի իրավունքները, նշում է նաև հեծյալ շրջող հոգևորականներին, ուսանողներին և սպասավորներին Իրանի տարածքում. *«սուրհանդակի ձի [հարկը] տալուց մու՚աֆ»* լինելու մասին[218]:

Խանության բոլոր աշխատունակ տղամարդկանցից գանձում էին գլխահարկ: Այդ հարկատեսակը կոչվում էր բաշ-փուլի[219]:

Քրիստոնյաներից գանձվող ջիզյայի հարկը 1736թ.-ին Նադիր շահի կողմից արգելվել էր[220]: Ձնայած ԺԸ. դարի երկրորդ կեսին ջիզյայի հարկի գանձման վերաբերյալ չկա որևէ տեղեկություն, չենք բացառում, որ Նադիր շահի մահից հետո այն կարող էր գանձվել: Փոխարենը ջիզյայի գանձումը Երևանի խաների կողմից արգելելու մասին վավերագրեր կան: Ազատ խանի 1755թ.-ի ռամազան ամսի (հունիսի 11-ից հուլիսի 11-ը) հրովարտակով, վերջինս արգելում է ջիզյայի գանձումն Էջմիածնից[221]:

Ավերված վանքերից ջիզյայի գանձումն արգելելու վերաբերյալ 1756թ.-ի ապրիլին հրամանագիր է արձակել նաև Երևանի Հասան Ալի խանը[222]:

Երկու հրովարտակներն էլ գրվել են Ալեքսանդր կաթողիկոսի խնդրագրի հիման վրա: Երևանի խանությունը ռուսական տիրա-

[217] **И. Петрушевский,** указ. соч., ст. 280.
[218] **Ք. Կոստիկյան,** Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 93:
[219] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ. , էջ 53, **И. Петрушевский,** նշվ. աշխ., էջ 283.
[220] **Աբրահամ Կաթողիկոս Կրետացիոյ,** նշվ. աշխ., էջ 24:
[221] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1339: Տե՛ս հավելված, նկար 14, 15:
[222] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 427: Տե՛ս հավելված, նկար 16, 17:



պետության ներքո անցնելուց հետո այս հարցով հետաքրքրվել են նաև ռուսական իշխանությունները: Այս մասին է վկայում Հայկական մարզի[223] կառավարիչ Ալեքսանդր Ճավճավաձեի և Էջմիածնի կաթողիկոս Ներսես Աշտարակեցու նամակագրությունը: 1828թ.-ի մարտի 22-ին Ճավճավաձեն Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակում գրում է, որ կարգադրություն է ստացել կովկասյան կորպուսի հրամանատար Պասկևիչից. *«տեղեկություններ հավաքել և զեկուցել իրեն, թե արդյոք նախկին կառավարման ժամանակ Երևանի խանության մեջ որևէ հատուկ հարկ գանձվել է հայերից՝ ազատ դավանության համար: Նմանապես և չեն եղել արդյոք այլ անպատշաճ հարկեր, որոնք ներկա կառավարման ժամանակ գոյություն չեն կարող ունենալ:»* Այս նամակին ի պատասխան Ներսես Աշտարակեցին գրում է, որ *«...նախկին կառավարման ժամանակ Երևանի խանությունում հայերից ազատ դավանության համար ոչ մի հարկ չի վերցվել»*[224]: Կարծում ենք Աշտարակեցին կարող էր լիարժեք տեղեկություն չունենալ կամ նպատակահարմար գտներ նման կերպ ներկայացնել: Ազատ խանը 1752թ.-ի հրովարտակով Վաղարշապատ[225] գյուղն ազատում է ավարիզաթ, սաղնրաթ և մալիյյաթ հարկերից[226]: Այս հրովարտակից կարելի է եզրակացնել, որ ԺԸ. դարի երկրորդ կեսին Երևանի խանությունում ամենայն հավանականությամբ գործել են վերոնշյալ հարկատեսակները: Ավարիզաթ էին կոչում գյուղացիության պարտադիր աշխատանքը պատահարների ժամանակ, այն կարող էր փոխարինվել նաև դրամով,

[223] Երևանի խանության Ռուսաստանին միանալուց հետո Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքների հիման վրա կազմվում է Հայկական մարզը՝ 1828-1840թթ.:
[224] **Վ. Գրիգորյան,** Երևանի խանությունը, էջ 54:
[225] Վաղարշապատը հայտնի էր նաև «Ուչքիլիսա» անունով: Տե՛ս **Ք. Կոստիկյան,** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731) Երևան 2005, վավերագիր 38,
[226] **Ք. Կոստիկյան,** Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 78:

սաղերաթը արտակարգ դեպքերի ժամանակ հավաքվող հարկն էր, իսկ մալիյյաթը եկամտահարկն էր[227]:

Երևանի խանության խոշոր կալվածատերերից էր համարվում Էջմիածնի վանքը: Դեռևս 1431 թ. Գրիգոր Մակվեցին Ամիր Ռուստամ Օրբելյանից գնում և Էջմիածնի վանքին վակֆ է անում յոթ գյուղ իրենց ամբողջական վեց դանգ մուլքով: Դրանք հետևյալ գյուղերն էին․ Վաղարշապատ, Աշտարակ, Բաթրինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղենիս-Քիրաշլու, Մուղնի: Գրիգոր Մակվեցու կողմից գնվում են գյուղերն ամբողջությամբ՝ իրենց վարելահողերով, պտղատու այգիներով, ջրաղացներով, ձիթհանքերով և այլն: Վանքին չէին պատկանում այդ գյուղերում գտնվող շարիաթով բացառություն համարվող կառույցները՝ մզկիթներ, գերեզմանատներ, ճանապարհներ և այլն[228]: Սրանք հանդիսանում էին Էջմիածնի մուլքը և համարվելով վակֆային հողեր՝ ազատված էին պետությանը տրվող բոլոր տեսակ հարկերից: Գրիգոր Մակվեցուց հետո Փիլիպոս Ա Աղբակեցի (1633-1655թթ.), այնուհետև Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսները (1655-1680թթ.) գնում են նաև Օշականի վեց դանգ[229] մուլքը[230]: Էջմիածնի կաթողիկոսների դատական իրավասություններին անդրադառնալիս բերեցինք 1722թ. կաթողիկոսի և Օշականի բնակիչների միջև տեղի ունեցած գործարքը, որը քննության ենթարկելով կարևոր տեղեկություն ենք ստանում նաև գյուղի մուլքի պատկանելիության վերաբերյալ: Սիմեոն Երևանցին նշում է, որ Օշականի բնակիչները կաթողիկոսից պարտքով գումար վերցրեցին, քանի որ պատահարներից կամ էլ այլազգիների հարկահանությունից նեղվել և անելանելի վիճակի մեջ են հայտնվել: Գալով Աստվածատուր կաթողիկոսի մոտ՝ նրանից հարյուր հի-

227 Նույն տեղում, էջ 102, 110, 107:

228 **Հ. Փափազյան,** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, կալվածագրեր,պրակ I, (ԺԴ-ԺԶ դդ. ) էջ 66-76:

229 Մեկ գյուղի ամբողջական մուլքը հաշվվում էին 6 դանգ ( նույն դանգն է), հետևաբար 3 դանգը կազմում էր գյուղի կես մուլքը:

230 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, Երևան 2003, էջ 152-153:



սուն թուման են խնդրում՝ այն պայմանով, որ այսուհետ կրկնակի մուլք կտան վանքին:[231] Այսինքն Օշականը, չնայած այդ ժամանակ Էջմիածնի մուլքն էր, հնարավոր է, որ հարկատու է եղել նաև այլ հողատերերին: Օշական գյուղի նման Էջմիածնի Աբրահամ Կրետացի կաթողիկոսը (1730-1734թթ). մահմեդական 1144 (1731/32) թվականին գործարք է կնքել նաև Ֆուանկանոց գյուղի բնակիչների հետ, որոնց վեց հարյուր դուռուշ՝ քառասուն թուման, գումար է տվել[232]: Ըստ Հ. Թորոսյանի գյուղերը վանքի հետ են գործարքի գնացել, քանի որ համարվելով Էջմիածնի մուլքը, պարտքով վերցված գումարի դիմաց միայն վանքին կարող էին երկրորդ մուլք վճարել: Ուրիշները ոչ պարտքի դիմաց, ոչ այլ ձևով չէին կարող գյուղերից մուլք ստանալ[233]:

Էջմիածնի վանքը, բացի վերոնշյալ գյուղերից, Երևանի խանության տարբեր տարածքներում նույնպես այգիներ, ջրաղացներ ուներ, որոնք վանքին վակֆ էին արված: Երևանի բեկլարբեկ Քեյխոսրով խանը (1647-1652) 1647թ.-ի հրամանագրով Էջմիածնի վանքին վակֆ արված այգիների մալոջհաթը և մանր եղջերավոր անասունների չոբանբեկի գումարները Փիլիպոս կաթողիկոսին է նվիրում[234]: Հրամանագրին կցված է վերոնշյալ հարկերից ազատված այգիների և ջրաղացների ցուցակը, որում կարևոր տեղեկություններ կան Էջմիածնին պատկանող այգիների և ջրաղացների, ինչպես նաև դրանցից գանձվող մալոջհաթի և չոբանբեկիի հարկի չափի վերաբերյալ: Այդ ցուցակը որոշակի պատկերացում է տալիս նշված կալվածքներից կատարվող հարկագանձումների մասին, որոնք հրամանագրով անցնում էին Էջմիածնին:

Այս հրամանագիրը վերահաստատվեց նույն Քեյխոսրով խանի 1649թ.-ի հրամանագրով, քանի որ Էջմիածնի այդ այգիներից

231 Նույն տեղում, էջ 156:

232 Նույն տեղում, էջ 158:

233 **Հ. Թորոսյան,** Էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դարերում, Երևան 2007, էջ 118:

234 **Հ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ, պրակ երկրորդ, (1601-1650թթ. ), էջ 127:

և ջրաղացներից շարունակվել էր հարկ գանձվել այլոց կողմից: Չնայած Քելխուսրով խանի երկու հրամանագրերով այս այգիներն ու ջրաղացները հաստատվեցին, որպես Էջմիածնի սեփականություն, 1650թ.-ին Սեֆյան Շահ Աբբաս Բ-ի հրամանագրով նույնպես դրանք հաստատվում են, որպես վանքի վակֆեր: Այդ հրամանագրում նշվում է, որ ոմանք թույլ չեն տալիս կաթողիկոսին տնօրինել այդ այգիներն ու ջրաղացները, ինչպես նաև այլ վայրերում Էջմիածնին պատկանող սեփականությունը: Շահն ի պատասխան Փիլիպոս կաթողիկոսի խնդրագրի հրամայում է, որպեսզի․ *«Չուխուր-Սաադի բեկլարբեկը... տեղի սրբազան շար՚ի անդամների ներկայությամբ իրողությանը վերահասու լինի և եթե պարզվի, որ ոմանք հակառակ լուսավոր շար՚ի հիշյալ վակֆերը բռնագրավել են, շարիաթական «ապացույցից և անհրաժեշտությունից» հետո, կարգադրեն որպեսզի նրանց ապօրինի սեփականությունը վերացվի և համաձայն լուսավոր շար՚ի դրանք տրվի յուրաքանչյուր վայրի տնօրենի...»*[235]:

Որոշ սկզբնաղբյուրների՝ շահական հրամանագրերի, հարկացուցակների ուսումնասիրումից պարզվում է, որ Էջմիածնի վանքը մինչ Նադիր շահը և՛ պարսկական և՛ թուրքական տիրապետությունների օրոք ջիզյայի հարկ է վճարել: Պարսկական տիրապետության օրոք Էջմիածնի կողմից ջիզյա վճարելուն է վերաբերում Շահ Աբբաս Բ-ի 1645թ.-ի հրամանագիրը, որով վերջինս հրամայում է ջիզյան գանձել սահմանված չափով, ոչ ավել[236]: Թուրքական տիրապետության ժամանակ Էջմիածնի վանքը իրեն ենթակա օբյեկտները հարկերից ազատելու համար ստիպված էր տարեկան որոշակի գումար «բերաթի փեշքաշի» տեսքով վճարել[237]: Նադիրը 1735թ.-ի հրամանագրով հաստատում է Էջմիածնի վանքի մուաֆությունը և 17 թավրիզի թուման 5000 դինար հարկ սահմանում Երևանի մեջ մտնող տասնյոթ վանքերի խարա-

[235] **Հ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ, պրակ երկրորդ, (1601-1650թթ. ), էջ 137-139:

[236] Նույն տեղում, էջ 118:

[237] **Հ. Փափազյան**, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728թ թուրքական հարկացուցակները, էջ 438:



ջի և ջիզյայի փոխարեն[238]: Հասան Ալի խանը 1755թ հրամանագիր է արձակում ի պատասխան Ալեքսանդր կաթողիկոսի



[238] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 354, **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 35-36:

խնդրագրի և այդ վանքերն ավերված լինելու պատճառով ազատ-վում են 17 թավրիզի թումանն 5000 դինար հարկից[239]:

Մինչ այդ նույն տարում Ալեքսանդր կաթողիկոսը 10-15 վանքեր հարկերից ազատելու խնդրանքով դիմում է Ազատ խանին: Վերջինս Երևանի բեկլարբեկին և ամիլներին հրահանգում է այդ եկեղեցիների սպասավորներին, ովքեր հողագործությամբ են զբաղվում, չնեղել և հարկեր չպահանջել[240]: Նադիր շահի, Հասան Ալի և Ազատ խաների վերոնշյալ հրովարտակների ուսումնասիրությունից հասկանում ենք, որ կարճ ժամանակահատվածում Երևանի խանությունում տիրող պատերազմական, տնտեսական, քաղաքական իրադրության և ժողովրդագրական փոփոխությունների արդյունքում թվով 17 վանք հավանաբար ավերված էին: Նշվում են այդ վանքերի անունները. Սևանավանք, Կեչառիս, Վիրապի վանք, Քորք (Ս. Գեղարդ), Կըզըլվանք (Հավուցթառի վանք), Աղջ[ոց]վանք (Աղջոց Ս. Ստեփանոս), Գյոքչայի վանք, Չալկ[ղ]աթարան վանք, Բջնի, Գյումեշ, Սար[ղ]մոսավանք, Ուշի, Մուղնի, Դիր (Տեղեր), Անաբադ, Հնավանք (Հնեվանք), Կոշ, Օհանավանք[241]:

Նադիր շահից հետո Իրանում սկսված խառնակ ժամանակահատվածում Էջմիածնի կաթողիկոսներն իրենց կալվածքներն ու իրավունքները պահպանելու համար Իրանի տարբեր գահակալներին և Երևանի խանությունում իշխող տիրակալներին էին դիմում նախկին շահերի կողմից հաստատված կալվածքներն ու արտոնությունները վերահաստատելու համար: Այսպես 1748թ. -ին Իբրահիմ շահի հրամանագրով Վաղարշապատի մութավաջջեհաթը հանկացվում է վանքի սպասավորներին, ինչի շնորհիվ վանքին պատկանող այգիները, ջրաղացները, դինգերը, ձիթհանները, քոքրաներ, բաղնիքները խանութները մավաշի և մարա՛ի կանխիկ գումարով ու բնամթերքով վճարվող հարկերից ազատ-

239 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1զ, վավ. 893:

240 **Ք. Կոստիկյան,** Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 81-82:

241 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1338: Տե՛ս հավելված, նկար 18, 19:



վում են, ինչպես Նադիրի շահի օրոք է եղել[242]: Մեկ տարի անց այլ հրամանագրով Իբրահիմ շահը Ղազար Ա Ջահկեցի կաթողիկոսին (1737-1751) ծանուցում է, որ Էջմիածնի վանքին պատկանող չորս գյուղերի կապակցությամբ Երևանի տեղական իշխանություններին կարգադրվել է նրան նեղություն չպատճառել: Հրամանագրի հակառակ կողմում հայերեն մեկնաբանության մասում նշվում են այդ գյուղերի անունները՝ Էջմիածին, Օշական, Ֆռանկանոց և Մաստարա[243]: Այսինքն տվյալ ժամանակ միայն վերոնշյալ գյուղերն էին պատկանում Էջմիածնին: 1751թ.-ին Ազատ խանը Էջմիածնի մուլքերի հողղուղ-ե-դիվանին և մութավաջջեհաթը վերահաստատում է և պատվիրում է, որպեսզի նույն կերպ այն ծախսեն այնտեղի սպասավորների, վանականների կարիքների համար[244]: 1752թ.-ի հրամանագրով Ազատ խանը Երևանի հաքիմին,[245] ամիլներին և մելիքին կարգադրում է Վաղարշապատ գյուղի բնակիչներին ազատված համարել մի շարք հարկատեսակներից՝ պարտադիր աշխատանքերից, արտակարգ իրավիճակներում գանձվող հարկից և մալից[246]: Հրամանագրում միայն Վաղարշապատ գյուղի նշված լինելն ամենայն հավանականությամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ժամանակ միայն Վաղարշապատն էր Էջմիածնին պատկանող գործուն մուլքերից: Վանքին նախկինում պատկանող մնացած գյուղերը՝ Օշականը, Ֆռանկանոցը (Ամբերդ)[247], Մաստարան, Քիրաշլու, Դիպակլուն և Քեշիշքյանդը (Եղեգնաձոր)[248], որոնք Նադիր շահի հրամանով

242 **Ք. Կոստիկյան,** Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 72: Մավաշին այծեր, ջորիներ ու ավանակ պահելու համար գանձվող հարկն էր, իսկ մարա՛ին վճարվում էր արոտավայրերից օգտվելու ու ոչխար և այծ պահելու համար; Տե՛ս նշվ. աշխ. էջ 107:

243 Նույն տեղում, էջ 75-76:

244 Նույն տեղում, էջ 76:

245 Տվյալ հրամանագրում հաքիմ կոչման տակ պետք է նկատի ունենալ Խալիլ խանին՝ որպես Երևանի խանության բեկլարբեկ, այսինքն բացարձակ իշխանություն ունեցող կառավարիչ:

246 **Ք. Կոստիկյան,** Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 78:

247 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, ցուցակ 1, Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Երևան 1986, էջ 524:

248 Նույն տեղում, էջ 349:

հաստատվել էին որպես Էջմիածնի վանքին պատկանող գյուղեր[249] Ազատ խանի օրոք կամ չեն պատկանել Էջմիածնին, կամ ավերված են եղել: Մի շարք աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանց մի մասն ավերված է եղել, մի մասն էլ խլված է եղել վանքից: Սիմեոն Երևանցին իր «Ջամբռ» աշխատությունում անդրադառնալով Օշական գյուղին, նշում է, որ այն վանքին է վերադարձվում 1768թ.-ին, իսկ մինչ այդ այն գրավվել էր մուղանլու կոչվող տաճիկ ցեղի կողմից, որից հետո տեղի բնիկները վտարվել էին և գյուղը, քսան տարի մնալով տաճիկների վերահսկողության տակ, վանքին ոչ մի տեսակ հարկ չէր տալիս[250]: Այսպիսով համաձայն Սիմեոն Երևանցու բերած տեղեկությունների Օշականը 1748-1768թթ-ը դուրս է եղել վանքի վերահսկողությունից: Նույն աղբյուրի համաձայն Նադիրի մահից հետո, երբ *«Երևանը խռովության մեջ ընկավ, Փռանկանոցն ամբողջովին ամայացավ բնակիչներից*[251]: Էջմիածնի մուլքերի մի մասի ավերված լինելու մասին է վկայում նաև Ազատ խանի 1753թ.-ին հրապարակված հրամանագիրը, որով Ազատ խանը վանքի ավերված մահալներն ազատում է հարկերից[252]:

Ազատ խանի կողմից հետագայում արձակված մի քանի հրամաններից տեղեկանում ենք, որ Խալիլ (1752-1755թթ) խանի իշխանության տարիներին Էջմիածնի կաթողիկոսները խնդիրներ են ունեցել ինչպես հարկային արտոնությունների պահպանման հետ կապված հարցերում, այնպես էլ Ազատ խանի կողմից Երևանի բեկլարբեկ նշանակված Խալիլ խանի գործունեության հետ: 1755թ.-ի հրամանագրի համար հիմք է հանդիսանում Ալեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսի (1753-1755) խնդրագիրը: Հրամանագրում ասվում է, որ Նադիր շահի օրոք Էջմիածնի հարկերը հաշվել են 10 թավրիզի թուման 7000 դինար և 66 խարվար հացահատիկ: Սակայն Խալիլ խանի օրոք Էջմիածնի բերքի նոր չափագրումներ են իրականացվել և նախկին թվին ավելացվել է

[249] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, նշվ. աշխ., էջ 152:
[250] Նույն տեղում, էջ 157:
[251] Նույն, տեղում, էջ 158:
[252] **Ք. Կոստիկյան,** Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 79:



10 թուման 41 թավրիզի խարվար: Ազատ խանը հրահանգում է, որ ավելացումները չեղյալ համարեն և հաշվարկն անեն այնպես, ինչպես հաստատված է եղել Նադիրի ժամանակ[253]: Էջմիածինը վերոնշյալ հարկը վճարում էր ոչ վակֆային տիրույթներից: Դրանք հարկերից մուաֆ էին լինում մասնակի: Սա մուաֆության այն տեսակն էր, որի ժամանակ բահրան մասնակի էր ապահարկ: Հարկի չափը որոշվում էր սերմանելիքի որոշակի քանակի շրջանակում, այսինքն շատ ցանելու դեպքում ավելորդից պետք է հնգորդ կամ դրան համարժեք վճարեին[254]: Իսկ Էջմիածնի վանքը, բացի Գրիգոր Մակվեցու կողմից որպես վակֆ ստացած յոթ գյուղերից, այլ գյուղեր ևս ուներ, որոնցից մուլք էր վերցնում, սակայն դրանք վակֆ չէին և ենթակա էին ստարմա[255]: Ազատ խանի 1755թ.-ի ռամազան ամսի (հունիսի 11-ից հուլիսի 11-ը) Խալիլ խանին ուղղված հրամանագրից տեղեկանում ենք, որ Խալիլ խանը շարունակել է նեղություն պատճառել Ալեքսանդր կաթողիկոսին: Համաձայն Էջմիածնի հոգևորականության և կաթողիկոսի տեղապահի անունից գրված խնդրագրի *«Չոխուր Սաադի*[256] *բեկլարբեկ Խալիլ խանն արդեն 12 օր է, ինչ վանքում է մնում և նրա զինվորների հիրաջաթն ու սոյուրսաթը նրան վճարում են, ուստի պետք է, որ վերոհիշյալը անօրինական պահանջներ չունենա»*[257]:

Ազատ խանը հրահանգում է անհանգստություն չպատճառել Էջմիածնի վանքին: Մեզ հասանելի սկզբնաղբյուրներում տեղեկություն չկան այս հրովարտակի հետևանքների մասին: Էջմիածնի կալվածքների նկատմամբ ոտնձգությունները շարունակվեցին նաև Երևանի մյուս խաների օրոք: 1760 թ. Ալեքսանդր վարդա-

[253] Նույն տեղում, էջ 83:
[254] **Հ. Թորոսյան,** նշվ. աշխ., էջ 109:
[255] Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք էջմիածնի վանքը տիրել է 23 վանքի, որից 12-ին ամբողջական կամ մասնակի վակֆային իրավունքով, իսկ մնացածին զանձագին մուլքի (ստարման ենթակա) իրավունքով : Տե՛ս **Հ. Թորոսյան,** նշվ. աշխ., էջ 107
[256] Մեր ուսումնասիրման ժամանակաշրջանին վերաբերվող պարսկալեզու սկզբնաղբյուրներում Երևանի խանությունը կոչվում էր նաև Չոխուր Սաադի բեկլարբեկություն:
[257] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1 Է, վավ. 1344: Տե՛ս հավելված, նկար 20, 21:

պետ վանահայրը կաթողիկոս Հակոբ Ե Շամախեցուց (1759-1763թթ.) գաղտնի Մուղնի գյուղի մուլքը տալիս է Հուսեյն Ալի խանի նազիր Իբրահիմ աղային, որ վերջինս անհրաժեշտության պահին օգնական և պաշտպան լինի նրան[258]: Էջմիածնին պատկանող մնացած գյուղերը նույնպես տարբեր ժամանակներում տարբեր հանգամանքների բերումով դուրս էին եկել Էջմիածնի կալվածքներից: Արդյունքում, երբ Սիմեոն Երևանցին կաթողիկոս դարձավ (1763-1780թթ.), միայն Վաղարշապատն էր մնացել Էջմիածնին: Սակայն Սիմեոն Երևանցին կարողանում է տևական պայքարից հետո աստիճանաբար վերադարձնել նախկինում Էջմիածնին պատկանած կալվածքները: Նախ Սիմեոն Երևանցին կաթողիկոս ընտրվելուց հետո պատվիրակություն է ուղարկում Քերիմ խանի մոտ, իր կաթողիկոսական և Էջմիածնի կալվածատիրական իրավունքները հաստատելու համար: Քերիմ խանը 1763թ. հրամանագիր է արձակում, որով հաստատում է Սիմեոնի կաթողիկոսական և Էջմիածնի 14 կետից բաղկացած իրավունքները[259]:

1768թ. Սիմեոն Երևանցին իմանում է Ալեքսանդր վարդապետի և Իբրահիմի միջև Մուղնու վերաբերյալ տեղի ունեցած անօրինական գործարքի մասին և Գրիգոր Մակվեցու սեփականագրով հաստատելով, որ այդ գյուղը վանքին է պատկանում, ետ է ստանում այն[260]: Սիմեոն Երևանցի փորձում է վանքին վերադարձնել նաև Ֆոանկանոց գյուղը: Այն 1760 թվականի դրությամբ պատկանում էր Էջմիածնին: Սակայն Երևանի Հուսեյն Ալի խանը, ավերված գյուղը բնակեցնելու պայմանով կարողանում է կաթողիկոս Հակոբ Շամախեցու (1759-1763) հետ պայմանավորվել և այդ գյուղի երեք դանգ մուլքը իրեն վերցնել: Սակայն խանը գյուղը շենացնելուց հետո վերցնում է ամբողջ վեց դանգ մուլքը: Սիմեոն Երևանցին կարողանում է 1768թ.-ին Հուսեյն Ալի խանից վերցնել Ֆոանկանոցի երեք դանգը: Սակայն այն երկար չի մնում Էջմիած-

258 **Հ. Շահխաթունյանց**, Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, հտ. 1, էջ 135:

259 **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 93:

260 Սիմեոն կաթողիկոս Երևանցի, նշվ. աշխ., էջ 165



նի տնօրինության ներքո: Հուսեյն Ալի խանն իրեն պատկանող Քյուլթափա գյուղի վեց դանգը տալիս է Էջմիածնին, փոխարենը ետ ստանում Ֆոանկանոցի երեք դանգը և ամբողջովին տիրում գյուղին[261]:

Այսպիսով, Սիմեոն Երևանցին կարողանում է խանական իշխանություններից կողմից ստացված հրովարտակների շնորհիվ Էջմիածնի վանքին վերադարձել նախկինում վանքին պատկանած կալվածքներն ու իրավունքները: Կաթողիկոսին դա չէր հաջողվի առանց հողերը վանքին պատկանելու վերաբերյալ նախկին հրովարտակների ու կալվածագրերի: Ուստի հենց այս պարագայում է հասկանալի դառնում, թե խնդրո առարկա ժամանակաշրջանում Էջմիածնի վանական տնտեսության համար որքան կարևոր էին Երևանի խաների հրովարտակները:

261 Նույն տեղում, էջ 169: Փոխանակման փաստաթուղթը տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 931:

**ԳԼՈՒԽ III.**

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ 1750-1770-ԱԿԱՆՆԵՐԻՆ

## 3.1. Երևանի խանությունը տարածաշրջանային քաղաքական իրադրությունում 1750-1770-ականներին

Նադիր շահի սպանությունից (1747թ.) հետո Իրանում տևական ժամանակ պայքար ծավալվեց գահի հավակնորդների միջև, և երկրում գոյություն չուներ կենտրոնացված պետական իշխանություն: Նման հանգամանքներում Իրանի հյուսիսում և Հարավարևելյան Կովկասում կիսանկախ կարգավիճակ ձեռք բերեցին Երևանի, Նախիջևանի, Խոյի, Մակուի, Ղարադաղի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի, Դերբենդի,[262] Բաքվի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի, Արդաբիլի, Մարաղայի, Սավուջ-Բուլաղի, Ղարաբաղի իշխանությունները, որոնք հայտնի են խանություն, սուլթանություն անվանումներով: Վերջիններս տարածաշրջանի տարբեր պետական միավորների հետ հարաբերություններում հիմնականում անկախ էին[263]: Իրանում կենտրոնացված պետական իշխանության բացակայության պայմաններում դրանք սկսեցին միմյանց հետ պայքարել իրենց իշխանությունն ու տիրույթները ընդլայնելու, մեկը մյուսի նկատմամբ գերագահության հասնելու համար:

Երևանի խանության հարստությունն ու բերդի անառիկությունը գրավում էին տարբեր նվաճողների ուշադրությունը: Թերևս դա էր պատճառը, որ Նադիր շահի սպանությունից հետո այն ենթարկվեց Իրանի գահի համար պայքարող տարբեր հավակնորդների հարձակմանը: 1749թ. Մուհամմադ խանը, որը,

262 1765թ. հետո այն միացվում նաև Դերբենդի խանությանը:

263 **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 29:



ըստ վրաց պատմիչ Պապունա Օրբելիանիի հաղորդման, Նադիր շահին դավաճանությամբ սպանողներից մեկն էր,[264] հարձակվում է Երևանի վրա: Մուհամմադ խանի այս արշավանքի մասին արժեքավոր տեղեկություններ է հայտնում թուրք պատմիչ Սուլեյման Իզզին, իր «Թարիխ-և Իզզի» աշխատությունում[265]: Ըստ վերջինիս հաղորդման Երևանից Մուհամմադ խանին ընդառաջ է դուրս գալիս տեղում շահի[266] ներկայացուցիչ Հասան Ալի բեկը: Սակայն Ուլուխանլու կոչված վայրում[267] տեղի ունեցած ընդհար-

264 **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան 1955, էջ 127:

265 **Ա. Սաֆրաստյան,** նշվ. աշխ., էջ 186-213: Այս աշխատությունում նշված դեպքերի ժամանակագրությունը ներկայացվում է երկու թվագրությամբ՝ գրիգորյան 1752թ. և հիջրայի 1162թ.: Այստեղ հակասություն կա, քանի որ հիջրայի 1162թ. համապատասխանում է գրիգորյան 1748-1749թթ., ուստի պետք է կարծել, որ վերոնշյալ 1752թ. ուղղակի վրիպակ է և որպես հիմք ընդունել հիջրայի 1162թ.՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ բնագրում նշված է հիջրայի թվականը:

266 Մենք չենք կարող նշել թե այդ ժամանակ ում ներկայացուցիչն էր Հասան Ալի բեկը, քանի որ Նադիրից հետո 1747թ. հուլիսի 6-ին ղզլբաշական ցեղերի խաները շահ հռչակեցին Նադիրի եղբորորդի Ալի Ղուլիին, որն ընդունեց Ադիլ շահ անունը: Տե՛ս **A. A. Amin,** The British Interest in The Persian Gulf, Leiden, E. J. Brill, 1967, p. 25. Ադիլը կարճ կառավարեց. նրա դեմ ապստամբեց իր եղբայր Իբրահիմ միրզան, ով 1748թ դեկտեմբերի 8-ին շահ հռչակվեց: Մինչ այդ հոկտեմբերի 1-ին Մեշհեդում տեղակայված զորքերի հրամանատարների կողմից գահ բարձրացվեց Նադիրի 14-ամյա թոռ Շահռուխը, ում մարդկանց կողմից դեկտեմբերին ձերբակալվեց Իբրահիմ շահը: Սակայն դրանով Իրանում չավարտվեցին շահական գահի համար մղվող մարտերը: Շահռուխը չուներ ուժեղ իշխանություն, ուստի շարունակվում էր պայքարը գահի տարբեր հավակնորդների միջև (Տե՛ս **Վ. Բայբուրդյան**, Իրանի պատմություն, Երևան, 2006, էջ 382-385): Այս համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև Քարթլիի և Կախեթի տիրակալներ Թեյմուրազի և Հերակլ Բ-ի հետ Շահռուխի հարաբերություններին: Վերջինս 1750թ. հրովարտակով Թեյմուրազին հաստատում է Իրաքի և Հարավային Կովկասի զինավոր հրամանատար: Տե՛ս. **В. Путуридзе,** Тбилиская колекция персидских ферманов, т. I, Кутаиси 1995, с. 1995. Շահռուխը իրեն շահ հռչակելուց հետո գալիս է Սպահան և նամակ գրում Հերակլ Բ-ին, որ իր կողմն անցնի և 30 000 ռուբլի ուղարկում: Տե՛ս Материали для новой истории Кавказа **П. Буткова,** ч. 3, хронологический и алфавитныи указатели, составленые Л. Броссе, Санктпетербург 1869, ст 88.

267 Այժմյան Մասիս քաղաքի շրջակայքում:

ման ժամանակ Մուհամմադ խանը հաղթում է Հասան Ալի բեկի զորքին և ձերբակալում վերջինիս[268]: Երևանի Հուսեյն խանը ստիպված օգնության խնդրանքով դիմում է Քարթլիի թագավոր Թեյմուրազ Բ-ին (1744-1762թթ.)՝ խոստանալով 100. 000 դուկատ: Վերջինս իր որդի Կախեթի թագավոր Հերակլ Բ-ի հետ զորքով գալիս է օգնության և Երևանի բերդի մոտ տեղի ունեցած մարտում հաղթում Մուհամմադ խանին: Այնուհետև Հերակլ Բ-ը, հետապնդելով Մուհամմադ խանին, ավերում է նրա բնակավայրը,[269] ազատում շահի ներկայացուցիչ Հասան Ալի բեկին, մեծ ավար ձեռք բերում և վերադառնում Երևան: Սակայն Երևանի Հուսեյն խանը Թեյմուրազ Բ-ին չի թողնում մտնել Երևանի բերդ՝ նշելով, որ դրա համար Թեյմուրազ Բ-ը պետք է շահից թույլտվություն ստանա: Թեյմուրազ Բ-ը չի շտապում հեռանալ և որոշ ժամանակ մնալով Երևանի խանության տարածքում՝ ավերի ու թալանի է ենթարկում տարբեր ցեղերի՝ սկսելով հավաքել նախապես իրեն խոստացված 100.000 դուկատը[270]:

Վրաց պատմիչ Պապունա Օրբելիանին, նկարագրելով Թեյմուրազ Բ-ի և Հերակլ Բ-ի արշավանքը Մուհամմադ խանի դեմ, նշում է, որ Թեյմուրազը գրավում է Մուհամմադի բերդը, ազատում Երևանի խանի եղբորը և մեծ ավար ձեռք բերում, որից 5000 թումանը[271] տալիս է Երևանի խանին, նույնքան էլ բաժանում իր

[268] **Ա. Սաֆրաստյան**, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հատոր Ա, Երևան 1964, էջ 203:

[269] Մուհամմադ խանի բնակավայրի վերաբերյալ տարբեր են աղբյուրների հաղորդած տեղեկությունները. ըստ Սուլեյման Իզզիի Մուհամմադ խանի բնակավայրը Քերենն էր, սակայն հեղինակը չի նշում բնակավայրի գտնվելու վայրը (տե՛ս Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 203): Ըստ վրաց պատմիչ Օհան Խոնխոսուլիձեի Մուհամմադ խանը Երևանի մոտ պարտվելուց հետո փախավ Ղարաբաղ, քանի որ այնտեղ Խորվիրապի (Խարզվիրաբի) բերդն ամրացրել էր: Մեկնաբանելով Օհան Խոնխոսուլիձեի հաղորդած տեղեկությունը՝ Լ. Մելիքսեթ-Բեկը նշում է. *«Ասվ է հին Արտաշատի տեղում, որ, ի հարկէ, ոչ մի կերպ չի կապվում Ղարաբաղի (կամ գուցե Ղարադաղի) հետ, ինչպես Օհան Խոնխոսուլիձեն է նշում: Հավանական է, որ այստեղ գործ ունենք մի ինչ որ lapsus-ի հետ»*: Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 172, էջ 181:

[270] **Ա. Սաֆրաստյան**, նշվ. աշխ., էջ 203:

[271] Թումանը (բառացի տաս հազար) դրամական միավոր է, որը տարբեր վայրերում տարբեր արժեք է ունեցել: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին



զորքին[272]: Այնուհետև վրաց թագավորները շարժվում են դեպի Գանձակ, որտեղի Շահվերդի խանը օգնության խնդրանքով դիմել էր նրանց՝ Փանահ խանի դեմ պայքարելու համար: Գանձակում հաղթելով Փանահ խանին՝ նրանք վերադառնում են Թիֆլիս: Այստեղից Երևանի խանի հետ Երևան են ուղարկում Ջագա Թարխնիշվիլուն, իբրև հյուրընկալի (մեյմանդար)[273]:

Այս ամենից պետք է եզրակացնել, որ չնայած Երևանի Հուսեյն խանը վրաց թագավորներին թույլ չի տալիս մտնել Երևանի բերդը, այնուամենայնիվ նրանց միջև որոշակի համաձայնություն էր կայացել և Ջագա Թարխնիշվիլին ամենայն հավանականությամբ պետք է լիներ Երևանում վրաց թագավորների ներկայացուցիչը և հետևեր, որպեսզի Երևանի խանի կողմից հակավրացական քայլեր չիրականացվեին: Որոշ ժամանակ անց Ատրպատականի Ազատ խանը հարձակվում է Երևանի վրա: Երևանի խանությանը տիրելու համար Ազատ խանի և Հերակլ Բ-ի միջև սկսվեց համառ պայքար, որի ընթացքում նրանցից յուրաքանչյուրը հաջողության դեպքում իր թեկնածուին էր հանձնում Երևանի կառավարումը:

Ե՛վ Հերակլը, և՛ Ազատ խանը նշված ժամանակահատվածում մեծ ազդեցություն և առանցքային դերակատարում ունեին Իրանի քաղաքական կյանքում: Հերակլ Բ-ը Նադիրի մահից հետո Հարավարևելյան Կովկասում վարելով ակտիվ քաղաքականություն՝ նշանակալի հաջողությունների էր հասել: Իսկ Ազատ խանը, ով պայքարում էր Իրանի շահ դառնալու համար, կարողացել էր իր իշխանությունը տարածել Ատրպատականում և Իրանի հյուսիսային այլ շրջաններում[274]: Երկու գործիչներն էլ նպատակ

Թավրիզի թումանը արժեր 3 ռուբլի 8 կոպեկ, Թիֆլիսինը՝ 10 ռուբլի, Երևանինը՝ 3 ռուբլի 76 կոպեկ (Տե՛ս Հ. Աբրահամյան, Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, Երևան 1941, էջ 180): Հերակլ Բ-ի Երևանի խանին տրված թումանը հայտնի չէ, թե ինչպես է հաշված, սակայն հաշվի առնելով դրա մեծությունը, կարելի է ենթադրել, որ դա եղել է Թավրիզի կամ Երևանի 5000 թուման:

[272] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 129:

[273] Նույն տեղում, էջ 130:

[274] J. Perry, Karim Khan Zand, Oxford, 2006, p. 31.

ունեին իրենց ազդեցությունը տարածել և ամրապնդել Հարավարևելյան Կովկասում: Ազատ խանը, խուսափելով բախումից և ցանկանալով իր ուժերը կենտրոնացնել բուն իրանական տարածքներում մղվող պայքարում, վրաց թագավոր Թեյմուրազին առաջարկում է դաշինք կնքել և այն ամրապնդել ամուսնական կապով: Վերջինիս կողմից մերժում ստանալուց հետո 1751թ.-ին նա 30 000-անոց զորքով հարձակվում է Երևանի վրա: Ըստ Պ. Բուտկովի մինչ այդ Ազատ խանը տիրել էր Խոյին, Սալմաստին, Ուրմիային և Թավրիզին[275]: Պապունա Օրբելիանիի հաղորդման համաձայն Ազատ խանի առաջին հարձակման ժամանակ Երևանի խանը օգնության խնդրանքով դիմում է վրաց թագավորներին[276]: Օգնության դիմաց Երևանի Հասան Ալի խանը խոստանում է նրանց հարկ վճարել[277]: Հերակլ Բ-ն օգնության է գալիս: Երևանի մոտ տեղի ունեցած բախմանը մասնակցում է նաև բերդի պարսկական կայազորը: Այս բախումն ավարտվում է Ազատ խանի պարտությամբ[278]: Բացի այս ճակատամարտից Հերակլ Բ-ի և Ազատ խանի զորքերի միջև մեկ այլ, առավել փոքր բախման մասին է վկայում Ստեփանոս Հազարջրբեցին: Ըստ նրա այն տեղի է ունեցել Դովրակի[279] մոտ և կրկին ավարտվել է Ազատի պարտությամբ[280]: Որոշ սկզբնաղբյուրների համաձայն Ազատ խանի նկատմամբ ունեցած այս հաջողություններից հետո Հերակլ Բ-ը կարողացել է արշավել և իր ազդեցության տակ առնել նաև Թավրիզը[281]:

275 **П. Бутков**, Материали для новой истории Кавказа, с 1722 по 1803 года,ч. 1, Санктпетербург 1869, с. 238.
276 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 127:
277 [Բարսեղ Սուքրունենանց], նշվ. աշխ., էջ 278:
278 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 136-137: Անդրադառնալով այս իրադարձություններին, Բուտկովը նշում է, որ Հերակլ Բ-ը կարողացել է իր ազդեցության ներքո առնել նաև Թավրիզը: Տե՛ս **Л. Broссе**, Материали для новой истории Кавказа, с 1722 по 1803 год, **П. Г. Буткова**, Хронологиясский и алфавитный указатель, ч. III, Санктпетербург 1869, с. 88.
279 Հնարավոր է խոսքն Էջմիածնի շրջանի Դոլիա Խարաբա գյուղի մասին է:
280 **Ս. Հազարջրբեցի**, Պատմություն Պարսից, 1786, էջ 87ա:
281 Հնդիկներից Մ. Պեյտոնի հիշատակության մասին տե՛ս **Մ. Զուլալյան**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի



Այսպիսով, Հերակլ Բ-ը, առավելության հասնելով Ազատ խանի նկատմամբ, Երևանը վերցնում է իր ազդեցության ներքո և այնտեղ զորք թողնելով՝ հեռանում է[282]: Մինչ հեռանալը նա մի շարք հրամանագրեր է արձակում տեղի գործերը կարգավորելու համար: Դրանցից մեկով նա հաստատում է Էջմիածնի վանքի հոգևորականության մուաֆության իրավունքը: Հրամանագրի կատարումը հանձնարարվում է *«բարձրաստիճան բեկլարբեկի հանձնակատարին»*՝ չնշելով որևէ անուն[283]: Նոր բեկլարբեկի վերաբերյալ տեղեկություն է հաղորդում Պապունա Օրբելիանին, ով նշում է, որ վրաց արքան, փոփոխություններ իրականացնելով խանության դիվանում, Երևանի բեկլարբեկությունը շնորհել է նախկին հազարապետ Աբդուլ խանին, Երևանի և Ղազախ-Բորչալուի զորքերի հրամանատարությունը հանձնել է Բահման խանին[284]:

Հերակլ Բ-ի հաջողությունները ժամանակավոր բնույթ էին կրում: Աֆղանները կարողանում են հարձակվել և ավերել Նախիջևանը, որտեղ վրացիները չկարողացան նրանց դիմադրել[285]: Վրաց արքաները, Գանձակի մոտ բախվելով աֆղաններին դաշնակից լեզգիների 12000-անոց բանակի հետ՝ պարտություն են կրում և տալիս 3-4 հազար զոհ[286]: Սակայն Հերակլ Բ-ը կարողանում է վերակազմավորել իր ռազմական ուժերը և 1752թ. օգոստոսին անցնում է հակահարձակման: Բորչալուի մոտակայքում տեղի ունեցած վճռական ճակատամարտում նա կատարյալ հաղթանակ է տանում[287]: Ազատ խանը մինչ այդ Հերակլ Բ-ի կողմից

հեղինակների, Գիրք Ա, Քաղաքական պատմություն, Երևան 1990, էջ 227: Նույն տեղեկատվությունը հաղորդում են նաև Բուտկովը, **Л. Броссе**, նշվ. աշխ. , էջ 88, և Ջոն Փերին. **J. Perry**, Karim Khan Zand: A History of Iran 1747-1779, 1979, University of Chicago Press, p. 49.
282 **Л. Броссе.**, նշվ. աշխ. , էջ 88.
283 **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ. պրակ չորրորդ, էջ 77:
284 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 138: Սկզբնաղբյուրներում տեղեկություն չկա Հասան Ալի խանից բեկլարբեկությունը վերցնելու և Աբդուլ խանին հանձնելու պատճառների վերաբերյալ:
285 **Մ. Զուլալյան**, նշվ. աշխ., էջ 228:
286 Նույն տեղում, էջ 230:
287 **Մ. Զուլալյան**, նշվ. աշխ., էջ 230

Երևանի խան նշանակված Աբդուլ խանին իր մոտ էր կանչել ու ձերբակալել՝ նրա փոխարեն խան նշանակելով Հասան Ալի խանին *«որը նրանից առաջ էր խան»*.[288]

Վերոնշյալ իրադարձություններից հետո կողմերը դադարեցնում են մրցակցությունը և միմյանց հետ դաշինք են կնքում[289]: Պապունա Օրբելիանին այս մասին նշում է, որ 1752 թ. Հերակլ Բ-ը Ջեյդալ բեկին ուղարկում է Երևան՝ Ազատ խանի հետ բանակցելու: Անդրադառնալով բանակցությունների արդյունքին՝ հեղինակը հայտնում է հետևյալը. *«Ազատ խանի չափարն եկավ, արքաներին մատուցեց դաշինքի և հաշտության գիրը»*[290]: Հաշտության պայմանների վերաբերյալ Մ. Պեյսոնելի ներկայացրած սկզբնաղբյուրներում հանդիպեցինք որոշակի տեղեկատվություն: Համաձայն դրա՝ աֆղանները պարտավորվում էին այլևս չանցնել Արաքսը և չասպատակել Երևանի խանության տարածքը[291]:

Հերակլ Բ-ի և Երևանի խանի հետագա հարաբերությունների վերաբերյալ հայտնի է հետևյալը. 1752թ. սկզբին Թեյմուրազը արշավանքի է դուրս գալիս Գանձակի Շահվերդի խանի դեմ, քանի որ վերջինս հրաժարվել էր հարկ վճարել արքային[292]: Շահվերդի խանին օգնության շտապեց Շաքիի Հաջի-Չելեպի Խանը և ապրիլի 12-ին տեղի ունեցած բախման ժամանակ նրանք պարտության մատնեցին Թեյմուրազին: Պ. Բուտկովի կողմից Թեյմուրազի պարտության պատճառներից մեկը նշվում է Երևանի խանի դավաճանությունը[293]: Այսինքն Երևանի խանը մասնակցում էր Շահվերդի խանի դեմ վրաց թագավորի կազմակերպած արշավանքին, ինչից պետք է եզրակացնել, որ Հերակլ Բ-ի և Երևանի խանի հարաբերությունները, մինչ վերջինիս կողմից վերոնշյալ

288 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 142:
289 **J. Perry**, Karim Khan Zand: A History of Iran 1747-1779, p. 50.
290 **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 142:
291 Մ. Զուլալյան, էջ 230-231:
292 Գանձակի Շահվերդի խանն ամենայն հավանականությամբ վրաց թագավորների հարկատուն էր դարձել Փանահ խանի դեմ պայքարում վերջիններիս օգնությունից հետո:
293 **П. Бутков**, նշվ. աշխ. , էջ 239.



դավաճանությունը, եթե ոչ բարեկամական, ապա նաև ոչ թշնամական և որոշակի դաշնակցային բնույթ են կրել: Հավանական ենք համարում նաև այն, որ Երևանի խանը ի պատասխան Հերակլ Բ-ի օգնության, որոշակի պարտավորություններ էր ստանձնել և ստիպված էր մասնակցել նրա արշավանքներին:

Հերակլ Բ-ի և Ազատի միջև կայացած համաձայնությամբ էր պայմանավորված Ազատ խանի զորքի մեջ նաև 200 վրացի զինվորների առկայությունը վրաց իշխաններ Ջաալբեկի և Ասլանբեկի գլխավորությամբ[294]: Ուսումնասիրողների կողմից հիշատակվում է նաև Ազատի և Հերակլ Բ-ի քրոջ ամուսնության մասին[295]: Ըստ էության նրանց միջև հակամարտության դադարումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կողմերը երկար ժամանակ ստիպված էին ռազմական գործողություններ իրականացնել այլ ուղղություններով՝ Ազատ խանը Իրանում, իսկ Հերակլ Բ-ը` Հարավարևելյան Կովկասում :

Այդ ժամանակ Իրանում իշխանության համար թեժ պայքար է ծավալվում Ազատ խանի, Քերիմ Խան Զենդի և Մուհամմադ Հասան խան Ղաջարի միջև: Սրանցից յուրաքանչյուրը կարողացել էր իր իշխանության ներքո միավորել մեծ չափի տարածքներ Իրանում և միմյանց հետ սուր պայքարի մեջ մտնել շահական գահին տիրելու համար[296]: Ազատ խանը 1753թ.-ին կարողանում է հաջողության հասնել Քերիմ խանի նկատմամբ և վերջինս, Սպահանը թողնելով Ազատ խանին, իր դաշնակիցների հետ ամրանում է Շիրազում[297]: Ազատ խանը, մուտք գործելով Սպահան, իրեն հայտարարում է գերագույն իշխանության տեր և բնակություն հաստատում Սեֆյան շահերի պալատում[298]: Նա ծանր հարկատվության տակ է դնում Նոր Ջուղայի հայ համայնքը: Նկարագրելով այդ իրադարձությունները Հազարջրբեցին գրում է.

294 Նույն տեղում, էջ 238,
295 **J. Perry,** Karim Khan Zand, p. 31.
296 **Վ. Բայբուրդյան**, նշվ. աշխ., էջ 387:
297 **P. Avery**, The Cambridge History of Iran, v. 7: From Nadir Shah to The Eslamic Republic, Cambridge Uiversity Press 1991, p. 72.
298 **Վ. Բայբուրդյան**, նշվ. աշխ., էջ 387:

*«...եկեալ Ազատ խանըն նստաւ ի գահն Ասպահանու՝ և բազում չարիսն գործէաց կոչէաց գտանուտերուն Ջուղայու որ էր Կոճի-կենց Արութինն և առէ երբայք տուաք ըզութն հազար թումանն՝ ապա և ոչ աւար հարկանելոց եմք զշենն ձեր. . .»*[299]: Ծարունակե-լով իր հաջողությունները Ազատ խանը 1754 թ.-ի օգոստոսին մուտք է գործում Շիրազ[300]:

Ազատ խանի դիրքերն Իրանում ամրապնդվելուն զուգահեռ նաև Երևանում են ամրանում և Երևանի խանությունն ամբողջու-թյամբ անցնում է նրա իշխանության ներքո: Պետք է նկատել, որ սկզբնաղբյուրներում տեղեկատվություն չկա Երևանի՝ Ազատ խանի ազդեցության ներքո անցնելու իրադարձության մանրա-մասների, այս հարցում Հերակլ Բ-ի դիրքորոշման և դերի վերա-բերյալ: Թե որքան ժամանակ և որքան ամուր իշխանություն է Երևանում ունեցել Ազատ խանը կարելի է հասկանալ վերջինիս կողմից հրապարակված հրամանագրերի ուսումնասիրությունից: Այդ հրամանագրերի մի մասն առկա է Մ. Մաշտոցի անվան Մա-տենադարանի համապատասխան ֆոնդերում, որոնց մի մասը հրատարակվել է Ք. Կոստիկյանի կողմից[301]:

Ամենայն հավանականությամբ Երևանում Ազատ խանը, որոշ ընդհատումներով, ազդեցություն է ունեցել սկսած 1751 թվակա-նից, քանի որ վերջինս Էջմիածնի վանքի կալվածքները պետա-կան հարկերից ազատելու մասին հրամանագիրն այդ տարի է հրապարակել[302]: Խանն այս հրովարտակում նաև համապատաս-խան կարգադրություններ էր կատարում նախկինում գործող հարկագանձման կարգը վերահաստատելու համար. *«Պատվար-ժան հաքիմներն ու արդար ամիլները, քալանթարները, գեղջա-վագները, դիվանի գործերի մուբաշիրները և բարեբախտ սարքա-րի գործերի մութասադդիները բոլոր հարցերում թող դրախտաբ-նակ հզոր տիրակալների ողղամները հաստատված և ուժի մեջ*

[299] **Ս. Հազարջրբեցի,** նշվ. աշխ., էջ 84բ:
[300] **P. Avery**, The Cambridge History of Iran, p. 74
[301] **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ :
[302] Նույն տեղում, վավերագիր 35՝ Իբրահիմ շահի 1748թ. -ի հրամանագիրը, էջ 72:



*համարեն ու դրանք չխախտեն: . . .»*[303]: Կարևոր է ուշադրություն դարձնել այն փաստին, որ Ազատ խանն այս հրովարտակում, նշելով, թե ում են ուղղված հանձնարարականները, չի նշում Երևանի բեկլարբեկին: Բեկլարբեկը, լինելով քաղաքական և զին-վորական իշխանության բարձրագույն պաշտոնյան, համարվում էր ամենաբարձրը Երևանում և նրա մասին հրամանագրում չհի-շատակելը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ ժամանակ Երևա-նում չկար բեկլարբեկ ում կենթարկվեին մնացած պաշտոնյանե-րը, և խանության բարձրագույն կառավարիչն էր հենց ինքը՝ Ազատ խանը:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի 1է թղթապա-նակի համար 1323 վավերագիրը Ազատ խանի 1752թ.-ի Էջմիած-նի Մինաս կաթողիկոսին (1751-1753թթ.) ուղղված հրամանա-գիրն է, որով Ազատ խանը բարեհաճություն է հայտնում Մինաս կաթողիկոսին իր ծառայությունների համար և հայտնում, որ վեր-ջինիս խնդրանքը կատարելու համար հանձնարարականներ է տվել իր պաշտոնյաներին[304]:

Ցավոք վավերագրում և տվյալ ժամանակաշրջանին վերա-բերվող սկզբնաղբյուրներում չկան տեղեկություններ, թե ինչպի-սի ծառայության և հանձնարարականների մասին է խոսքը: Սա-կայն Ազատ խանին խնդրանքով դիմելը փաստում է այն մասին, որ այդ ժամանակ Երևանը դեռևս նրա իշխանության ներքո էր, իսկ հրամանագրում բեկլարբեկի մասին հիշատակության բացա-կայությունը նշանակում է, որ Երևանի խանությունում դեռևս այդ-պիսի պաշտոնյա չկար: Առաջին գլխում մենք տեսանք, որ Ազատ խանի նույն տարվա մայիսի մեկ այլ հրամանագրում հիշատակ-վում է Մինաս կաթողիկոսի խնդրանքը ստանալու, Խալիլ խանին Երևանի բեկլարբեկ նշանակելու մասին: Ազատ խանը մեկ այլ հրամանագրով հաստատում է Ստամբուլից Երևան եկող Ալեք-սանդրի (1754-1755թթ.) կաթողիկոսական իրավունքները[305]:

[303] Նույն տեղում, էջ 76:
[304] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1323: Տե՛ս հավելված, նկար 22, 23:
[305] Նույն տեղում, վավ. 1327: Տե՛ս հավելված, նկար 24, 25:

Ալեքսանդրի կաթողիկոսական իրավունքներն Ազատ խանի կողմից հաստատվելու փաստը վկայում է այն մասին, որ Խալիլ խանը, չնայած Երևանի բեկլարբեկն էր, այնուամենայնիվ չուներ բացարձակ իշխանություն և հարկավոր էր, որպեսզի կաթողիկոսական իրավունքները հաստատվեին Ազատ խանի կողմից, ով, ըստ էության, պահպանել էր իր ազդեցությունը Երևանում: Դրա ապացույցն է Ազատ խանի մեկ այլ հրամանագիր, որով նա Երևանի բեկլարբեկ Խալիլ խանին կարգադրում է հոգ տանել կաթողիկոսի ու վանքի մյուս սպասավորների մասին և հաստատում է նրանց տրված նախորդ շահերի հրամանագրերը[306]:

Հայ հոգևորականության համար կարևոր էր, որպեսզի իրենց հարկային արտոնությունները և իրավունքերը ճանաչվեին ոչ միայն Երևանում ազդեցություն ունեցող մահմեդական տիրակալների, այլ նաև տարածաշրջանի մյուս հատվածներում իշխանություն ունեցողների կողմից, քանի որ հոգևորականությունը եկեղեցական տուրքերի և այլ հանգանակությունների հավաքագրման գործողություններ էր իրականացնում ոչ միայն Երևանի խանությունում, այլ ամբողջ տարածաշրջանում. Իրանում, Օսմանյան կայսրությունում, Վրացական թագավորություններում և այլուր:

Որոշ ժամանակ անց Ալեքսանդր կաթողիկոսը Երևանի թվով 10-15 ավերված եկեղեցիների հարկերից ազատելու համար դիմում է Ազատ խանին: Ի պատասխան այդ խնդրանքին Ազատ խանը 1755թ. Երևանի բեկլարբեկին և ամիլներին հրահանգում է այդ եկեղեցիների սպասավորներին, ովքեր հողագործությամբ են զբաղվում, չնեղել և նրանցից հարկեր չպահանջել[307]:

Ազատ խանը շուտով Իրանում անհաջողություն է կրում Քերիմ խանի դեմ պայքարում[308]: Իրանում կրած անհաջողություններից հետո նա չպահպանեց իր ազդեցությունը Երևանում: Այդ մասին են փաստում հետագա հրամանագրերը, որոնք արդեն հրապարակվում էին Երևանի խաների կողմից: Երևանն Ազատ խանի ազդեցությունից դուրս է եկել 1755թ., որից հետո որպես Երևանի բեկլարբեկ է հիշատակվում Հասան Ալի խանը, ում կառավարման տարիները Ծահխաթունյանցի մոտ նշվում են 1755-1762թթ.[309]: Հասան Ալի խանի 1755թ. Երևանում իշխելու մասին է վկայում նրա հրամանագրերից մեկը, որը նա արձակել է ի պատասխան Ալեքսանդր կաթողիկոսի խնդրագրի, որին մենք անդրադարձել ենք առաջին գլխում:[310] Սակայն Հասան Ալի խանը չի իշխել մինչև 1762թ.: Դրա մասին է վկայում Հուսեյն Ալի խանի, որպես Երևանի բեկլարբեկ, հիջրայի 1173թ. (համպտ. 1759/60թթ.) հրամանագիրը, որը գրվել է Երևանի Անապատի վարդապետ Ղազարի խնդրագրի հիման վրա և վերաբերվում է եկեղեցական կալվածքներին[311]:

Ծավոր սկզբնաղբյուրներում որևէ հիշատակություն չկա Երևանում Հասան Ալի խանի իշխանության գալու հանգամանքների վերաբերյալ: Տեղեկություն չկա նաև Հասան Ալի խանի և Ազատ խանի միջև որևէ կապի մասին: Բացի այդ, Հասան Ալի խանի իշխանության տարիներին Երևանի վերաբերյալ Ազատ խանի արձակած որևէ հրովարտակի մենք չհանդիպեցինք: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ Հասան Ալի խանի իշխանության գալուց սկսած Երևանի խանությունը դուրս է եկել Ազատ խանի ազդեցությունից:

Օ. Մարկովան նշում է, որ 1759թ.-ին Երևանի խանությունը, Գանձակի հետ դառնում է Հերակլ Բ-ի հարկատու[312]: Հարկի չափի վերաբերյալ տեղեկություններ են հայտնում մի շարք հեղինակներ: Ըստ Ե. Ծահազիզի այն եղել է 40000 թուման:[313] Ամե-

306 **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 80:
307 Նույն տեղում, էջ 81-82:
308 Քերիմ խանի Ազատ խանին վերջնական պարտության մատնելու և գահի համար մղվող պայքարի վերաբերյալ տարբեր են հետազոտողների նշած ժամանակահատվածները. Վ. Բայբուրդյանի մոտ նշվում է 1754թ., Ջոն Փերին Ազատի Քերիմին հանձնվելը թվագրում է 1762թ., տե՛ս **J. Perry**, նշվ. աշխ., էջ 45-46.

309 **Հ. Ծահխաթունյանց**, նշվ. աշխ., էջ 139:
310 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. 1338:
311 Նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 427: Տե՛ս հավելված, նկար 16, 17:
312 **О. Маркова,** Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва 1966, с. 129.
313 **Ե. Ծահազիզ,** Հին Երևանը, Երևան 1931, էջ 110:

նայն հավանականությամբ խոսքը թավրիզի թումանի մասին է: Մ. Ջուլայանը նշում է, որ Երևանի խանը վճարում էր իր եկամտի 1/5-րդ մասը: Կարծում ենք, որ 1/5-րդ մասը պատահական հարկաչափ չէր, քանի որ այն, ինչպես տեսանք առաջին գլխում, պետական գանձարանին վճարվող հարկի՝ բահրայի, չափն էր: Մ. Ջուլայանը, հղում կատարելով անգլիացի ուղեգիրների նյութերին,[314] նշում է, որ այդ հարկը Գանձակի խանությունից Հերակլ Բ-ին վճարվող հարկի հետ միասին կազմում էր 7000 անգլիական ֆունտ[315]:

Սակայն այս տեղեկատվությունը ճշգրտման կարիք ունի, քանի որ որոշ սկզբնաղբյուրների քննությունից պարզվում է, որ Քերիմ խանը որոշակի ժամանակ կարողացել է իր ազդեցությունը տարածել նաև Երևանի խանությունում: Նա, Իրանում Ազատ խանի նկատմամբ հաջողության հասնելուց հետո, 1759թ. փետրվարին վերջնականապես պարտության մատնեց և գլխատեց իր մյուս մրցակցին՝ Մուհամմադ Հասան խան Ղաջարին: Իր հիմնական մրցակիցների նկատմամբ հաջողության հասնելուց հետո Քերիմ խանը նախկինում Իրանի կազմում եղած գրեթե բոլոր անկախ և կիսանկախ խաներին և կառավարիչներին գրություններ ուղարկեց՝ պահանջելով իր մոտ ծառայության ուղարկել զինված ջոկատներ: Այս պահանջը ոչ բոլորն բավարարեցին: Վրաստանի և Դաղստանի կառավարիչներն ու Ատրպատականի մի շարք խաներ չենթարկվեցին Քերիմ խանին[316]: Քերիմ խանի պահանջին Երևանի խանի պատասխանի մասին ոչինչ հայտնի չէ: Սակայն մի շարք իրադարձությունների քննությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչ ազդեցություն կարող էր Քերիմ խանն ունենալ Երևանի խանությունում: 1763թ. Քերիմ խանը հաստատում է Սիմեոն Երևանցու կաթողիկոսական իրավունքները և Էջմիածնի վանքի իրավունքները տասներեք կետերով: Մինչ այս հրովարտակը, Երևանի Հուսեյն Ալի խանի կողմից ևս նման հրովարտակ էր հրապարակվել[317]: Քերիմ խանի կողմից Սիմեոն Երևանցու կաթողիկոսական իրավունքների հաստատումը կարևոր էր, քանի որ այն հնարավորություն էր տալիս, որպեսզի Էջմիածնի նվիրակներն իրենց գործունեությունն ազատորեն իրականացնեին նաև Քերիմի անմիջական ենթակայության ներքո գտնվող իրանական տարածքներում: Կարևոր են նաև Քերիմ խանի հրովարտակի կետերը, քանի որ դրանցով սահմանվում էին Էջմիածնի մի շարք կարևոր իրավասություններ և արգելվում էին ամեն տեսակի ոտնձգությունները Էջմիածնի թե՛ գանձագին և թե՛ վակֆային կալվածքների նկատմամբ, ոչ ոք իրավունք չուներ արգելելու Էջմիածնին ու հայոց մյուս վանքերին հնչեցնել իրենց զանգերը, ժամերգություն կատարել, ամուսնական, ննջեցյալների թաղման ծեսերը հայկական օրենքներով կատարել, արգելվում էր մահմեդական տիրակալներին հայ եկեղեցու ու հոգևորականության գործերին խառնվել և այլն[318]:

314 Memoir of a map of the countries comprehended between the Black sea and Caspian with an account of the Caucasian Nations and vocabularies of their languages", London, 1788.

315 **Մ. Ջուլայան**, նշվ. աշխ., էջ 231: Որպեսզի հասկանալի լինի, թե որքան գումարի մասին է խոսքը, նշենք, որ այդքան գումարը մոտավորապես համասար էր մերօրյա 1.3 միլիոն ֆունտին: Ֆունտի արժեքի տատանումների մասին տես՝ http://www.in2013dollars.com/1759-GBP-in-2018?amount=7000, http://www.uwyo.edu/numimage/currency.htm, 27.01.2018:

316 **Վ. Բայբուրդյան**, նշվ. աշխ., էջ 388:



317 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1353

318 **Ք. Կոստիկյան**, Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 91: Հրամանագրի բնօրինակը տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 591: Քերիմ խանի այս հրովարտակի վրա թվականը ջնջված է, սակայն այն ձեռք բերող Սիմեոն Երևանցու վկայության համաձայն հրապարակվել է հիջրայի 1177թ., որը համապատասխանում է գրիգորյան 1763/4թթ.: Սակայն Քերիմ խանի նույն բովանդակությամբ մեկ այլ վավերագիր թվագրված է հիջրայի 1176թ., ինչը համապատասխանում է 1763թ., այսինքն Սիմեոն Երևանցու մոտ նշվող տարեթվից մեկ տարի առաջ: Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1354: Ամենայն հավանականությամբ Սիմեոն կաթողիկոսի մոտ հայտնաբերված վավերագիրը կաթողիկոսը նշել է այն ամսաթվով, երբ այն արդեն հասել է իրեն, իսկ 1354 համարի հրովարտակը նշվել է այն ամսաթվով, երբ այն արձակվել է, կամ դրանից մի փոքր ուշ, քանի որ Սիմեոն Երևանցին կաթողիկոս է դարձել 1761թ.:

Երևանի խանությունում Քերիմ խանի ունեցած մեծ ազդեցության մասին են փաստում նաև սկզբնաղբյուրներում առկա այլ տեղեկություններ ևս: Ըստ Սիմեոն Երևանցու հաղորդած տեղեկությունների, 1763 թ. Երևանի Հուսեյն Ալի խանը, վախենալով Քերիմ խանի Երևան արշավելուց, փակվել էր բերդում[319]: Քերիմ խանի Երևան արշավելու դեպքում Սիմեոն Երևանցին վերոնշյալ հրամանագրի շնորհիվ որոշ չափով ապահոված կլիներ Էջմիածնի կալվածքներն ու իրավունքները: Չնայած Քերիմ խանը չարշավեց Երևան, սակայն նրա դեսպանը 1763 թ. մարտի 26-ին ժամանում է Երևան[320]: Շարունակելով Երևանի շուրջ ընթացող իրադարձությունների նկարագրությունը և անդրադառնալով Հերակլ Բ-ի 1765թ. Երևան կատարած արշավանքին, որի ժամանակ կաթողիկոսը միջնորդի դեր է կատարել Հերակլ Բ-ի և Երևանի Հուսեյն Ալի խանի միջև, Սիմեոն Երևանցին գրում է հետևյալը. «...*գնաց առ նա (Հուսեյն Ալի խանը-Վ.Հ.) սրբազան Վեհըն և բազումս խօսեալ ընդ նմա խանն և մեծամեծք իւր, յանձ առին տալ զկէսն խնդրելեաց Արքային, և ծառայել նմա: Քանզի զբնաւն տալ ոչ կարէին, և ունէին յայսմ վայրի նոքա ևս զիրաւունս զի ասէին թէ կամի Արքայն բացապէս տիրել մեզ, և զմեզ ծառայեցուցանել ինքեան, մեք այնմ յօժարիմք, ապա ազատեսցէ զմեզ ի Քեարիմ խանէն, որոյ ի տարուջն մեք զայս ինչ և զայն ինչ տամք, և պատանդք մեր այժմ առ նմա են*»[321]: Այսպիսով սկզբնաղբյուրներում առկա տեղեկության համաձայն շատ խաների նման Երևանի խանը ևս պատանդներ է ուղարկել Քերիմ խանին, ինչպես նաև հարկատու է եղել նրան: Ուստի Քերիմի դեսպանի Երևան կատարած այցը կարող էր պայմանավորված լինել հարկահավաքության կամ նման բնույթի այլ հարցերով:

Սույն ժամանակահատվածում Քերիմ խանի և Հերակլ Բ-ի հարաբերությունների մասին տարբեր են սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները: Ըստ Պապունա Օրբելիանիի՝ 1760թ.-ին

[319] **Գ. Աղանյանց**, Դիվան Հայոց պատմության, գիրք Գ, Մասն երրորդ (1767-1776), Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 8:

[320] Նույն տեղում, էջ 75:

[321] Նույն տեղում, էջ 209- 210:



Քերիմ խանն Ազատին պարտության է մատնում, և վերջինս գնում է Հարավարևելյան Այսրկովկաս: Քերիմ խանը Հերակլ Բ-ին նամակ է գրում՝ որպեսզի հնարավորության դեպքում Ազատ խանին ձերբակալի և իր մոտ ուղարկի: Վերջինս ձերբակալում է Ազատ խանին և ուղարկում Քերիմի մոտ: Ի պատասխան դրա՝ նա Հերակլ Բ-ին շատ ընծաներ է ուղարկում և Երևանը դնում նրա ենթակայության ներքո՝ Երևանի խանին գրելով. *«Որքան էլ պետական հարկ լինի քեզ վրա դրված բոլորը Իրակլի թագավորին պիտի տաս և նրան հնազանդվես ինչպես էլ հնազանդության կարգն է»*[322]:

Օ. Մարկովան, իր աշխատությունում անդրադառնալով վրաց արքայի և Քերիմ խանի հարաբերություններին, առաջ է քաշում վարկած, համաձայն որի Քերիմ խանը խուսափել է Հերակլ Բ-ի նկատմամբ կոշտ քաղաքականությունից, հրավիրել է իր մոտ՝ խոստանալով անգամ նրան հանձնել Թավրիզի կառավարումը: Սակայն Հերակլ Բ-ը, բարեկամաբար և զգուշորեն պատասխանելով, հրաժարվել է մեկնել նրա մոտ և պատանդներ հանձնել, միևնույն ժամանակ հորը՝ Թեյմուրազին, մեղադրել է Ռուսաստան մեկնելու համար՝ ցանկանալով ցույց տալ, որ ինքը կողմ չէ Այսրկովկասում ընթացող իրադարձություններին Ռուսաստանի միջամտելուն: Այնուհետև Մարկովան, հղում կատարելով Իրանում Ռուսաստանի հյուպատոս Իլյա Իգնումնովի 1764թ. մարտի 10-ին արտաքին գործերի կոլեգիա ուղարկած հաշվետվությանը, նշում է, որ Ազատ խանի Հերակլ Բ-ին հանձնվելուց հետո Քերիմ խանը նրա մոտ դեսպաններ և նվերներ է ուղարկում՝ պահանջելով Ազատ խանին հանձնել իրեն: Ըստ Մարկովայի՝ այս հարցի շուրջ տևական ժամանակ ընթացած բանակցությունները հանգեցրեցին 1762թ. Հերակլ Բ-ի միանձնյա իշխանության հաստատմանը ամբողջ Արևելյան Վրաստանում՝ Քարթլիում և Կախեթում, իսկ հաջորդ տարում Ազատ խանը Քերիմին հանձնվեց[323]:

[322] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., 176

[323] **О. Маркова**, նշվ. աշխ. , էջ 131-132.

Անդրադառնալով Երևանի համար կողմերի միջև առկա պայքարին՝ նշենք, որ, անգամ, եթե Պապունա Օրբելիանիի հաղորդած վերոնշյալ տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, այնուամենայնիվ Քերիմ խանի կողմից Երևանը Հերակլ Բ-ին զիջելը պետք է պայմանավորված լիներ Ազատ խանին Քերիմին հանձնելու և Իրանում Քերիմ խանի ոչ այնքան ամուր դիրքեր ունենալու հանգամանքներով: Ամեն դեպքում կարծում ենք, որ Քերիմ խանի կողմից արված որևէ զիջում ժամանակավոր բնույթ է կրել, քանի որ Քերիմ խանը հենց Հերակլ Բ-ից էլ պատանդներ էր պահանջել՝ համարելով իրեն շահի փոխանորդը, իսկ Քարթլի-Կախեթը՝ Իրանի մի մաս, դրանց թագավոր Հերակլ Բ-ին էլ՝ իր ենթական: Նաև չպետք է անտեսել այն, որ, ըստ Մարկովայի, Քերիմ խանի և Հերակլ Բ-ի բանակցությունների արդյունքում վրաց արքան միավորեց Քարթլին և Կախեթը: Այսինքն՝ չնայած այդ թագավորությունները փաստացիորեն Հերակլ Բ-ի ազդեցության ներքո էին, այնուամենայնիվ վերջինիս անհրաժեշտ էր նաև Քերիմի կողմից իր իրավունքների ճանաչումը Քարթլի-Կախեթի նկատմամբ:

Պետք է նշել, որ այս իրադարձություններին վերաբերվող աղբյուրներում տեղեկության սակավության պատճառով, մենք չենք կարող հաստատապես պնդել քննարկվող հարցի վերաբերյալ վերոնշյալ տեսակետներից որևէ մեկը, քանի որ Հերակլ Բ-ի Քարթլի-Կախեթի թագավոր ճանաչվելը կարող էր պայմանավորված լինել նաև Թեյմուրազի մահով, ով 1762թ. հունվարի 8-ին կյանքին հրաժեշտ տվեց Ռուսաստանում:

Այսպիսով, Մատենադարանի դիտարկվող փաստագրական նյութերի տվյալների օգտագործմամբ առավել լիարժեք է դառնում այդ շրջանի Երևանի խանության շուրջ ստեղծված քաղաքական իրադրության հարցերի քննությունը և ակնհայտ է դառնում այն իրողությունը, որ կիսանկախ կարգավիճակ ձեռք բերելուց հետո, Երևանի խաները չկարողացան իրենց տիրույթը պահպանել ոտնձգություններից: Խանության համար պայքար ծավալեցին տարածաշրջանի առավել հզոր առաջնորդները: Երևանի խաները, 1760-ականների սկզբներից սկսած տարբեր տիրակալ-



ների հարկ տալով, կարողացան պահպանել իրենց իշխանությունը և վարել անկախ ներքին և կիսանկախ արտաքին քաղաքականություն: Իսկ 1760-ականների կեսերից Երևանում գնալով էլ ավելի ամրապնդվեցին Հերակլ Բ-ի դիրքերը: Սակայն դա չվերացրեց Քերիմ խանի ազդեցությունը Երևանում, քանի որ նա, իր ազդեցության ներքո ունենալով Սեֆյան Իրանի տարածքների մեծ մասը, շարունակում էր որոշակի ազդեցություն ունենալ նաև նախկինում Իրանին պատկանած տարածքներում, այդ թվում նաև Երևանում:

### 3.2. Երևանի խանությունը ռուս-վրաց-թուրքական հարաբերությունների համատեքստում 1760-1770-ականներին

1760-ականներից վրացական իշխանությունները սկսեցին գործնական քայլեր իրականացնել Ռուսաստանի հետ դաշնակցելու և դրա շնորհիվ երկրամասն ու Վրաստանը թուրքական կամ իրանական ազդեցության ներքո անցնելու վտանգներից, լեզգիական արշավանքներից զերծ պահելու համար: Հերակլ Բ արքան մի շարք բարեփոխումներ իրականացրեց երկրի պաշտպանունակությունն ուժեղացնելու համար: Նա նոր հարկ մտցրեց բանակի կարիքները հոգալու համար: Կազմեց մշտական բանակ, որտեղ բոլոր պիտանի վրացիները պետք է ծառայեին[324]: Ե՛վ ռուսական և՛ օսմանյան իշխանությունները դեռևս 1750-ականներից ակտիվորեն հետևում էին երկրամասում ընթացող գործընթացներին: Օսմանյան կայսրության հույները, ըստ Կ. Պոլսում ռուսական ներկայացուցիչ Ա. Օբրեսկովի, հույս ունեին, որ *«Հերակլը Պարսկաստանը նվաճելուց հետո կգրավի նաև Թուրքիան»*[325]:

[324] **R. G. Suny,** s. p., p. 56.

[325] **Պ. Չոբանյան,** Հայ-ռուս- վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, էջ 158: Չնայած Հերակլ Բ-ի Թուրքիան նվաճելու հնարավորությունը հեռու էր իրականությունից և հույները դժվար թե նման հույսեր ունենային, այնուամենայնիվ Օբրեսկովի նման հաղորդումը փաստում է այն մասին, որ Օսմանյան կայսրությունում անհանգստացած էին վրաց թագավորի դիրքերի ապայնդմամբ:

Օսմանյան իշխանությունները կարծում էին, որ Հարավային Կովկասում Հերակլ Բ-ի համարձակ գործողությունների ու հաջողությունների ետևում թաքնված է ռուսական հովանավորչությունը[326]: Վրաց արքան, չցանկանալով թշնամանալ օսմանյան իշխանությունների հետ, Մ. Դե Պեյսոնելի վկայությամբ, *«հայտարարեց, որ ինքը գործում է, որպես կայսրության բարեկամ»*[327]: Սակայն այս հայտարարությունով Հերակլ Բ-ի և օսմանյան իշխանությունների հարաբերությունները բարեկամական չդարձան:

Քարթլի-Կախեթի սահմաններին սպառնում էին նաև տարածաշրջանի մահմեդական տիրակալները, հատկապես լեզգիները, որոնք պարբերաբար, երբեմն նաև Օսմանյան կայսրության դրդմամբ, ասպատակում էին վրացական թագավորությունների տարածքները, ավերում երկիրն ու գերեվարում բնակչությանը: Վրաստանում ռուսական ներկայացուցիչը, նկարագրելով Քարթլիի և Կախեթի թագավորությունում լեզգիների արշավանքների հետևանքները, գրում է *«Հերակլի երկիրը սակավամարդ է, հողերի մեկ երրորդը՝ դատարկված»*[328]: Վրաց թագավորներ Սողոմոնը, Թեյմուրազ Բ-ը և Հերակլ Բ-ը փորձում էին Ռուսաստանի նման հզոր դաշնակից ունենալ՝ իրենց անկախությունը Օսմանյան կայսրությունից, հետագայում նաև Իրանից պաշտպանել[329]:

Հայ քաղաքական գործիչները, որոնց թվում նաև Հովսեփ Էմինն ու հնդկահայ ազատագրական կենտրոնի ներկայացուցիչները, իրենց հերթին փորձում էին հայությանը վերաբերվող ազգային անվտանգության ինչպես նաև Հայաստանի ազատագրության հարցերը լուծել Հերակլ Բ-ի հետ համագործակցելով: Հայաստանի ազատագրման վերաբերյալ հայ քաղաքական շրջանակներում երկու մոտեցում կար: Մի կողմից հնդկահայ գործիչները փորձում էին զինված պայքարի միջոցով հասնել Հայաստանի անկախացմանը, մյուս կողմից հայության հոգևոր առաջնորդ Սիմեոն Երևանցին, ով կարևոր դերակատարում ուներ Երևանի խանությունում, դեմ էր զինված պայքարին՝ համոզված լինելով, որ այն հաջողություն չի ունենա և կհանգեցնի հայության ֆիզիկական բնաջնջմանը: Սիմեոն Երևանցու նման մոտեցումն ուներ իր դրդապատճառները. Երևանի Հուսեյն Ալի խանը խիստ բացասական էր վերաբերվում ռուս-վրացական հարաբերությունների սերտացմանը, դրանցում հայության ունեցած դերակատարմանը՝ հասկանալով, որ դրանք սպառնալիքներ են իր իշխանությանը:

1760թ. Քարթլիի թագավոր Թեյմուրազ Բ-ն անցնում է գործնական քայլերի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները սերտացնելու և Վրաստանը ռուսական ազդեցության ներքո մտցնելու նպատակով: Նա իր թագավորությունը թողնում է իր որդի Կախեթի թագավոր Հերակլ Բ-ին և մեկնում է Ռուսաստան[330]: Սակայն ռուսական արքունիքում չէին շտապում խորացնել ռուս-վրացական հարաբերությունները: Բարձր Դուռը հետևում էր ռուս-վրացական հարաբերություններին և բացասաբար էր վերաբերվում դրանց սերտացմանը: Իսկ Ռուսաստանն այդ ժամանակ, խուսափելով Օսմանյան կայսրության հետ նոր պատերազմ սկսելուց, չէր ցանկանում փխրուն խաղաղությունը վտանգել Վրաստանի հետ հարաբերությունների խորացմամբ: Թերևս դա էր պատճառը, որ արտաքին գործերի կոլեգիայում վախենում էին, որ Թեյմուրազի այցը կարող է կասկած և լարվածություն հարուցել Օսմանյան կայսրությունում[331]: Պատվիրակության մուտքը Մոսկվա թույլատրվեց միայն սուլթանական կառավարությանը ներկայացված հավաստիացումներից և համաձայնությունից հետո, որ պատվիրակությունը այնտեղ է գնում միայն ապրելու համար, այլ ոչ ուրիշ գործերի[332]:

Օսմանյան կայսրությունը, չնայած ռուս-վրացական հարաբերություններում ռուսական կողմից ցուցաբերվող նման զգուշավո-

[326] Նույ տեղում, էջ 160:

[327] Նույն տեղում էջ 160, **Մ. Զուլալյան**, նշվ. աշխ., էջ 325-326:

[328] **А. Цагарели**, Грамоты и другие исторические документы 18 столетия, относящиеся кь Грузии, Том 1, сь 1768 по 1774, с. 358.

[329] Իրանում զահի տարբեր հավակնորդների միջև պայքար էր գնում և կանխատեսելի էր, որ այդ պայքարում հաղթողը նաև հավակնելու է վերականգնել Իրանի իշխանությունը Հարավային Կովկասում:

[330] **А. Иоаннисян**, Иосиф Эмин, Ереван 1945, с. 71.

[331] **О. Маркова,** նշվ. աշխ. , էջ 129.

[332] Նույն տեղում, էջ130:

րության, ռուս-վրացական հարաբերություններում ցանկացած առաջընթաց դիտում էր որպես իր դեմ ուղղված դաշինքի կազմակերպում, իսկ վրացական թագավորությունները՝ Քարթլի-Կախեթի թագավորությունն ու Իմերեթիան, ընկալվում էին, որպես Այսրկովկասում Օսմանյան կայսրության դեմ հակամարտության մեջ Ռուսաստանի դաշնակիցներ: Մի շարք հանգամանքներ նպաստում էին թուրքական արքունիքում նման կարծիքի ձևավորմանը. Իմերեթիայի թագավոր Սողոմոնը 1760-ականներին մի շարք մարտերում փոքրաթիվ ուժերով կարողանում է հաղթել թուրքական զորքերին,[333] արևմտաեվրոպական և թուրքական մամուլում գրում էին Հերակլ Բ-ի հաղթանակների մասին, իբր Հերակլ Բ-ը գրավել է Սպահանը, հակաթուրքական կոչեր է անում, 1761թ. թարմացվեց 1746թ. կնքված ռուս –ավստրիական հակաթուրքական դաշինքը, Ռուսաստանի կանցլեր Մ. Վորոնցովը ցանկանում էր Օսմանյան կայսրության դեմ պայքարում օգտագործել թուրքահպատակ քրիստոնյաների ազատագրական շարժումները[334]: Թերևս վերոնշյալ գործոններով էլ պայմանավորված Օսմանյան կայսրությունում սկսում էին խոսել, որ վրացիները ռուսների օգնությամբ մեծ առաջընթաց են ապրում[335]:

Բացի Թեյմուրազ Բ-ից, 1762 թ. թուրքերի դեմ պայքարելու խնդրով Եկատերինա Բ-ին դիմել էին չեռնոգորցիները: Հույները իրենց հերթին կայսրուհուն հավատիացնում էին, որ պատերազմի դեպքում սուլթանի դեմ 50 հազարանոց բանակ կհանեն[336]: Այս ընթացքում Օսմանյան կայսրության սահմաններն անվտանգ չէին Այսրկովկասի հատվածում: 1767թ.-ին Ղարաբաղի Փանահ խանի որդի Իբրահիմի ուժերը Կարսն ավերել և ավար էին տարել: Նրանց վրա հարձակվել էր Երևանի խանի զորքը և ավարի մի մասը խլել: Փանահ խանի որդու զորքի վրա հարձակվել էին նաև Հերակլ Բ-ին ենթարկվող ղազախեցիները, որոնք ևս ավար էին խլել: Կարսեցիք եկել և խանից խնդրել էին ավարը և նա տվել էր: Նրանք գալիս են վեհափառի մոտ և նրան խնդրում են նամակ գրել Հերակի Բ-ին, որ նա էլ տա[337]:

Ձնայած 1764թ. հունիսի 10-ին Սիմեոն Երևանցու Ռուսաստանի ներկայացուցչին գրած նամակին, համաձայն որի Օսմանյան կայսրության կողմից զորքով արշավելու մտադրության մասին լուրերը հեռու են իրականությունից,[338] այնուամենայնիվ ամբողջ 1764թ. ընթացքում Թիֆլիսի բնակչությունը սարսափած սպասում էր թուրքերի հարձակմանը, քանի որ թուրքական իշխանությունները բացահայտորեն պատերազմով էին սպառնում Վրաստանին[339]: 1768 թ., երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, սուլթանը դաղստանցի ֆեոդալների մոտ պատվիրակություն է ուղարկում՝ նրանց համոզելու Վրաստանի դեմ գործելու համար:[340] Թուրք-վրացական հարաբերություններում առկա անվստահությունն ու զգուշավորությունը պարարտ հող հանդիսացավ այս պատերազմի ընթացքում միմյանց դեմ բացահայտ ռազմական գործողություններ իրականացնելու համար: 1769թ. Հերակլ Բ-ը, ցանկանալով պատժել Վրաստանի սահմաններն ասպատակող քրդերին,[341] ներխուժում և ավերում է Կարսի գյուղերը:[342] Կարծում ենք այս արշավանքը պայմանավորված էր նաև քրդերի Հերակլ Բ-ին տրվելիք հարկատվությունից հրաժարվելով[343]:

Օսմանյան կայսրության դեմ պայքարում Վրաստանին աջակցելու համար որոշվեց 4000 զինվոր ուղարկել Վրաստան[344]: Ռուսական արքունիքում, գերագնահատելով վրաց թագավորների

333 Այս մասին մանրամասն տե՛ս **А. Иоаннисян,** Иосиф Эмин, с. 160.
334 Նույն տեղում, էջ 94,
335 **О. Маркова**, նշվ. աշխ. , էջ 130.
336 **Մ. Զուլալյան**, նշվ. աշխ., էջ 233:



337 **Գ. Աղանյանց**, Դիվան Հայոց պատմության, գիրք Գ, Մասն երրորդ (1767-1776), Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 721:
338 Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., сборник документов, т. IV, с. 64.
339 **А. Иоаннисян,** Иосеф Эмин, с. 166.
340 **Л. Бросе**, նշվ. աշխ. , էջ 123.
341 Նույն տեղում, էջ112.
342 **Գ. Աղանյանց**, Դիվան Հայոց պատմության, գիրք Գ, Մասն երրորդ (1767-1776), Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 117:
343 Քրդերի Հերակլ Բ-ին հարկատու դառնալու հանգամանքների վերաբերյալ աշխատության մյուս էջերում
344 **А. Цагарели,** Спошения росии с кавказом в 16-18 столетиях. Реч проф. А. А. Цагарели, с. 39.

հնարավորությունները, մեծ հույսեր էին կապում վրաց արքաների հակաթուրքական գործողությունների հետ: Կայսրուհի Եկատերինա Բ-ը հայտնի լուսավորական Վոլտերին գրած նամակում գովեստի խոսքեր է ասում Հերակլ Բ-ի մասին, իսկ գեներալ Ռումյանցևին գրած նամակում գրում է, որ վրացիները արշավում են Օսմանյան կայսրության դեմ, Հերակլ Բ-ը՝ 30 000, իսկ Սողոմոնը՝ 20 000 զորքով[345]: Վրաց արքաներն իրենց հերթին ցանկանում էին ամեն ինչ անել, որ ռուսական զորքը թուրքերի դեմ շարժվի նաև Այսրկովկասի ուղղությամբ, որպեսզի ռուսական զորքի միջոցով լուծեն իրենց տարածքների անվտանգության հարցը: Թերևս դրա մասին է վկայում 1769թ. ռուսական իշխանություններին գրած նամակը, որտեղ Հերակլ Բ-ը նշում է, որ ծնված օրվանից ցանկացել է կայսրուհուն ծառայել: Այնուհետև, ցանկանալով մատնանշել այն օգուտները, որ Ռուսաստանը կարող է ունենալ Վրաստան զորք ուղարկելուց, նշում է, որ իր հողերում ոսկու, արծաթի և այլ թանկարժեք հանածոների շատ հանքեր կան և խնդրում է զորքի հետ իր մոտ ուղարկել նաև մասնագետների, այդ հանքերը շահագործման հանձնելու համար: Հերակլ Բ-ը գրում է, որ իր ենթականերից՝ Վրաստանի բնակչությունից, արարատյան հայերից ու այլոցից, կարող է զինել մոտ հիսուն հազար մարդու[346]: 1769թ. Հերակլ Բ-ը, նկարագրելով Վրաստանին հարակից երկրները, նկարագրում է նաև Երևանը՝ նշելով, որ երևանցիները ռազմի դաշտ կարող են դուրս բերել 2000 զինվոր[347]: Պետք է նկատել, որ Հերակլ Բ-ի համար այնքան էլ հեշտ չէր լինի և, ամենայն հավանականությամբ, անհնար կլիներ մոտ հիսուն հազար մարդու զինել, այնպես որ Հերակլ Բ-ի կողմից մատնանշված այս թվին պետք է խիստ վերապահումով մոտենալ, հաշվի առնելով նաև, որ նամակով նա նպատակ էր հետապնդում շահագրգռելու ռուսական իշխանություններին զորք ուղարկելու Վրաստան: Այդ

[345] Նույն տեղում, էջ 41:

[346] **А. Цагарели,** Грамоты и другие исторические документы 18 столетия, относящиеся къ Грузии, Том I, сь 1768 по 1774, с. 432.

[347] Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., Сборник документов, том IV, с. 64.



ժամանակ Վրաստանը ռուսական գանձարանին լավագույն դեպքում կարող էր տրամադրել տարեկան 250 000 ռուբլի, ինչը չնչին գումար էր և չէր բավականացնի անգամ Հերակլ Բ-ի կողմից պահանջված ռուսական զորքի ծախսերը հոգալու համար[348]:

1771թ. Հերակլ Բ-ը պաշտոնապես դիմում է ռուսական արքունիք Ռուսաստանի հովանու ներքո անցնելու խնդրանքով[349]: Սակայն այս դիմումը մերժվեց: Ռուս-թուրքական պատերազմի արդյունքները ամփոփվեցին 1774 թ. հուլիսի 10-ին կողմերի միջև կնքված Քյուչուկ Կայնարջիի պայմանագրով, որտեղ Վրաստանին վերաբերվող կետի համաձայն Թուրքիան պարտավորվում էր նեղություն չտալ Վրաստանին[350]: Ակնհայտ էր, որ այս պայմանը բավականին հեռու էր Հերակլ Բ-ի ակնկալիքներից: 1774 թ. օգոստոսի 24-ին Ն. Պանինին գրած իր նամակում Հերակլ Բ-ը թուրքերին, պարսիկներին և լեզգիներին բնութագրում է, որպես Վրաստանի անվտանգության գլխավոր սպառնալիքներ[351]:

Ռուս-թուրքական այս պատերազմի ընթացքում Երևանի Հուսեյն Ալի խանի արտաքին քաղաքականության մասին սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն հիշատակվում, իսկ Հուսեյն Ալի խանի Օսմանյան կայսրության կենտրոնական իշխանություններին, սահմանամերձ փաշայություններին ղեկավարներին և Հերակլ Բ-ին գրած նամակները, որոնք ուսումնասիրվել են մեր կողմից, ինչպես աշխատանքի ներածությունում նշել ենք, թվագրված չեն: Սակայն քննելով դրանց բովանդակությունները Հուսեյն Ալի խանի արտաքին քաղաքականությանը բնորոշ հատկանիշների համատեքստում, կարող ենք որոշակի եզրահանգումներ կատարել: Թեև Երևանի խանը վրաց թագավորից կախվածության մեջ էր, փորձում էր բարիդրացիական հարաբերություններ ունենալ նրա հետ հակամարտության մեջ գտնվող Օսմանյան իշխանությունների և հարևան փաշայությունների հետ:

[348] **Н. Дубровин,** История войны и владичества русскыхъ на Кавказъ, т. 2, С. Петербургъ 1886, с. 2.

[349] **Л. Броссе**, նշվ. աշխ. , էջ 126.

[350] Նույն տեղում, էջ134.

[351] **О. Маркова**, նշվ. աշխ. , էջ 168-169.

Հուսեյն Ալին, Նման աղային շնորհավորելով Կարսի կառավարիչ նշանակվելու կապակցությամբ. հույս է հայտնում, որ երկու երկրների հարաբերությունները նոր հրամաններով կկարգավորվեն, և էլ ավելի կամրապնդվի վաղեմի բարեկամական կարգավիճակը[352]: Հուսեյն Ալի խանն օսմանյան արքունիք ուղարկած նամակներում խոսում է բարեկամության մասին՝ շնորհակալություն հայտնելով տարբեր նվերների մասին[353]: Էնզելիի հյուպատոս Գ. Բոգոլյուբովը 1770թ. մայիսի 28-ին արտաքին գործերի կոլեգիա ուղարկած հաշվետվությունում նշում է, որ Երևանի հայերն ապավինում են Հերակլ Բ-ի պաշտպանությանը՝ չխուսափելով նրան գումարային աջակցություն տրամադրելուց: Նույն հաշվետվությունում հեղինակը, անդրադառնալով Երևանի Հուսեյն Ալի խանին, նշում է, որ վերջինս առանց Քերիմ խանի չի կարող դիմակայել Հերակլ Բ-ին, չնայած Քերիմ խանը նրան դրդում է Հերակլ Բ-ի դեմ դուրս գալ և հարկ չվճարել[354]:

Այսպիսով կարելի է եզրահանգել, որ Երևանի Հուսեյն Ալի խանը, լինելով Հերակլ Բ-ի հարկատուն, ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ամենայն հավանականությամբ կարողացել է չեզոք դիրքորոշում պահպանել և որևէ հակաթուրքական գործողություն չիրականացնել:

Հերակլ Բ-ը, չկարողանալով ռուսական զենքի օգնությամբ հասնել իր նպատակներին, սկսեց միջոցներ ձեռնարկել Օսմանյան կայսրության հետ հարաբերությունները կարգավորելու և Քարթլի-Կախեթի թագավորության սահմանների անվտանգությունը ապահովելու ուղղությամբ: Դրա համար հարմար առիթ էր թուրք-իրանական հարաբերությունների սրումը: 1776թ. Քերիմ խանը խախտում է օսմանյան սահմանները Բաղդադի և Բասրայի շրջաններում: Նրա եղբայր Սադեղ խանը պաշարում է Բասրան: Սկսված թուրք-իրանական պատերազմում Օսմանյան կայսրությունը փորձեց լավացնել հարաբերությունները Հարավային

352 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 176բ:
353 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 132ա, 161բ և այլն:
354 Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., Сборник документов, том IV, с. 101-102.



Կովկասի տիրակալների՝ այդ թվում նաև Հերակլ Բ-ի հետ: Պատմագիր Ջևդեթ փաշայի հաղորդման համաձայն, այդ ժամանակ Բաղդադի վալի՝ Օմեր փաշայի և Իրանում Օսմանյան կայսրության դեսպան, նշանավոր բանաստեղծ Վեհբի-էֆենդիի ներկայացրած զեկուցագրերից պարզվում էր, որ Իրանի խաների օսմանյան կառավարության դեմ պատրաստած զինվորական ուժերի հետ միասին, մեծ վտանգ էր ներկայացնում նաև Հերակլ Բ-ը: Անդրադառնալով նրա դերին՝ Ջևդեթ փաշան գրում է. *«Թիֆլիսի խանը՝ Հերակլը Ռուսիայի հետ լավ հարաբերության մեջ էր...: Այդ ժամանակ երկրում երևան եկած հանքերի շնորհիվ իր ուժն ու հզորությունն ավելացնելով, նաև մեկ օրում 20 հազարանոց բանակով ուզած ուղղությամբ շարժվելու կարող՝ ուժեղ մի թշնամի էր դարձել: Այնպես որ նա կարող էր Քերիմ խանին միանալ, որով նրա (Քերիմ խանի) հարձակումը դառնում էր որոշված և անտարակույս»*[355]:

Նման իրադրությունում օսմանյան իշխանությունները քայլեր են ձեռնարկում Այսրկովկասի խաներին և Հերակլ Բ արքային իրենց կողմը գրավելու, որպեսզի վերջիններս չմիանան Քերիմ խանին: Ախալցխայի և Կարսի կառավարիչների միջոցով սուլթանի կողմից նամակներ և նվերներ ուղարկվեցին երկրամասի խաներին և Հերակլ Բ-ին: Երևանի Հուսեյն Ալի խանին ուղարկված ֆերմանի քննումը հնարավորություն է տալիս առավել խորքային ուսումնասիրել Հուսեյն Ալի խանի և օսմանյան իշխանությունների հարաբերությունները, ինչպես նաև Հերակլ Բ-ի և Խոյի Ահմադ խանի ունեցած դերակատարումը դրանցում: Այդ իսկ պատճառով հարկ ենք համարում ներկայացնել ֆերմանի առավել կարևոր հատվածները:

*«... Իմ աշխարհապարփակ ֆերմանում հայտնել եմ, քանի որ Ադրբեջանի խաների կողմից առայժմ թշնամական ընթացք և շարժում չի նկատվել, հետևաբար նրանց երկրների վրա չպետք է հարձակվել: Նրանցից արժանավորներին հատուկ նամակներ եմ գրել և արգելել Զենդ-Քերիմի հետ կապ հաստատել: Եթե նրանք*

355 **Ա. Սաֆրաստյան**, նշվ. աշխ., էջ 228:

*[խաները] իրենց վիճակում ապրեն, մեր նկատմամբ թշնամություն և ատելություն արտահայտելուց հեռու մնան, իմ Բարձր Սուլթանության հպատակություն և հնազանդություն ցուցաբերելու դեպքում, նրանց ապահովության և անվնաս կացության մասին ցուցումներ և հանձնարարություններ կտրվեն»*[356]*:*

Այսպիսով, ֆերմանի սկզբում նշվում է, որ Երևանի Հուսեյն Ալի խանը մինչ այդ սուլթանական արքունիք ուղարկած գրությունով իր հավատարմությունն էր հայտնել սուլթանին: Ֆերմանում նշվում է, որ սուլթանը Հուսեյն Ալիի իրեն հպատակվելու մասին իմացել է ոչ միայն վերջինիս մարդկանց զեկուցումներից, այլ նաև Խոյի Ահմադ խանից և Հերակլ Բ-ից: Հնարավոր է, որ Հուսեյն Ալի խանի սուլթանին հավատարմություն հայտնելու որոշման վրա մեծ ազդեցություն են ունեցել նաև Ահմադ խանը և Հերակլ Բ-ը: Հարկավոր է ուշադրություն դարձնել այն փաստին, որ Հերակլ Բ-ը, Երևանի, Խոյի և Հարավարևելյան Կովկասի մյուս խաները Բարձր դռանը հավատարմություն էին հայտնում և դրա դիմաց նվերներ ստանում միայն չեզոքության և Քերիմ խանի հետ դաշինքի չգնալու նախապայմանով: Բացի այդ օսմանյան իշխանությունները խոստանում էին Հարավարևելյան Կովկասի խանություններին Քերիմ խանի հարձակման դեպքում օգնություն տրամադրել[357]:

Այսպիսով, Հուսեյն Ալիի հպատակություն և հավատարմություն հայտնելը սուլթանին ամենևին չի նշանակում, որ նա անցել է սուլթանի ենթակայության ներքո: Նա պարզապես խուսանավում էր զորեղ հարևան տերությունների միջև և պարտավորվում չօգնել Քերիմ խանին, ինչի դիմաց արժանանում է սուլթանի բարեհաճ վերաբերմունքին և երկու հազար ոսկե դրամ ու սամույրե խալաթ նվեր ստանում: Իսկ վերոնշյալ ֆերմանին ի պատասխան Երևանի Հուսեյն Ալի խանը, հետևելով Հերակլ Բ-ի, Խոյի Ահմադ խանի, Չլդրի վալի՝ Սուլեյման փաշայի օրինակներին, Կարսի սե-

[356] Ֆերմանն ամբողջությամբ տե՛ս Նույն տեղում, էջ 233-234:
[357] Նույն տեղում, էջ 233-234



րասքեր Ալի փաշայի հետ բանակցելով օսմանյան կառավարությանը հավատարմություն է հայտնում[358]:

Ֆերմանում Հերակլ Բ-ի և Խոյի Ահմադ խանի սուլթանին միանալու հանգամանքի հիշատակումը նշանակում է, որ այդ ժամանակ Երևանի խանի արտաքին քաղաքականության վրա զգալի ազդեցություն ունեին վերջիններս: Մենք արդեն որոշ չափով ներկայացրել ենք Հերակլ Բ-ի և Երևանի խանի փոխհարաբերությունները: Այդ իսկ պատճառով կանդրադառնանք Երևանի Հուսեյն Ալի խանի և Խոյի Ահմադ խանի հարաբերություններին: Երկու խաների միջև առկա դաշնակցային հարաբերությունների մասին վկայում են Հուսեյն Ալի խանի կողմից Ահմադ խանին ուղղված նամակները, որոնցում Երևանի խանը հայտնում է իր բարեկամության մասին, շնորհակալություն հայտնելով Խոյի խանի կողմից ուղարկված կտորեղենի և քաղցրավենիքի համար,[359] շնորհավորում է Ահմադ խանին Իմամ Ղուլի խանի նկատմամբ տարած հաղթանակի կապակցությամբ, միաժամանակ պատրաստակամություն հայտնելով նրա համար կատարելու ցանկացած տիպի ծառայություն[360]:

Նրանց դաշնակցային հարաբերություններն ավելի ամրապնդվեցին Հուսեյն Ալի խանի դստեր և Ահմադ խանի ամուսնությամբ: Այս ամուսնությունում իր ավանդն ուներ նաև Հերակլ Բ-ը: Ըստ Իեսե Բարաթաշվիլիի (1728-1786թթ.) 1776թ. Հուսեյն Ալի խանի դուստրը, ով գեղեցիկ էր և հարուստ օժիտի տեր, կնության էին ուզում նաև Գյանջայի Մահմադ խանը և Շուշիի Իբրահիմ խանը: Հուսեյն Ալին բոլոր փեսացուներին գրում է, որ ում Հերակլ Բ-ը կհրամայի տալ, նրան էլ կտա իր աղջկան: Ահմադ խանը Հերակլ Բ-ին երեք հազար թուման և հազար պալատական ծառա է խոստանում[361]: Գյանջայի խանն ուղարկում է պատանդներ[362]: Այսպիսով, ոմանք արծաթ և գումար էին ուղարկում,

[358] Նույն տեղում, էջ 229:
[359] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 55ա:
[360] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 42բ:
[361] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 165:
[362] Նույն տեղում, էջ 165:

ոմանք՝ պատանդներ: Մինչ սրանց գալը Հերակլ Բ-ն իր զորապետին մեկ այլ գործով ուղարկում է Երևանի խանի մոտ և բերանացի հասկացնել տալիս. *«Աղջիկդ Ահմադ խանին տուր, որոշիր»*[363]: Կարծում ենք Հերակլ Բ-ի նման խորհուրդը պայմանավորված էր օսմանյան իշխանությունների այսրկովկասյան քաղաքականությամբ, որի համատեքստում վերջիններս Հերակլ Բ-ին, Հուսեյն Ալի խանին և Ահմադ խանին կարևոր տեղ հատկացնելով՝ փորձում էին սիրաշահել և ամեն ինչ անել, որպեսզի նրանք դաշինքի չգնային Ղրիմ խանի հետ:

Հուսեյն Ալին, ակտիվ կապեր ունենալով օսմանյան փաշաների հետ, երբեմն մասնակցում էր փաշաների միջև մղվող միջիշխանական պայքարին՝ դաշնակցելով կողմերից մեկի հետ, ինչպես եղավ 1774թ., երբ Բայազետի Ավդի և Իսհաղ փաշաների միջև պատերազմ էր ընթանում փաշայությանը տիրելու համար: Այդ ժամանակ Հուսեյն Ալի խանը դաշնակից էր Ավդի փաշային[364]: Ուստի Երևանի խանության շուրջ ընթացող իրադարձություններից անմասն չէին նաև օսմանյան փաշայությունները: Օ. Մարկովան նշում է, որ օսմանյան իշխանության հետ դաշինքի գնալն օգնեց Հերակլ Բ-ին Ղարաբաղի Իբրահիմ խանի հետ տիրել Երևանին՝ չհանդիպելով թուրք փաշաների դիմակայությանը[365]: Պետք է ենթադրել, որ օսմանյան իշխանությունները ճանաչել են Հուսեյն Ալի խանի վասալական կախվածությունը Հերակլ Բ-ից ի հակադրություն Ղրիմ խանի, քանի որ այդ ժամանակ լարված էին վերջինիս և օսմանյան իշխանությունների հարաբերությունները: Չնայած օսմանյան իշխանությունների նման դիրքորոշմանը մենք չունենք բավարար փաստեր պնդելու, որ Երևանում թուլացել էին Ղրիմ խանի դիրքերը և խանությունն ամբողջովին անցել էր Հերակլ Բ-ի ազդեցության ներքո:

Երևանում քննարկվող ժամանակաշրջանում Հերակլ Բ-ի հետ միաժամանակ ազդեցություն ուներ նաև Ղարաբաղի Իբրահիմ

[363] Նույն տեղում, էջ 166:

[364] **Գ. Աղանյանց,** Դիվան հայոց պատմության, գիրք Ը, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարան, մասն երկրորդ (1767-1776), Թիֆլիս 1908, էջ 283:

[365] **О. Маркова,** նշվ. աշխ. , էջ 156



խանը: Պ. Բուտկովի հաղորդման համաձայն Հերակլ Բ-ը դեռևս 1760թ.ից բարեկամական կապեր էր հաստատել Ղարաբաղի խանի հետ, որը տևել էր 23 տարի[366]: Նա Իբրահիմի հետ կիսում է իր ազդեցությունը Հարավարևելյան Այսրկովկասում՝ Երևանից և Գանձակից հարկեր գանձելով[367]: Երևանի Հուսեյն Ալի խանի և Իբրահիմ խանի փոխհարաբերությունների ուսումնասիրման համար կարևոր սկզբնաղբյուր է Հուսեյն Ալիի կողմից վերջինիս ուղարկված նամակը[368]:

Նամակով Երևանի խանը հայտնում է, որ վստահելի մարդ է ուղարկում դաշինքն ամրապնդելու համար, նշում է, որ որոշ խնդիրներ են ծագել, որոնց մասին նամակատարն անձամբ կհայտնի, ինչպես նաև նվերներ՝ կտորեղեն և այլն է ուղարկում, միաժամանակ ներողություն խնդրելով թերացումների համար և հույս հայտնում, որ բարեկամական ամուր կապեր կստեղծվեն միմյանց միջև[369]: Համաձայն այս նամակի Երևանի խանը որոշակի վասալական պարտականություններ է ունեցել Իբրահիմ խանի նկատմամբ: Կարծում ենք, որ Իբրահիմ խանի և Հուսեյն Ալիի միջև առկա «դաշինքը», ինչպես նաև Իբրահիմի Երևանի խանության նկատմամբ ունեցած գերակայությունը բավականին կարճ ժամանակ է ընդգրկել՝ պայմանավորված լինելով թուրք-իրանական հակամարտությամբ և Օսմանյան կայսրության Իրանի դեմ Այսրկովկասում կոալիցիա ստեղծելուն ուղղված քաղաքականությամբ: Հերակլ Բ-ին ևս ձեռնտու չէր Երևանի խանությունում իր ազդեցությունը Իբրահիմ խանի հետ կիսելը: 1779թ. Հերակլ Բ-ի Երևան կատարած արշավանքին Իբրահիմի մասնակից չլինելը փաստում է այն մասին, որ այդ ժամանակ Երևանում նա որևէ ազդեցություն չուներ:

[366] Կողմերի դաշնակցային հարաբերությունների 23 տարի անց դադարումը պայմանավորված էր Ռուսաստանի և Քարթլի-կախեթի թագավորության միջև 1783թ. Գեորգևսկի դաշնագրի կնքումով, որին կանդրադառնանք աշխատության մյուս գլխում:

[367] **П. Бутков**, Материали для новой истории Кавказа, с 1722 по 1803 года,ч. 1, с. 337.

[368] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 123ա:

[369] Նույն տեղում, էջ 124բ:

Այսպիսով, Մատենադարանի պարսկերեն վավերագրական նյութերի ու մյուս աղբյուրների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ Երևանի Հուսեյն Ալի խանը տարածաշրջանում լարված միջազգային իրադրությունում կարողացավ հակամարտող կողմերի հետ պահպանելով բարեկամական հարաբերություններ՝ չթշնամանալ նրանցից որևէ մեկի հետ և շարունակել վարել իր կիսանկախ արտաքին ու անկախ ներքին քաղաքականությունը:

### 3.3. Երևանի Հուսեյն Ալի խանի և Հերակլ Բ-ի փոխհարաբերությունները

Երևանի հայ բնակչությունը կարևոր դերակատարում ուներ խաների և Հերակլ Բ-ի հարաբերություններում: Նշված ժամանակաշրջանում մեծ էր հայ բնակչության թիվը Քարթլի-Կախեթի թագավորությունում: Հայերը ԺԸ. դարի երկրորդ կեսին կազմում էին Թիֆլիսի քաղաքային բնակչության երեք քառորդը և առաջնային էին համարում քաղաքային տնտեսության զարգացումը[370]: Հերակլ Բ-ի բանակում այլազգիների հետ կռվում էին նաև հայերը[371]:

Սույն ժամանակահատվածում հայ ազատագրական գործիչները Հայաստանի ազատագրման իրենց ծրագրերում մեծ հույսեր էին կապում Հերակլ Բ-ի հետ: Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ալեքսեյ Օբրեսկովը 1752թ. օգոստոսի 4-ին գրած զեկուցագրում նշում է, որ *«Հայերը, լսելով, որ իրենց պատրիարքին Հերակլը ընդունել է բոլոր պատիվներով և իրենց՝ հայերին, վրացիներին հավասար հովանավորում է, որոնք նրա զորքերում կազմում են գրեթե կեսը, փառաբանում էին սնապարծությամբ, որ իրենց հավատակիցները ուրիշներից ոչ պակաս լավ զինվորներ են և որ դրանով գերության լծից, որի ներքո նրանք մի քանի հար-*

370 **Պ. Չոբանյան**, նշվ. աշխ., էջ 110:

371 Բազմաթիվ են վկայությունները շված ժամանակաշրջանում հայ-վրացական զինակցության մասին: Առավել մանրամասն տե՛ս **Մ. Չուլյան**, նշվ. աշխ., էջ 227, **Պ. Չոբանյան**, նշվ. աշխ., էջ 109-155:



*յուրամյակ գտնվում են, կազատագրվեն*[372]: Էնզելիում (Իրանում) գտնվող ռուսական հյուպատոսը գրում է. *«Վրաստանի տիրակալ Հերակլը, սկսելով Վրաստանի կառավարումը, շատ դեպքերում հանդես էր գալիս պարսկական կամայականություններից Երևանի քաղաքացիների և բնակչության պաշտպանությամբ՝ որպես հարևան ու քրիստոնյա…»*: Հյուպատոսը նշում է, որ Երևանի հայերը տարբեր խնդրանքներով հանույքով դիմում են Հերակլին և դրամ տրամադրում, երբ վերջինս դրամական պահանջներ է ունենում[373]: 1760թ. կաթողիկոս Հակոբ Շամախեցին նամակ է գրում կայսրուհի Ելիզավետա I (1742-1761թթ.) և տեղեկացնում, որ վրաց ու հայ ժողովուրդը, տարիներ ի վեր օտար տիրապետության տակ լինելով, ավելի ծանր բեռի տակ ընկան Իրանում թագավորության անկումից հետո: Կաթողիկոսը խնդրում է Ռուսաստանին ուշադրություն դարձնել Թեյմուրազ Բ-ի խնդրանքին և օգնություն ցուցաբերել լեզգիների դեմ պայքարում, քանի որ նրանք անընդհատ ավերի ու թալանի են ենթարկում հայ ու վրաց ժողովրդին[374]:

Այսպիսով, ԺԸ. դարի երկրորդ կեսին մահմեդականների դեմ պայքարում շարունակվում էր հայ-վրացական համագործակցությունը: Արևելյան Հայաստանի հայությունը, լինելով մահմեդական տիրակալների ենթակայության ներքո, փորձում էր Հերակլ Բ-ի օգնությամբ ամրապնդել իր դիրքերը և թեթևացնել օտար լուծը: Հայությունը վրացիների հետ համագործակցում էր նաև ռուսական կայսրության հովանու ներքո անցնելու քաղաքականության գործում: Հերակլ Բ-ն իր հերթին ի դեմս հայության ամուր հենարան ուներ իր ներքին և արտաքին քաղաքականության ուղղվածության մեջ: Ըստ Օ. Մարկովայի՝ Երևանի խաների վրա Հերակլ Բ-ի իշխանության ամրությունը պայմանավորված էր

372 **Պ. Չոբանյան**, նշվ. աշխ., 159:

373 **Պ. Չոբանյան**, նշվ. աշխ., էջ 193, Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., Сборник документов, том IV, с. 101.

374 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 18:

նաև խանության հայ բնակչությանը ցուցաբերած աջակցությամբ[375]:

Երևանի Հուսեյն Ալի խանը, ինչպես բազմիցս նշեցինք, Հերակլ Բ-ին հարկատու դառնալով պահպանում է ներքին ինքնավարությունը, փոխարենը վրաց թագավորը պետք է պաշտպաներ խանությունն արտաքին թշնամիներից: Այս կարգավիճակը օգնեց Երևանի խանին խուսանավել արտաքին քաղաքականության մեջ և համեմատաբար ապահով պահպանել խանության սահմանները: Հուսեյն Ալի խանի արտաքին քաղաքականության մեջ Հերակլ Բ-ի դեմ չգործելու դեպքում, համեմատաբար անկախ էր:

Հովսեփ Էմինի Երևանում իրականացրած գործունեության ուսումնասիրությունը թույլ է տալիս ըմբռնել Հերակլ Բ-ի և Հուսեյն Ալի խանի փոխհարաբերությունների ենթաշերտերը, մասնավորապես, թե արդյո՞ք իր ներքին և արտաքին քաղաքականության մեջ խանը կաշկանդված էր Հերակլ Բ-ին հարկատու լինելով, թե ոչ, ինչպես նաև՝ ինչ դերակատարում այդ ամենում ունեին հայերն ու հայ քաղաքական միտքը: 1764թվականին Սիմեոն կաթողիկոսը Հերակլ Բ-ին ուղղված նամակում, անդրադառնալով Երևանում Հովսեփ Էմինի մարդկանց վարքագծին, գրում է. *«Այդ մեր պարոնին մեկ-երկու մարդ ունի, որք միշտ գան յայս կողմունս և համարձակ ծաղր առնին....: Յայս միջոցին մեկ մահտեսի Գրիգոր մի ունի, եկն յԵրևան և աստ լրբաբար խօսելով կոուել է ընդ խանի մարդկանցն, և նոքա ևս զնեալ էին զնա և մերկացուցեալ և զոր ինչ գրեանս ունէր առեալ էին և տարել խանին և այլոց ցոյց տուեալ»*[376]: Այնուհետև անդրադառնալով Էմինի մարդկանց մոտից գտնված երկու գրություններին՝ կաթողիկոսը նշում է, որ դրանցից *«մեկն ի տէրութէնէդ առ Սուրբ Կարապետա առաջնորդ Յօնան վարդապետն գրեցեալ, զորս տեսին ամենեքեան և առ մեզ ևս բերին, և տեսաք, որ քո կնիքն էր և յոյժ զարմացաք: Բայց մեք ստեցաք՝ ասելով, թե այդ կնիքդ հնարացեալ է և ոչ է վալուն կնիքն»*[377]:

[375] **О. Маркова,** указ. соч., с. 141.
[376] **Գ. Չոբանյան**, նշվ. աշխ., էջ 164:
[377] Նույն տեղում, էջ 164:



Հայտնի է, որ Հովսեփ Էմինը Հայաստանի ազատագրման գործում կարևոր տեղ էր հատկացնում նաև Հերակլ Բ-ին, և Սիմեոն Երևանցին պետք է այնպես աներ, որ Հուսեյն Ալի խանը հայության և Հերակլ Բ-ի կողմից եկող որևէ վտանգ չտեսներ իր իշխանության նկատմամբ: Այդ պատճառով Սիմեոն Երևանցին Հովսեփ Էմինի մարդկանց մոտ հայտնաբերված նամակի Հերակլ Բ-ի կողմից գրված լինելը հերքում է՝ իմանալով, որ հայ-վրացական համագործակցությունը կարող է հանգեցնել հայության նկատմամբ Հուսեյն Ալի խանի անվստահությանը և հալածանքներին: Սակայն միայն այդ պատճառով կաթողիկոսը չէր կարող Հերակլ Բ-ի անունից խանին հավաստել, որ այդ կնիքը կեղծված է: Կաթողիկոսի նման քայլը հուշում է Սիմեոն Երևանցու և Հերակլ Բ-ի ընդհանուր խնդիրներ ունենալու, թուրք և պարսիկ նվաճողների դեմ ընդհանուր պայքարելու (անկախ դրա տվյալ ժամանակահատվածում իրատեսական կամ ոչ իրատեսական լինելուց) քաղաքականության մասին: Այս դեպքերի քննությունից մեկ այլ կարևոր եզրակացության ևս կարելի է հանգել: Դա վերաբերվում է Հուսեյն Ալի խանի և Հերակլ Բ-ի փոխհարաբերություններին: Երևանի խանը Հերակլ Բ-ի հարկատուն էր, սակայն Սիմեոն Երևանցին փորձում էր Հերակլ Բ-ին «արդարացնելու» Հուսեյն Ալի խանի մոտ, որպեսզի խանը չկարծեր, որ նա պարսիկների դեմ ուղղված քայլեր է ծրագրում: Այս փաստը խոսում է խանի բավականին ինքնուրույն լինելու: Սակայն դա բավարար չէր, որպեսզի կաթողիկոսը ցանկություն ունենար Հերակլ Բ-ին պաշտպանել խանի մոտ: Կարծում ենք տվյալ ժամանակահատվածում Հերակլ Բ-ը Երևանի խանի նկատմամբ որոշակի զգուշավոր քաղաքականություն էր վարում՝ հաշվի առնելով Քերիմ խանի ազդեցությունը տարածաշրջանում: Վերջինս, ակտիվ ռազմական գործողություններ իրականացնելով Ղարաբաղի և Ղուբայի խանությունների դեմ, կարողանում է հաղթել և իր հետ գերի տանել Ղուբայի Ֆաթհ Ալի Խանին և Ղարաբաղի Փանահ խանին[378]:

[378] **Գ. Աղանյանց**, Դիվան Հայոց պատմության, Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 491:

Այս շրջանում Երևանի խանն իր հերթին չխուսափեց օգնական զորք ուղարկել Գանձակի Ջահվերդի խանին, ում դեմ դաշինք էին կազմել Ղարաբաղի Իբրահիմ խանը (Փանահ խանին Ղարաբաղում փոխարինեց իր որդի Իբրահիմը), Շիրվանի Հուսեյն խանն ու Հերակլ Բ-ը[379]: 1770թ. մայիսի 28-ին էնզելիում ռուս հյուպատոս Գավրիլա Բոգոլյուբովը արտաքին գործերի կոլեգիային գրում է, որ Քերիմ խանը Երևանի խանին կոչ է անում հրաժարվել Հերակլ Բ-ին հարկ վճարելուց և դիմադրություն ցույց տալ: Հերակլ Բ-ը աջակցություն ունի Երևանի հայության կողմից: Հերակլ Բ-ը սպառնալիքներով Երևանի խանից երեսուն հազար ռուբլի[380] հարկ է վերցնում, ցույց տալով, որ պատրաստ է զենքի ուժով վեքիլից (Քերիմ խանից) վերցնել Երևանը: Քանի որ Երևանի խանը բավարար ուժ չուներ Հերակլ Բ-ին դիմակայելու, սպասվում էր, որ գործը կհասնի վեքիլի և Հերակլ Բ-ի բախմանը[381]: Այսպիսով կարող ենք փաստել, որ Հերակլ Բ-ի իշխանությունը Երևանի վրա հաստատուն չի եղել, երբեմն Հուսեյն Ալին անգամ բացահայտ գործել է վրաց արքայի դեմ:

Աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ Երևանի խանն ակտիվ նամակագրական կապեր է ունեցել Հերակլ Բ-ի, ինչպես նաև նրա կնոջ՝ Դարեջան թագուհու, և որդու՝ արքայազն Գեորգիի հետ: Ժամանակակից սկզբնաղբյուրներում հեղինակները, հիշատակելով Հերակլ Բ-ի դեպի Երևան իրականացրած արշավանքները, նշում են, որ դա Երևանի Հուսեյն Ալի խանի հարկատվությունից խուսափելու հետևանքն էր: Վրացական արքունիք ուղարկված նամակների ուսումնասիրումից հնարավոր է

[379] Նույն տեղում, էջ 492:

[380] Հարկի չափն ըստ էության ճիշտ նշված չէ, քանի որ այլ սկզբնաղբյուրներում այն նշվում է 3 000 թուման: Թիֆլիսի թումանով հաշվելու դեպքում հարկը կկազմի 30 000 ռուբլի: Սակայն եթե հաշվի առնենք, որ վրաց արքունիք ուղարկվենիք հարկը թավրիզի թումանով էր հաշվում, ապա 3000 թումանը ռուբլու վերածելիս կլինեն 9000-ից քիչ ավելի: Կարծում ենք այստեղ գործ ունենք ինչ որ թվաբանական շփոթմունքի հետ:

[381] Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., Сборник документов, том IV, с. 101.



լինում առավել մանրամասն և արժեքավոր տեղեկատվություն ստանալ հարկի վճարման կարգի, ինչպես նաև հարկատվությունից խուսափելու եղանակների մասին: Հուսեյն Ալին, բանեցնելով ճկուն դիվանագիտություն, չէր հրաժարվում հարկատվությունից, փոխարենը այն կանոնավոր կերպով չէր իրականացնում: Վրաց թագուհի Դարեջանին գրված նամակում խանը, հավաստելով իր հավատարմությունը և բարեկամությունը, նշում է, որ 400 թավրիզի թուման է ուղարկում,[382] մեկ այլ դեպքում 200 թավրիզի թուման է ուղարկում, միաժամանակ պատրաստակամություն հայտնելով կատարելու ցանկացած տիպի ծառայություն[383]: Բացի սա, խանը երբեմն գումարի փոխարեն որպես հարկ գյուղմթերք էր ուղարկում: Վրաց արքունիք գրված նամակներից մեկով Երևանի խանը նշում է, որ Բաքա բեկի միջոցով 1000 ձմերուկ է ուղարկում Վրաստան, խնդրելով ներել իրեն հարկի վճարումն ուշացնելու համար[384]: Հերակլ Բ-ն իր հերթին փորձում էր տարբեր մեթոդներ գործի դնելով Երևանի խաներից ստանալ իր հարկը: Նման մեթոդներից մեկն իր պարտատերերին վճարելու փոխարեն Երևանի խանից համապատասխան գումարը վերցնելու փոխգիր տալն էր: Այսպես նա վարվեց տպագրիչ Պողոս Հովհաննիսյանի դեպքում, ով Թիֆլիսում տպարան էր հիմնադրել և Հերակլ Բ-ը, դրա դիմաց չվարձատրելով նրան, 400 թումանի փոխգիր տվեց, որպեսզի նա այդ գումարը վերցնի Երևանի խանից[385]:

Խանի հարկատվությունից խուսափելը երբեմն հանգեցնում էր Հերակլ Բ-ի կողմից պատժիչ արշավանքի իրականացմանը,

[382] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233:

[383] Նույն տեղում, էջ 59ա:

[384] Նույն տեղում, էջ 37բ:

[385] **Ս. Ճեմճեմեան,** Տպագրիչ Պօղոս Արապեան և Հերակլ Բ. Վրաց թագաւորը, Բազմավէպ, 1978թ. 1-2, Վենետիկ, Սուրբ Ղազար, էջ 84: Պօղոսը էջմիածին է գալիս 1783թ. հոկտեմբերին և նոր տպագրական դազգահի հիմնումը սկսում: Այն ավարտելով 1784 փետրվարի 5-ին՝ Պօղոսը չի հեռանում, քանի որ դեռ չէր վերցրել իր գումարը խանից: Նա գումարը մեծ դժվարությամբ է վերցնում և մարտ-ապրիլ ամիսներին հեռանում է Երևանի խանությունից: Նույն տեղում, էջ 84-85:

որոնց միջոցով Հերակլ Բ-ը վերականգնում էր ազդեցությունը Երևանի խանությունում: Հերակլ Բ-ը այդ արշավանքներն իրականացնում էր այն ժամանակ, երբ խանության նկատմամբ հետաքրքրություններ ունեցող այլ ուժեր, ինչպիսիք են օսմանյան փաշաները, Քերիմ խանը, այլ ներքաղաքական կամ արտաքին քաղաքական խնդիրներով զբաղված լինելով, չէին խոչընդոտի Հերակլ Բ-ին:

Երևանի խաների և վրաց թագավորի հարաբերություններում ինչպես այս արշավանքների ժամանակ, այնպես էլ արշավանքների հետևանքների հաղթահարման՝ կողմերի հաշտեցման ժամանակ մեծ նշանակություն ուներ Սիմեոն Երևանցու և նրա հաջորդ Ղուկաս Կարնեցու կատարած միջնորդական գործունեությունը: Հերակլ Բ-ը արշավանքները Երևան տեղի են ունեցել 1765 և 1779 թվականներին: Հերակլ Բ-ի 1765թ. արշավանքն արյունալի հետևանքներ չի ունենում: Մեր պատմագրությունում[386] ընդունված է սկզբնաղբյուրներում առկա այն տեսակետը, որ Սիմեոն կաթողիկոսի միջնորդությամբ առանց մարտերի Հերակլ Բ-ը համաձայնում է Երևանի խանության իրեն հարկատու վիճակը պահպանվելու պայմանով դադարեցնել արշավանքը[387]: Այն, որ Սիմեոն Երևանցին այս արշավանքի ժամանակ ակտիվ գործունեություն է ծավալել Հերակլ Բ-ին Երևանում ռազմական գործողություններ իրականացնելուց զերծ պահելու ուղղությամբ, միանշանակ անհերքելի փաստ է: Սակայն մենք հակված չենք կարծելու, որ Հերակլ Բ-ը, ունենալով ոչ մեծ ֆինանսական միջոցներ, Երևանը թալանելու և մեծ ավարով, առանց լուրջ ռազմական

---

386 **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը (1500-1800թթ.), էջ 111, **Լեո,** Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան 1973թ., էջ 817-818 և այլն:

387 Այս դեպքերի քննման արժեքավոր սկզբնաղբյուրներից է **Գ. Աղանյանց,** Դիվան Հայոց պատմության, Գիրք Գ, Թիֆլիս 1894թ., Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 194-218, աշխատությունը, որի «Յաղագս զպատեան Աստուածազօր Արքային վրաց Հերակլայ յերկիրս Երևանու ի ՌՄԺԴ ամի (1765) թուականութեանս մերում, եւ 'ի Ցունիս ամսեանն» գլուխը ամբողջությամբ նվիրված է վերոնշյալ իրադարձություններին:



կորուստների վերադառնալու հնարավորություն, պարզապես Սիմեոն Երևանցու միջնորդությամբ դադարեցրեց իր արշավանքը՝ զրկվելով մեծ ավարից: Ամենևին չթերագնահատելով Սիմեոն Երևանցու ծավալած գործունեությունը և նրա անձնական հեղինակությունը Հերակլ Բ-ի մոտ, կարծում ենք, որ վերջինիս կողմից արշավանքի դադարեցումը կարող էր պայմանավորված լինել Վախթանգ 6-րդի (1711-1714թթ., 1716-1724թթ.) ապօրինի որդի Պաատայի ապստամբությամբ: Վերջինս Հերակլ Բ-ից դժգոհ մի խումբ իշխանների հետ դավադրություն էր փորձում կազմակերպել նրա դեմ և նրան սպանելով բազմել գահին: Սակայն դավադրությունը ժամանակին բացահայտվում է և Հերակլ Բ-ը կարողանում է կանխել այն[388]:

Այս արշավանքից հետո Հերակլ Բ-ին հարկատու դարձան նաև Երևանի խանության տարածքում ապրող քրդերը, որոնց առաջնորդ Սուլեյմանի դստեր հետ ամուսնացած էր Երևանի Հուսեյն Ալի խանը: Սուլեյմանի գլխավորությամբ քրդերը պարբերաբար ավերիչ արշավանքներ էին կատարում դեպի Կարսի, Բայազետի և այլ շրջաններ: Ղազախի գյուղերը ավերելու և մարդկանց կոտորելու ժամանակ քրդերը սպանում են ղազախցիների առաջնորդ Ջաֆար յուզբաշու որդուն[389]: Հերակլ Բ-ի արշավանքի ժամանակ քրդերը խուսափում են վերջինիս հետ բախումից, անցնում են Արաքս գետը՝ հեռանալով Երևանի խանության տարածքից: Հուսեյն Ալի խանը Հերակլ Բ-ի հետ հարաբերությունները կարգավորելուց հետո դիմում է Սիմեոն Երևանցուն, որպեսզի վերջինս միջնորդի Հերակլ Բ-ի մոտ Հուսեյն Ալի խանի աներոջ՝ Սուլեյմանի համար, և քրդերը նրա գլխավորությամբ կարողանան վերադառնալ և բնակվել Երևանի խանությունում: Սիմեոնը պատասխանում է, որ դժվար կլինի միջնորդել առանց տուրք խոստանալու: Հուսեյն Ալի խանն առաջարկում է վերահաստատել այն կարգը, որը եղել է Նադիր շահի ժամանակ, համաձայն

---

388 **О. Маркова,** նշվ. աշխ., էջ 132.

389 **Գ. Աղանյանց,** Դիվան Հայոց պատմության, Գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 195:

որի քրդերը թե՛ տեղի խանին, թե՛ շահին 300-360 թուման տուրք էին տալիս: Սիմեոնի միջնորդությամբ Հերակլ Բ-ը թույլ տվեց քրդերին Սուլեյմանի գլխավորությամբ վերադառնալ[390]: Ի պատասխան կաթողիկոսի միջնորդության Սուլեյմանը հետագայում օգնեց նրան: Երբ Սիմեոն Երևանցին հրաժարվեց մի քանի տարվա հարկ վճարել խանին և նրանց միջև խնդիրներ ծագեցին, Սուլեյմանի միջնորդությամբ խանը հաշտվեց կաթողիկոսի հետ[391]: Դառնալով Հերակլ Բ-ի հարկատու՝ քրդերը հետագայում 1767թ. և 1769թ. հարկ չվճարեցին, ինչին հետևեց Հերակլ Բ-ի պատժիչ արշավանքը քրդերի դեմ[392]:

Որոշ ժամանակ անց Հուսեյն Ալի խանը կրկին հրաժարվում է Հերակլ Բ-ին տարեկան 3000 թուման[393] հարկ վճարել[394]: Վրաց արքան Հուսեյն Ալի խանին պատժելու համար 1778թ. զորքով արշավում է Երևանի վրա[395]: Սակայն Երևանի բերդ չհասած կաթողիկոս Սիմեոն Երևանցու միջնորդությամբ դադարեցնում է արշավանքը՝ իր պահանջը խանի կողմից կատարելու խոստման դիմաց: Սակայն խանը չի կատարում իր խոստումը և չի վճարում հարկը: 1779թ. Քերիմ խանի մահանալուց հետո[396] Հերակլ Բ-ն իրեն առավել ազատ զգաց Երևան պատժիչ արշավանք իրականացնելու համար, քանի որ մինչ այդ Հերակլ Բ-ի նման արշավանքը կարող էր հանդիպել Քերիմ խանի հակազդեցությանը: Հուսեյն Ալի խանն իր հերթին փորձում էր օգտագործել Հերակլ Բ-ի և Քերիմ խանի մեջ եղած այս հակասությունը և խուսափել կանոնավոր հարկատվությունից: Սակայն իրադրությունը փոխվեց Քերիմ խանի մահվանից հետո, և Հերակլ Բ-ը, իրեն իր գործողություններում ավելի ազատ զգալով, իր որդի Լևոնի հետ 12000-անոց զորքով, որոնց մեջ մեծ թվով լեզգիներ կային, շարժվում է Երևանի վրա[397]: Խանը, լսելով Հերակլ Բ-ի արշավանքի մասին, խնդրում է Սիմեոն Երևանցուն միջնորդել: Սակայն այս անգամ Հերակլ Բ-ը վճռական էր տրամադրված և կաթողիկոսի միջնորդությունները չեն օգնում: Խանը փորձում է հաշտության գնալ Հերակլ Բ-ի հետ՝ խոստանալով նրան տալ 4000 թուման և այլ նվերներ: Սակայն Հերակլ Բ-ը չի համաձայնվում[398]:

Գ. Աղանյանը, անդրադառնալով այդ դեպքերին, նշում է, որ այդ արշավանքի ժամանակ «...*ամենահարուստ հայ գիւղերը գաղթեցին Բայազետ և այլ տեղեր...*»[399]: Հերակլ Բ-ը չի կարողանում գրավել Երևանի բերդը: Անհաջողության մատնվելով այս նախաձեռնությունում նա փորձում է Երևանի բնակչությանը գերեվարել և բնակեցնել իր երկրում, որով կթուլացներ Երևանի խանին: Այդ նպատակով նա. «*առաքէ զոմանս ի հաւատարմաց իւրոց՝ զՄէլիք Սաքարօ, զՄիրզա Ռապի և զտէր Յօհաննէս Հայոց ի Բյուր գիւղէ առ Հայս փախուցեալս ի Բայազիտ, խօսիլ ընդ նոսա զխաղաղութիւն, թէ՝ ընդէ՞ր իբր յօտարէ ընդոստեալ խուսափէք զձեզ յանկիւնս աշխարհաց Քրդաց, ո՞չ ապաքէն վասն ձեր առի զզէն՝ փրկել զձեզ ի ձեռաց Պարսիցն ձերոց նեղչաց*»[400]: Որոշ աղբյուրների հաղորդման համաձայն Երևանի խանությունից բռնագաղթվածների մեջ եղել են նաև թուրքեր և պարսիկներ[401]:

390 Նույն տեղում, էջ ՃՁԴ:
391 **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան**, Ազգապատում, Հատոր Բ, Էջմիածին 2001, էջ 3527:
392 **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 188-189:
393 Ամենայն հավանականությամբ այստեղ խոսքը թավրիզի թումանի մասին է, քանի որ սովորաբար վրացական աղբյուրներ ուղարկվելիք գումարը Երևանի խաները հաշվում էին թավրիզի թումանով: Վրացական աղբյուրներ ուղարկվելիք գումարների դրամական միավորի մասին տե՛ս ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 38բ, 59ա:
394 **Գ. Աղանյանց**, Դիվան հայոց պատմության, Գիրք Դ, (Ղուկաս կաթողիկոս), Թիֆլիս 1899, էջ ԻԸ:
395 Նույն տեղում, էջ ԻԸ:
396 **H. Algar**, Religion and State in Iran 1785-1906. The Role of the Ulama in the Qajar Period, University of California Press Berkley, Los Angeles, London, 1980, p 33.



397 **Գ. Աղանյանց**, Դիվան հայոց պատմության, Գիրք Դ, (Ղուկաս կաթողիկոս), Թիֆլիս 1899, էջ ԻԸ:
398 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 179:
399 **Գ. Աղանյանց**, Դիվան հայոց պատմության, Գիրք Դ, (Ղուկաս կաթողիկոս), էջ ԻԸ
400 [Բարսեղ Սուրդունեանց], նշվ. աշխ., էջ 280:
401 **Պ. Չոբանյան,** նշվ. աշխ., էջ 199:

Հարկ ենք համարում նշել այն հանգամանքը, որ Հերակլ Բ-ը հայ բնակչությանը խոստանում է ետ վերադառնալու դեպքում փոխհատուցել նրանց իրենց նախկին գրկանքների համար. «գրկանս ձեր տումեցից ի Պարսից եօթնապատիկ»: Նա պարտադրում է նաև Սիմեոն Երևանցուն, որ նա ևս քայլեր ձեռնարկի փախստականներին ետ վերադարձնելու ուղղությամբ, հավաստելով, թե. «վասն դոցա փրկութեան առի զզէն»: Վրաց արքան Բայազետի փաշայից ևս պահանջում է ետ վերադարձնել այնտեղ ապաստանած հայերին[402]:

Հայերի վերադառնալուց հետո Հերակլ Բ-ը դրժում է իր խոստումը և հայերին գերեվարում ու տանում է Թիֆլիս: «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագրի «Ցիշատակարան ազգային արդեան պատմության համար» հոդվածում անդրադարձ է արվում այս դեպքերին և նշվում, թե որ գյուղի բնակիչներն են գերի տարվել Թբիլիսի. *«Հերակլը հետևյալ գյուղերի բնակիչներին է տանում գերի Թիֆլիս՝ Հախունս Բալասան մելիքավ նոցա, Բյուր Մինաս մելիքավ նոցա, Ալեթլու և Էվճիլար գյուղերը քեթխոդայովք նոցա: Այս գյուղերը Երասխից այն կողմ էին, իսկ այս կողմից՝ Քեալակարխու և Սարգիս-ջան մելիք նոցա, Ծահրիարուև Յօհան մելիք քեթխուդայ նոցա, Ղուրդուղուլու և խրտնած Հարություն քեթխուդայ նոցա: Աշտարակ և Գէորգ իշխան նոցա»*[403]: Հարկ ենք համարում նշել, որ վրացական պատմագրությունում այս դեպքերը հաճախ խեղաթյուրված են ներկայացվում. Ա. Ճեիշվիլին նշում է, որ վրացիները գրավում և ավերում են Երևանը, Գ. Մայսուրաձեն ենթադրում է, որ արշավանքի ժամանակ Երևանից չհեռացած գյուղերի բնակչությունը պատրաստ էր ընդունել վրացահպատակություն, ուստի նրանց նկատմամբ բռնություն չկիրառեց և խանությունից հեռացրեց միայն իր նկատմամբ վտանգ ներկայացնող բնակչությանը[404]:

402 Նույն տեղում, էջ 201:
403 [Բարսեղ Սուքրունենանց], նշվ. աշխ., էջ 280:
404 Պ. Չոբանյան, նշվ. աշխ., էջ 199:



Վաղարշապատի բնակիչները կարողանում են փրկվել: Նրանց Սիմեոն Երևանցին ապաստան է տալիս Էջմիածնի պարիսպների ներսում՝ Հերակլ Բ-ին խոստանալով վանքը չավերելու դեպքում կատարել նրա պահանջները: Հերակլ Բ-ը կաթողիկոսից մեծ չափի գումար է պահանջում, ինչը և ստանում է[405]:

Արշավանքի հենց սկզբում Հուսեյն Ալի խանը հայությանը կասկածում էր Հերակլ Բ-ի հետ համագործակցելու մեջ՝ կարծելով, որ հայերը ցանկանում են, որ Երևանի բերդին տիրի իրենց հավատակից արքան: Այդ պատճառով մինչ Երևանի բերդի պաշարվելը խանը հայ բնակչության մի մասին, այդ թվում տանուտերեր նշանավորների, պահում է բերդի տարածքում: Հերակլ Բ-ի հեռանալուց հետո խանը նշանավոր հայերին տանջանքների է ենթարկում և մեծ գումարներ խլում նրանցից, նրանցից մեկին մահապատժի ենթարկում՝ մեղադրելով Հերակլ Բ-ի հետ համագործակցելու և նրան դեպի Երևան արշավելու հրահրելու մեջ[406]:

Հերակլ Բ-ի այս արշավանքը և բնակչության գերեվարումը մեծ վնաս հասցրեցին Հուսեյն Ալի խանին: Վերջինս քայլեր է ձեռնարկում Հերակլ Բ-ի հետ հաշտվելու համար: Նա հույս ուներ, որ հաշտությունից հետո Հերակլ Բ-ը թույլ կտար Վրաստան գաղթեցված բնակչության մի մասին վերադառնալ Երևան: Խանի և Հերակլ Բ-ի հարաբերություններում միջնորդի դեր է կատարում Չլդրի Սուլեյման փաշան[407]: Հուսեյն Ալի խանն իր կնիքապահին ուղարկում է նրա մոտ՝ խնդրելով նրա միջնորդությունը, որպեսզի վրաց արքան թույլատրի Երևանից բռնագաղթած բնակչությանը ետ վերադառնալ[408]: Վ. Գրիգորյանը Սուլեյման փաշայի միջնորդի դերը բացատրում է Օսմանյան կայսրության նախաձեռնությամբ, որին ձեռնտու չէին Երևանի և Վրաստանի միջև թշնամական հարաբերությունները, քանի որ օսմանյան իշխանություններ-

405 **А. Араратян,** նշվ. աշխ. , էջ 55.
406 **Е. Хубов**, Описание достопамятных происшествий в Армении случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршество Симеонова (1779 г) до 1809 года, Санкт-Петербург 1811г, с. 3-4.
407 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 111ա.
408 Նույն տեղում, էջ 147ա:

որ կարծում էին, որ Հերակլ Բ-ը կարող էր վերջնականորեն գրավել Երևանը: Կարծում ենք տվյալ ժամանակահատվածում Հերակլ Բ-ն այնուամենայնիվ ի վիճակի չէր վերջնականորեն գրավել Երևանը, քանի որ վրաց թագավորը չուներ բավարար ռազմական ուժ անգամ իր երկիրը լեզգիների արշավանքներից պաշտպանելու:

Հուսեյն Ալի խանը մի քանի անգամ պատվիրակություն է ուղարկում Հերակլ Բ-ի մոտ՝ բանակցելու: Չնայած այս բանակցությունները որոշակիորեն թուլացնում են լարված հարաբերությունները կողմերի միջև, այնուամենայնիվ դրանք վերջնական հաջողություն չեն ունենում, քանի որ Հերակլ Բ-ը չի հաշտվում խանի հետ: Այս բանակցություններին իր միջնորդությունն էր հանդես բերում նաև Էջմիածնի կաթողիկոս Ղուկաս Կարնեցին[409]:

Օգտվելով Հուսեյն Ալի Խանի թուլացած դիրքերից՝ մի քանի քոչվոր ցեղեր ապստամբություն են բարձրացնելում խանի դեմ, դուրս են գալիս խանության տարածքից և այլ ցեղերի հետ միավորվելով պարբերաբար ավերիչ և թալանիչ հարձակումներ իրականացնում խանության տարածքներում[410]:

Սակայն իրադրությունը տարածաշրջանում շուտով փոխվում է և Հերակլ Բ-ը շտապում է հաշտվել Հուսեյն Ալի խանի հետ: Հերակլ Բ-ի դաշնակից Իբրահիմ խանը պատերազմի մեջ է մտնում Խոյի Ահմադ խանի հետ և Հերակլ Բ-ը, ունենալով Խոյ արշավելու ծրագրեր, ստիպված պետք է անցներ Արարատյան դաշտով, ինչի համար էլ նրան պետք էր հաշտություն Հուսեյն Ալի խանի հետ[411]: Կարծում ենք, որ այս իրադարձություններին հաջորդել է Հերակլ Բ-ի կողմից միջնորդներից որևէ մեկի միջոցով Հուսեյն Ալի խանին հաշտվելու ցանկության մասին հայտնելը: Դրա մասին է հուշում Երևանի Հուսեյն Ալի խանի Հերակլ Բ-ին ուղղված նամակներից մեկը, որով խանը նշում է, որ մեծ ուրախությամբ է

[409] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 69-71:
[410] Նույն տեղում, էջ 70:
[411] Նույն տեղում, էջ 72:



ընդունել վերջինիցս եկած լուրը և ֆինանսական միջոցներ է ուղարկում նրան[412]: Նամակը վերնագրված է «Վալիի մոտ բանակցող ուղարկելու վերաբերյալ», ինչը ենթադրում է, որ Հուսեյն Ալի խանը նոր պատվիրակություն է ուղարկել Հերակլ Բ-ի մոտ: Իրադարձությունների ուսումնասիրումն առավել խորքային է լինում սկզբնաղբյուրների հաղորդած այլ տեղեկությունների շնորհիվ: Համաձայն դրանց, Հուսեյն Ալին 1781թ.ի նոյեմբերին չորրորդ պատվիրակությունն է ուղարկում Հերակլ Բ-ի մոտ՝ իր որդի Ղուլամ Ալի խանի գլխավորությամբ: Այս պատվիրակության այցին հաջորդում է Վրաստան բռնագաղթեցված գյուղացիների մի մասի վերադարձը Երևանի խանություն: Հաշտության շուրջ բանակցելու համար Ղուլամ Ալի խանի հետ Երևան է գալիս Հերակլ Բ-ի ներկայացուցիչ Իվանե Մուխրան բեյը, ով, մինչև 1782թ. հունվարի 12-ը մնալով Երևանում, հասնում է հաշտության կնքման, որի համաձայն Երևանի խանը պետք է Հերակլ Բ-ին նախկինի պես տարեկան 3000 թուման վճարեր, անհրաժեշտության դեպքում իր զորքով օգնության հասներ, ինչպես նաև Երևանի խանները պետք է այսուհետ նախքան իրենց իշխանությունը ժառանգելը, հաստատվեին Հերակլ Բ-ի կողմից[413]:

Այսպիսով, Մատենադարանի դիտարկվող շրջանի պարսկերեն վավերագրերի տվյալների ներգրավումը օգնում է առավել ամբողջական դարձնել վրաց թագավոր Հերակլ Բ-ի և Երևանի Հուսեյն Ալի խանի փոխհարաբերությունների ուսումնասիրությունը և եզրակացնել, որ Երևանի խանի փորձերը տարածաշրջանի այլ ուժերի հետ համագործակցելով խուսափել Հերակլ Բ-ի նկատմամբ իր վասալական պարտականությունները կատարելուց միշտ չէ, որ պսակվում էին հաջողությամբ: Ի վերջո Երևանի խանության նկատմամբ այլ հավակնորդների բացակայության պայմաններում Հերակլ Բ-ը կարողացավ մեծ ուժերով արշավել Երևան և ամրապնդել իր ազդեցությունն այստեղ: Եթե 1750-1770-

[412] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 222բ:
[413] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 73:

ականների վերջ ընկած ժամանակահատվածում Հուսեյն Ալի խանը պարտավոր էր միայն 3000 թուման գումար հարկ վճարել՝ փոխարենը ստանալով ռազմական օգնություն վրաց արքայից և պահպանել ներքին ինքնուրույնություն, ապա Հերակլ Բ-ի 1779թ. արշավանքից հետո խանությունը ծանր դրության մեջ հայտնվեց և Հուսեյն Ալի խանի ու Հերակլ Բ-ի միջև 1782թ. կնքված հաշտությունից հետո Հերակլ Բ-ի ազդեցությունն ուժեղացավ Երևանում. այսուհետ Երևանի խաների ինքնուրույնությունը սահմանափակված էր խանության ներսում, քանի որ նրանք պետք է հաստատվեին Հերակլ Բ-ի կողմից, ինչպես նաև արտաքին քաղաքականության մեջ համագործակցեին նրա հետ՝ անհրաժեշտության դեպքում զորք տրամադրելով:



## ԳԼՈՒԽ IV.

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1780-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

### 4.1. Երևանի խանությունը 1780-ականների ռուս-իրանական հարաբերությունների համատեքստում

Քերիմ խանի մահվանից հետո, երբ Իրանում շահական գահի օրինական ժառանգորդի բացակայության պայմաններում կրկին գահակալական կռիվներ սկսվեցին, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Այսրկովկասում իրենց ազդեցությունը տարածելու համար: Իրանում Ռուսական կայսրության հյուպատոս Ի. Տումանովսկին, արտաքին գործերի կոլեգիային գրած հաշվետվությունում, նկարագրելով իրադրությունը Իրանում Քերիմ խանի մահվանը նախորդող ժամանակաշրջանում, նշում է, որ Իրանը, օրինական շահի բացակայության պայմաններում, ղեկավարվում է խաների կողմից, ովքեր իրենց տիրույթներում ունենալով անսահմանափակ իշխանություն, զվարճանում են միմյանց հետ պատերազմելով, միմյանց հյուր կանչելով հանում են աչքերը, երկիրն ավերակների է վերածվում: Այնուհետև հեղինակը, հաշվետվությունում նշելով, որ Իրանում տարածված լուրերի համաձայն վեքիլը մահացու հիվանդ է, փորձում է կանխատեսել, թե ինչպիսին կլինի իրադրությունը Իրանում վեքիլի մահվանից հետո, գրելով, որ երկրում երկար ժամանակ արյունահեղություն կլինի, մինչև որևէ մեկը հաջողության հասնի և դառնա շահ կամ վեքիլ, քանի որ Քերիմ խանի որդիները չեն համարվում օրինական ժառանգորդներ[414]:

Հյուպատոսի կանխատեսումներն իրականություն դարձան և Իրանում գահի համար ընթացող պայքարին Ռուսաստանը փոր-

[414] РГАДА, фонд 15, оп. 1, дело 192, с. 134/25 об. 25.

ձեց ակտիվ դիվանագիտական մասնակցություն ունենալ՝ նպատակ ունենալով նման կերպ ամրապնդել և տարածել իր ազդեցությունն Այսրկովկասում: Քերիմ խանի մահվանից հետո (1779 թ. մարտի 2) իշխանության համար պայքար ծավալվեց զենդերի միջև՝ Քերիմի եղբայրներ Զեքի խանի, Սադեղ խանի և Քերիմի որդի Աբոլ Ֆաթհ խանի միջև: Աբոլ Ֆաթհ խանը, իրեն հայտարարելով Քերիմ խանի ժառանգորդ, կարողանում է հաստատվել Շիրազում: Սակայն նրան իշխանությունից զրկում է Սադեղ խանը[415]: Գիլանի Հեդայեթ խանը, ցանկանալով Ռուսաստանին ներգրավել այս պայքարի մեջ, Աստրախանի նահանգապետ Ժուկովին գրած նամակում Քերիմ խանի որդու անունից օգնություն է խնդրում վերջինիս իշխանությունը Իրանում հաստատելու համար[416]: Հայտնի չէ, թե ռուսական իշխանություններն ինչպես են պատասխանել Հեդայեթ խանի այդ նամակին, սակայն աղբյուրներում տեղեկության չենք հանդիպել նամակը ստանալուն հաջորդող ժամանակահատվածում Իրանում ծավալված միջֆեոդալական պայքարին հօգուտ Հեդայեթ խանի և Աբոլ Ֆաթհ խանի ռուսական օգնության և միջամտության մասին:

Երևանի խանի[417] Սուլեյման փաշային գրած նամակից տեղեկանում ենք, որ Իրանում ընթացող իրադարձություններին հետևում էին նաև օսմանյան իշխանությունները՝ քայլեր ձեռնարկելով Այսրկովկասի խաներին միավորելու և տարածաշրջանն

---

415 Պատմութիւն Պարսից, Յօրագրէ Մեսրովպայ Դ Թաղիադեանց Վ. Ա. Սարկաւագի Ս. Էջմիածնի Ճրդեամբ և Ծախիւք Պարոն Յովհաննիսի Սարգսեան Սաղմոսացիոյ ի հայրապետութեան Տեառն Տեառն Ներսիսի Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Հատոր Ա, Կալկաթա 1846, էջ 205: https://books.google.am/books?id=redo-AAAAcAAJ&pg=PA205&lpg=PA205&dq=%D5%A1%D5%AC%D5%AB+%D5%B4%D5%B8%D6%82%D6%80%D5%A1%D5%A4+%D5%AD%D5%A1%D5%B6&source=bl&ots=o4YrEJ_amv&sig=n40K1dZ2QxKqRnx-l04rfOWP70Y&hl=ru&sa=X&ved=0ahUKEwjBxMaBiaXaAhUhM5oKHZvW-DoQQ6AEILDAB#v=onepage&q=%D5%A1%D5%AC%D5%AB%20%D5%B4%D5%B8%D6%82%D6%80%D5%A1%D5%A4%20%D5%AD%D5%A1%D5%B6&f=false:

416 РГВИА, фонд 52, оп 1/194, ч. 1, дело 237, ч. 2, л.6.

417 Հայտնի չէ թե որ խանն է նամակի հեղինակը:



Իրանի խաների ոտնձգություններից զերծ պահելու ուղղությամբ: Նամակից տեղեկանում ենք, որ Ղարաբաղի Իբրահիմ խանն ու լեզգիների Ումմա խանը նամակներ են ուղարկել Երևանի խանին՝ տեղեկացնելով, որ լեզգի զորահրամանատարներն անցել են իրենց (հավանաբար Երևանի խանը նկատի ունի իրեն, Սուլեյման փաշային և իրենց դաշնակիցներին) կողմը[418]: Նամակով հաղորդվում է նաև, որ «Ախալցխայի, Էրզրումի և Ռումի կողմերի սանջակբեկների միրմիրանի պաշտոնը» տրվել է Երևանի խանին, և հրամայվել է, որ եթե որևէ օգնության կարիք լինի, ապա պետք է առանց հապաղելու իրեն օգնության գան[419]:

Օսմանյան իշխանությունների կողմից տարածաշրջանի խաների ու փաշայությունների մասնակցությամբ դաշինք ստեղծելու փորձը նպատակ ուներ դիմագրավելու Այսրկովկասում Իրանի խաներից որևէ մեկի ազդեցության տարածմանը: Օսմանյան իշխանությունները փորձում էին Իրանի խաների ազդեցությունից զերծ պահել հատկապես Երևանի խանությունը: Թերևս դրանով էր պայմանավորված Երևանի խանին միրմիրանի պաշտոն տալը: Դա ըստ էության ձևական բնույթ էր կրում, քանի որ մեր կողմից ուսումնասիրված սկզբնաղբյուրներում չկա որևէ հիշատակություն խանի, որպես «Էրզրումի, Չլդրի և Ռումի կողմերի սանջակբեկների միրմիրան», որևէ գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

Այս ընթացքում Իրանում որոշ հաջողությունների հասած Ալի Մարդան խանը գործունեություն է ծավալում նաև Արաքսից հյուսիս ընկած տարածքներում իր իշխանությունը տարածելու ուղղությամբ: Իրադարձությունների նման ընթացքով որոշակի սպառնալիք առաջացավ նաև Երևանի խանի իշխանության համար: Ալի Մարդան խանի օգնությամբ Զանարդուլի խանը կարողացավ Նախիջևանում իշխանությունից հեռացնել Աբասղուլի խանին և տիրանալ Նախիջևանին: Աբասղուլի խանի կողմնակից Ջիլպի-Ղարաբեկը գրավում է Նախիջևանից 20 վերստ հեռավորության վրա գտնվող Հաջի Դեմուր և Ջարի բերդերը: Աբասղու-

---

418 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 107ա-107բ:

419 Նույն տեղում, էջ 108ա:

լին իր զորքով միանում է նրան և լուր ուղարկում Ղուլամ Ալի խանին՝ խնդրելով նրա օգնությունը: Ս. Բունիաթյանը, ակտիվորեն հետևելով այդ իրադարձություններին, 1784թ. մարտի 26-ին Պ. Պոտյոմկինին ուղղված իր զեկուցագրով հայտնում է, որ Ղուլամ Ալին որոշել է օգնել նրանց[420]: Աբասղուլին օգնության խնդրանքով դիմում է նաև Հերակլ Բ-ին, սակայն վերջինս, զբաղված լինելով իր երկրի ներքին խնդիրներով, չի կարողանում օգնել նրան: Հերակլ Բ-ը Բունիաթյանին տեղեկացնում է, որ ինքն Աբասղուլիին խորհուրդ է տվել սպասել գեներալ Պ. Պոտյոմկինի Վրաստան ժամանելուն, որից հետո հայտնի կլինի Ալի Մարդանի և ռուսական իշխանությունների միջև ընթացող բանակցությունների մասին: Աբասղուլի խանը միաժամանակ նամակ է ուղարկում Ս. Բունիաթյանին՝ հայտնելով, որ ցանկանում է ռուսահպատակ դառնալ, սակայն զրկվել է իր տիրույթներից[421]:

Երևանի խանը որոշում է օգնել նրան, քանի որ Ալի Մարդան խանը, հավակնելով իր ձեռքում կենտրոնացնել նաև այսրկովկասյան տարածքները,[422] հետագայում կարող էր հարձակվել նաև Երևանի վրա[423]: Աղբյուրներում տվյալների սակավության պատճառով հայտնի չէ, թե ինչպես ավարտվեց Ղուլամ Ալի խանի և Աբասղուլի խանի համագործակցությունը:

Ալի Մարդան խանի Այսրկովկասի նկատմամբ հավակնություններ ունենալու մասին է վկայում Հակոբ Անտոնյանի գեներալ Պոտյոմկինին գրած նամակը: Հակոբ Անտոնյանն Ալի Մարդան խանի մոտ էր ուղարկվել գեներալի կողմից: Վերջինիս ուղարկած նամակին ծանոթանալուց հետո Ալի Մարդան խանը պատասխանում է, որ եթե «տիրուհին (Եկատերինա Բ 1762-1796թթ.) իրենից շրջան կամ քաղաք է խնդրում, ապա թող իմանա, որ ինքն աստծու կամոք ամբողջ Իրանը կիսելու իշխանություն ունի, սակայն տեղյակ է, որ տիրուհին ունի շատ քաղաքներ և տարածքներ, ուստի չի կարծում, որ պետք է իրենից տարածքներ խնդրի»: Ալի Մարդան խանն իր այս մերժողական պատասխանին հավելում է, որ Ռուսաստանի հետ հարաբերություններում լավ է տրամադրված[424]: Խանի այս պատասխանից պարզ է դառնում, որ ռուսական արքունիքից եղել է Այսրկովկասում որոշ տարածքներ իրենց զիջելու առաջարկ: Թե որ տարածքների մասին է խոսքը, կարելի է ենթադրել Պ. Բուտկովի աշխատությունում առկա հիշատակումից: Համաձայն դրա՝ խանը ռուսական օգնությամբ շահ դառնալու դիմաց պատրաստ էր Ռուսաստանին զիջելու ոչ միայն նախկինում Ռուսաստանին պատկանած տարածքները, այլ նաև Ղարադաղը, Ղարաբաղը, Նախիջևանը և Երևանը[425]: Սակայն, ինչպես վերևում արդեն տեսանք, Ալի Մարդան խանի կողմից տարածքներ հանձնելու առաջարկը մերժվեց, ինչը նշանակում էր, որ նա հավակնում էր հետագայում իր իշխանությունը տարածել այսրկովկասյան վերոնշյալ խանությունների վրա: Ուստի կարծում ենք, որ Ղուլամ Ալի խանի թուրքամետ դիրքորոշումը[426] պայմանավորված էր ոչ միայն Հերակլ Բ-ի ենթակայությունից դուրս գալու ցանկությամբ, այլ նաև նրա խանությանը Ալի Մարդան խանի կողմից սպասվող վտանգի առկայությամբ:

Այս համատեքստում կարևոր ենք համարում նաև անդրադառնալ Երևանի խանի և Ալի Մարդանի հարաբերություններին, որին մինչ այս անդրադարձ չի կատարվել ուսումնասիրողների կողմից: Մատենադարանի արաբատառ N 233 ձեռագրում առկա են Ղուլամ Ալի խանի նամակներն ուղղված Ալի Մարդանին: Այդ նամակներից մեկով Երևանի խանը հայտնում է, որ Ալի Մարդա-

[420] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 84:

[421] Նույն տեղում, էջ 84-85:

[422] Չնայած Քարթլի-Կախեթի թագավորությունը նախկին իրանական կայսրության մի մասն էր, այնուամենայնիվ դրա նկատմամբ Ալի Մարդան խանը հավակնություն չուներ կամ չէր կարող ունենալ, քանի որ այն անցել էր Ռուսաստանի հովանու ներքո, իսկ Ալի Մարդան խանն էլ, իր հերթին, ռուսական իշխանությունների հետ բանակցում էր նաև Հերակլ Բ-ի միջոցով (տե՛ս **Ա. Սաֆրաստյան,** նշվ. աշխ., էջ 262):

[423] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ. , էջ 84:



[424] Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., Сборник документов, том IV, с. 301.

[425] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа. ч. II, с. 148.

[426] Ղուլամ Ալի խանի և օսմանյան իշխանությունների հարաբերություններին առավել մանրամասն կանդրադառնանք մեր աշխատության հաջորդ ենթագլխում:

նի դեսպանի միջոցով ստացել է վերջինիս հրամանը և նրա մոտ դեսպան ուղարկելով տեղեկացնում, որ պատրաստ է այն կատարել[427]: Մեկ այլ նամակով Ղուլամ Ալի խանը Հերակլ Բ-ին տեղեկացնում է Ալի Մարդան խանի հրամանի մասին, որը վերաբերվում էր Իրանում կատարվող իրադարձություններին[428]: Համաձայն նամակի, Ալի Մարդան խանի որդին Շեյխ Ուվեյս խանը պարտության է մատնել Աղա Մուհամմադ խանին և տիրել Մազանդարանին, Դամղանին և այլ տարածքների, որոնք պատկանում էին վերջինիս[429]: Փաստորեն, Ալի Մարդանը ոչ միայն հավակնություններ ուներ իր իշխանությունը տարածել Երևանի խանությունում, այլ արդեն իսկ այն համարում էր իր ազդեցության գոտի և Երևանի խանին հրամաններ էր տալիս: Իսկ նամակում իր ռազմական հաջողությունները թվարկելը ըստ էության դիվանագիտական քայլ էր, որով Ալի Մարդանը, ցանկանում էր ցուցադրել իր ուժը և խանի վրա դիվանագիտական ճնշում գործադրել՝ իր հրամաններին ենթարկվելու համար: Ղուլամ Ալի խանն իր հերթին փորձում էր պահպանել իր ինքնուրույնությունն ու դիրքերը՝ օգտագործելով տարբեր գործիչների միջև առկա հակամարտությունները: Այդ իսկ պատճառով նա Ալի Մարդանի դեսպանի մասին հաղորդեց Հերակլ Բ-ին՝ փորձելով նրա դեմ պայքարել նաև վերջինիս օգնությամբ: Սա փաստում է նաև այն մասին, որ տվյալ ժամանակաշրջանում պահպանվում էր Երևանի խանության վասալական կախվածությունը վրաց թագավորից, ինչի դիմաց վերջինս պարտավոր էր թշնամիներից պաշտպանելու Երևանի խանությունը:

[427] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 165բ:
[428] Գահի համար ընթացող պայքարի ընթացքին:
[429] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 169ա:



## 4.2. Երևանի խանությունը ռուս-վրաց-թուրքական հարաբերությունների համատեքստում 1780-ականներին

Մինչ Իրանում գահի համար պայքար էր ընթանում Աղա Մուհամմադ խանի և Ալի Մարդան խանի միջև, Այսրկովկասի քաղաքական կյանքում արմատական փոփոխություններ տեղի ունեցան 1783թ. հուլիսի 24-ին Գեորգիևսկ ամրոցում կնքվեց ռուս-վրացական պայմանագիրը, որով Քարթլի-Կախեթի թագավորությունը (Արևելյան Վրաստան) անցավ Ռուսական կայսրության հովանու ներքո: Պայմանագրի վեցերորդ հոդվածով Ռուսական կայսրությունը Քարթլի-Կախեթի թագավորությունը համարում էր իր դաշնակիցը, պարտավորվում պաշտպանել այն թշնամիներից՝ չմիջամտելով երկրի ներքին գործերին[430]:

Թվում էր, թե Քարթլի-Կախեթի թագավորությունը վերջնականապես ազատագրվեց թուրքական և պարսկական հարձակման վտանգից: Գեորգիևսկի պայմանագիրը մեծ ոգևորություն առաջացրեց նաև հայ ազատագրական գործիչների մոտ: Կրկին ի հայտ եկան Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրության օգնությամբ ազատագրելու նախագծեր, ռուս-հայկական դաշնակցային պայմանագրի օրինակներ, որոնք պետք է կնքվեին Ռուսական կայսրության օգնությամբ Արևելյան Հայաստանի ազատագրումից հետո[431]: Այս իրադարձություններում առանցքային դերակատարում ուներ նաև Արարատյան դաշտի մեծ մասն ընդգրկող Երևանի խանությունը:

Գեորգևսկի պայմանագրի կնքումից հետո Այսրկովկասում էլ ավելի սրվեց ռուս-թուրքական մրցակցությունը: Կողմերը սկսեցին ակտիվորեն բանակցել տարածաշրջանի մյուս տիրակալների հետ, փորձելով հնարավորինս շատ տեղական իշխողների գրավել իրենց կողմը: Գեորգիևսկի պայմանագրի կնքումից մի քանի օր անց գեներալ Մ. Պոտյոմկինը նրանց է ուղարկում իշ-

[430] **О. Маркова,** указ. соч., с. 168-169.
[431] Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Մնացականյան,** 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ, Բանբեր Մատենադարանի № 4, Երևան 1958, էջ 139-160:

խան Գ. Պոտյոմկինի հրովարտակները՝ առաջարկելով ընդունել Ռուսական կայսրության գերիշխանությունը և անցնել դրա ենթակայության ներքո: 1783թ. հոկտեմբերի վերջից նոյեմբերի սկիզբ ընկած ժամանակահատվածում Երևան է ժամանում կոմս Ապրակսինը՝ Հուսեյն Ալի խանին Պոտյոմկինի հրովարտակը հանձնելու համար[432]:

Ձնայած Երևանի Հուսեյն Ալի խանը, ինչպես արդեն գիտենք, լինելով Քարթլի-Կախեթի թագավոր Հերակլ Բ-ի հարկատուն, բազմիցս փորձել էր դուրս գալ վերջինիս ազդեցությունից՝ խուսափելով հարկատվությունից, այդ տարիներին Հերակլ Բ-ի դեմ ակնհայտ թշնամական գործողությունների չդիմեց, քանի որ, ըստ Իրանում Ռուսաստանի հյուպատոս Գ. Բոգոլյուբովի, Երևանի հայերը պաշտպանում էին Հերակլ Բ-ին[433]: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, խանը գտնվում էր տնտեսական և ռազմական թույլ վիճակում և չէր ցանկանա Հերակլ Բ-ին մեկ անգամ ևս առիթ տալ արշավելու դեպի Երևան: Իսկ ցարական Ռուսաստանը Այսրկովկասի խանությունների վրա իր իշխանությունը տարածելու քաղաքականությունում համագործակցում էր Հերակլ Բ-ի հետ: Այս քաղաքականության համար հիմք էր նախապատրաստվել Գեորգիևսկի պայմանագրի երկրորդ հոդվածով, որով Եկատերինա Բ. կայսրուհին (1762-1796թթ.) երաշխավորում էր ոչ միայն Հերակլ Բ-ի թագավորության այն ժամանակվա սահմանների ամբողջականությունն ու պաշտպանությունը, այլ նաև այն տարածքների, որոնք հետագայում կմիացվեին Հերակլ Բ-ի թագավորությանը[434]: Վերջինս ռուսներին առաջարկում էր Այսրկով-

[432] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 78:

[433] **О. Маркова,** նշվ. աշխ., էջ 141. Երևանի խանությունում հայությունը կազմում էր բնակչության մեծ մասը, տե՛ս **А. Цагарели,** Грамоты и другие исторические документы 18 столетия, относящиеся къ Грузии, Том 1, с 1768 по 1774, с. 434. 1783թ. փետրվարի 9-ին ռուսական գործակալ Ռայնեգսը լինելով Երևանում, բերդի մասին գրում է. «վաթսուն թնդանոթը բավական է խանին և բոլոր պարսիկներին Երևանից քշելու համար: Խանը ներսից պաշտպանված է հայերի կողմից: Քաղաքը լի է հայերով»: Տե՛ս **А. Иоаннисян,** Россия и Армянское освободотельное движение в 80-х годах 18 столетия, с. 214.

[434] **О. Маркова,** указ. соч., с.167.



կասում Ռուսաստանի և իր ազդեցությունն ուժեղացնելու համար իր թագավորությունն ապահովվել լեզգիների արշավանքներից, օգնել, որպեսզի իր իշխանությունն ամրապնդվի Գանձակում և Երևանում, տարածել իր ազդեցությունը նաև Նախիջևանում[435]:

Իշխան Պոտյոմկինի նամակը ստանալու պահին Հուսեյն Ալի խանը, վախենալով վրաց թագավորի և ռուսների հետ խնդիրներ ունենալուց, խուսափում է մերժողական պատասխան տալ: Ուստի չմերժեց ռուսներին ենթարկվելու առաջարկը, սակայն խուսափեց նաև իրեն բացահայտ ռուսահպատակ հայտարարելուց: Նա պատասխան նամակ գրեց Պոտյոմկինին, որով հայտնում էր, որ քանի որ ինքը Հերակլ Բ-ի հպատակն է, հետևաբար վերջինիս հետ միասին ևս դառնում է ռուսահպատակ[436]: Այդպես Հուսեյն Ալին, չմերժելով ռուսներին, մի կողմից չի թշնամանում նրանց հետ և կարողանում է պահպանել իր ինքնուրույնությունը, մյուս կողմից որևէ պարտավորություն չի ստանձնում ռուսական իշխանությունների առաջ:

Ռուսական գործակալների Այսրկովկասի տիրակալների հետ հանդիպումները, Հուսեյն Ալիի կողմից Ապրակսինին լավ ընդունելության արժանացնելը թուրքական իշխանությունների կողմից դիտարկվեցին որպես այդ տարածքներում ռուսական ազդեցության ավելացմանն ուղղված քայլեր: Դրան հակազդելու համար Օսմանյան կայսրությունից գրություններ և հրամաններ ուղարկեցին սահմանային փաշաներին[437]: Ի կատարում այդ հրահանգների 1783թ. Վրաստանին սահմանակից թուրք փաշաները զինվեցին, որից հետո Այսրկովկասում լուրեր տարածվեցին, որ Օսմանյան կայսրությունը պատրաստվում է պատերազմի և Կովկասում նոր ճակատ բացելու: Ախալցխայի, Էրզրումի, Կարսի և Բայազետի փաշաները կապեր հաստատեցին Երևանի և Այսրկովկասի խաների հետ՝ հրավիրելով համատեղ հարձակման Հերակլ Բ-ի

[435] Նույն տեղում, էջ 174.

[436] ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 192ա, 192բ:

[437] **Ա. Սաֆրաստյան,** նշվ. աշխ., էջ 247:

վրա[438]: Օսմանյան կայսրությունն իր այսրկովկասյան քաղաքականությունում հատուկ տեղ էր հատկացնում Երևանին: Երևանի բերդն իր դիրքով և անառիկությամբ ռազմավարական նշանակություն ուներ, ինչպես նաև տնտեսական առումով կարևոր էր Վրաստանի համար: Երևանի խանության տնտեսության և այնտեղի հայ բնակչության ունեցած դերի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև ռուսական գործակալ Ռայնեգսը, ով, չորս օր լինելով խանի հյուրը, արժանանում է լավ ընդունելության և նշում է, որ խանի վերաբերմունքից հասկացել է, որ խանը պատրաստ է ռուսահպատակություն ընդունել, միայն եթե նման առաջարկ արվի: 1783 թ. փետրվարի 9-ին նա գրում է, որ մեկ տարի առաջ բամբակի 1/7-րդ մասը հավաքել է խանը, որն արժե մոտավորապես 476000 ռուբլի[439]:

Օսմանյան կայսրությունն իր հերթին քայլեր է ձեռնարկում Երևանը հակավրացական կոալիցիայի մեջ ընդգրկելու ուղղությամբ: 1783թ.-ի աշնանից 1784թ.-ի ապրիլ ընկած ժամանակահատվածում Խալիլ-Էֆենդու գլխավորած պատվիրակությունը այսրկովկասյան խանությունների ղեկավարների հետ հանդիպումներ անցկացնելով փորձում էր հակավրացական և հակառուսական դաշինք կազմել: Դաղստանից, Շիրվանից և Ղարաբաղից հետո նրա պատվիրակությունը գալիս է Երևան: Թե Երևանի որ խանի հետ է հանդիպել նա և ինչպիսի բանակցություններ են ընթացել հայտնի չէ[440]: Սակայն հայտնի է, որ Երևանի խանի կողմից ուղարկված զորք չկար 1784թ. փետրվարին Շուշիում Իբրահիմ խանի մոտ հավաքված 8000-անոց բանակում, որն, ըստ Օ. Մարկովայի, Խալիլ-Էֆենդու բանակցությունների արդյունքում ձևավորված հակավրացական կոալիցիա էր՝ հիմնականում բաղկացած դաղստանցի ֆեոդալներից: Ղարաբաղի Իբրահիմ խանի հակավրացական և հակառուսական կոալիցիայի մեջ լինելը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: 1783թ. վերջին Գանձակում տեղի ունեցած ապստամբության արդյունքում տեղի կառավարիչը վտարվեց: Սա Իբրահիմ խանի համար հարմար առիթ էր, որպեսզի Գանձակը, որը մինչ այդ իր և Հերակլ Բ-ի ազդեցության ներքո էր, ամբողջությամբ իրեն ենթարկեր[441]: Սակայն ռուսական իշխանությունների դիվանագիտական միջամտությամբ այդ կոալիցիան փլուզվեց[442]:

Երևանի խանության համար մրցակցությունը առավել սուր բնույթ կրեց 1783թ.: Այդ տարվա նոյեմբերին մահացավ Երևանի Հուսեյն Ալի խանը: Խանական իշխանության ժառանգորդ Ղուլամ Ալի խանի[443] հետ ակտիվ նամակագրական կապեր սկսեցին հաստատել տարածաշրջանի տիրակալները: Ղուլամ Ալի խանն իր հերթին շարունակում էր բարեկամական կապեր պահպանել և՛ վրացական և՛ օսմանյան իշխանությունների հետ: Ղուլամ Ալին ցավակցական նամակ է ստանում նաև վրաց Դարեջան թագուհուց, որի համար շնորհակալական նամակ է ուղարկում նրան, նշելով, որ թագուհու խոսքերը շատ են սփոփել իրեն հոր մահվանից հետո[444]:

Ղուլամ Ալիի խան ընտրվելուց հետո Երևանի հայ հոգևորականությունը և քաղաքի ավագանին պատվիրակություն են ուղարկում Հերակլ Բ-ի մոտ՝ նրան որպես խան հաստատելու հա-

438 **О. Маркова,** նշվ. աշխ. , էջ 202.

439 **А. Иоаннисян,** Россия и Армянское освободотельное движение в 80-х годах 18 столетия, с. 214-215. Որպեսզի հասկանալի լինի թե որքան արժեք ուներ այդ գումարն այն ժամանակվա համար, պարզապես անդրադառնանք Դուբրովինի հաղորդմանը, համաձայն որի Հերակլ Բ-ն իր երկրի հանքերի եկամտից կարող էր տարեկան ընդամենը 250 000 ռուբլի հատկացնել Վրաստանի ռուսական զորքերի համար:

440 Հուսեյն Ալի խանը մահացել է 1783թ. նոյեմբերի վերջ դեկտեմբերի սկիզբ ընկած ժամանակահատվածում, որից հետո Երևանի խան է դարձել Ղուլամ Ալի խանը:

441 **А. Иоаннисян,** Россия и Армянское освободотельное движение в 80-х годах 18 столетия, с. 101.

442 **О. Маркова,** նշվ. աշխ. , էջ 204.

443 Ղուլամ Ալիի մայրը Հուսեյն Ալիի առաջին կինն էր և Երևանում բնակություն հաստատած քրդական մի ազդեցիկ ցեղի առաջնորդի դուստրը:

444 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 69ա:

մար[445]: Նոր խանի ընտրության վերաբերյալ ուշագրավ է Գյուտ քահանա Աղայանցի հաղորդած տեղեկությունը. *«Երևնի մեծամեծք այլազգեաց զընտրութիւն իշխանութեանն հաստատել ի վերա մեծ որդւոյ նորին Ղուլամալի խանին....»*[446]: Այսպիսով Ղուլամ Ալիին խան են ընտրել Երևանի այլազգի՝ այսինքն ոչ հայ մեծամեծները, սակայն նրան խան հաստատելու համար Հերակլ Բ-ի մոտ պատվիրակություն է ուղարկում նաև հայ հոգևորականությունը: Այս երևույթն արտացոլում է ժամանակի հայ հոգևորականության դերը Հերակլ Բ-ի և Երևանի իշխանությունների հարաբերություններում: Միաժամանակ հարկ ենք համարում անդրադառնալ այն փաստին, որ հայությունը, անկախ խանությունում ունեցած տնտեսական և քաղաքական դերից, խանության գլխավոր ղեկավարի ընտրությանը մասնակից չի եղել: Կարծում ենք, դա կարող էր պայմանավորված լինել հայերի լավ հարաբերություններով վրացիների և ռուսների հետ, ինչը երբեմն հանգեցնում էր հայերի նկատմամբ մահմեդական իշխանությունների անվստահությանը:

Ղուլամ Ալիին, որպես Երևանի խան (այսինքն տիրակալ) հաստատելուց հետո Հերակլ Բ-ը քայլեր է ձեռնարկում Երևանում իր դիրքերն էլ ավելի ամրապնդելու ուղղությամբ: Երևան է ուղարկում Ահմադ սուլթանին[447], ցուցումներ է տալիս, թե ինչպես վարվի խանը նրա և Երևանի մեծամեծների հետ: Խանն իր հերթին պատասխանում է, որ վալիին հասկացել է բառ առ բառ և կկատարի նրա ցուցումները: Ինչպես նաև հայտնում է, որ Միրզա Գուրգենի ժամանելուց հետո լուրը ստացել է նրա միջոցով և հոր մահվանից

445 Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., Сборник документов, том IV, с. 267. Ս. Բուռնաշևի Մ. Պոտյոմկինին գրված զեկուցագրում Ղուլամ Ալին ներկայացվում է որպես քրդերի առաջնորդ Շամոին աղայի թոռը: Սակայն Գ. Աղանյանցի մոտ առկա տեղեկատվության համաձայն Ղուլամ Ալին Սուլեյման փաշայի թոռն էր: Տե՛ս **Գ. Աղանյանց.** Դիվան Հայոց պատմության, Գիրք Գ. Թիֆլիս 1894թ., Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 195: Իսկ Վ. Գրիգորյանի մոտ նշվում է, որ քրդերի առաջնորդ Շամոին աղան Ղուլամ Ալիի մորեղբայրն էր: Տե՛ս **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 88:

446 **Գ. Աղանյանց**, Դիվան հայոց պատմության, գիրք Ա-Բ, Թիֆլիս 1893, էջ 7:

447 «Սուլթանը» այստեղ կոչում է և չի ենթադրվում, որ այն կրողը պետության ղեկավար պետք է լինեն:



հետո անցել է գործերի կատարմանը[448]: Ցավոք տեղյակ չենք, թե ով էր Ահմադ սուլթանը և ինչ դերակատարում նա կարող էր ունենալ Երևանի խանությունում, սակայն Հերակլ Բ-ի ցուցումները նրա և Երևանի մեծամեծների հարաբերությունների վերաբերյալ թույլ է տալիս ենթադրելու, որ ա) Ահմադն ամենայն հավանականությամբ վրաց արքայի ներկայացուցիչն է եղել Երևանում, բ) Հերակլ Բ-ը միջամտում է նաև խանի և Երևանի ազդեցիկ անձանց միջև փոխհարաբերություններին, ինչը չէր լինում Հուսեյն Ալի խանի օրոք:

Այս ընթացքում ակտիվ դիվանագիտական գործունեություն էին ծավալում նաև օսմանյան իշխանությունները: Ղուլամ Ալիի մոտ են ժամանում Ախալցխայի, Կարսի, Էրզրումի և Բայազետի փաշաների դեսպանները՝ իբրև հոր մահվան համար ցավակցելու: Սակայն նրանք նպատակ ունեին բանակցել Ղուլամ Ալիի հետ համապատասխան գումարի դիմաց բերդը հանձնելու հարցի շուրջ[449]:

Այս բանակցությունների արդյունքում Ղուլամ Ալի խանը, չնայած Հերակլ Բ-ի կողմից էր որպես խան հաստատվել, թուրքամետ դիրքորոշում է ընդունում և սկսում քայլեր ձեռնարկել Հերակլ Բ-ի ազդեցությունից դուրս գալու ուղղությամբ: Ղուլամ Ալի խանի քաղաքականության վերաբերյալ Երևանում ռուսական գործակալներից Սահակը գրում է հետևյալը. *«Նոր խանը ցանկանում է ավելացնել իր ուժերը և նրա Հերակլին ենթակա մնալը կասկածելի է, քանի որ նախկին լուրերը, որ ռուսական զորքերը առաջ են գալու, հիմա կասկածելի են: Կարծիք կա, որ այդ լուրերը կեղծ են և Հերակլի հրամանով են տարածվել՝ Հերակլին (խանությունը-Վ. Հ.) ենթակա պահելու համար»*[450]: Ղուլամ Ալի խանը սկսեց երկակի քաղաքականություն իրականացնել, ինչը նպատակավոր էր Օսմանյան կայսրության համար: Նոր խանը մի կողմից իր բարեկամությունը և հավատարմությունն էր հավաստում վրացական

448 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 110ա:

449 **О. Маркова,** նշվ. աշխ. , էջ 205.

450 Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., Сборник документов, том IV, с. 274.

արքունիքին,[451] ուղտեր և այլ նվերներ ուղարկելով Հերակլ Բ-ին,[452] մյուս կողմից օսմանյան սուլթանին պատրաստակամություն էր հայտնում ամեն ինչ անել իսլամի թշնամիներին (ըստ էության տվյալ դեպքում խոսքը վրացիների մասին է Վ. Հ.) ոչնչացնելու համար[453]:

Գեներալ Գ. Պոտյոմկինը Հերակլ Բ-ին խորհուրդ է տալիս ուշադիր հետևել Երևանի նոր խանի քայլերին, ում երկակի քաղաքականության մասին նա տեղեկացված էր: Ախալցխայի, Բայազետի, Կարինի և Կարսի փաշաները Ղուլամ Ալիին առաջարկում են բերդը հանձնել թուրքերին, մյուս խաների հետ հարձակվել Վրաստանի վրա՝ փոխարենը խոստանալով գումար և առանձնահատուկ շնորհներ սուլթանից[454]: Այդ ժամանակ Երևանի խանը սուլթանից նվերներ և 2000 աշրաֆի ոսկի է ստանում[455]: 1784թ հունվարի 15-ին գեներալ Գ. Պոտյոմկինը Երևանից լուր է ստանում, որ Ղուլամ Ալի խանը թուրքերից նամակ ստանալուց հետո սկսել է զորքեր հավաքել և իր դիրքերն ամրացնում է[456]:

Հերակլ Բ-ի իշխանությունը շարունակում է թուլանալ Երևանում, փոխարենն աշխուժանում էին թուրքամետ ուժերը: Ռուսական իշխանությունները Հերակլ Բ-ի հետ սկսում են միջոցներ ձեռնարկել Երևանում թուրքամետ ուժերին ճնշելու համար: 1784թ. ապրիլի 14-ին Ս. Բուռնաշևը գեներալ Գ. Պոտյոմկինին գրած զեկուցագրում նշում է, որ Երևանի խանի Հերակլ Բ-ին ուղարկած նվերները քիչ են նախկին խանի կողմից տրված հարկից: Իսկ քրդերի ցեղապետ Ծամտին աղան դադարեցրել է Հերակլ Բ-ին հարկ վճարել[457]: Հարկ ենք համարում նշել, որ նախկի-

451 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 69ա:

452 **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 87:

453 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 74ա:

454 **Վ. Գրիգորյան,** Դիվան հայոց պատմության, նոր շարք. Գիրք առաջին, Ղուկաս Կարինեցի, հատոր Ա, 1780-1785, Երևան 1984, էջ 57:

455 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 74ա:

456 Армяно-русские отношения в 18 веке 1760-1800гг., Сборник документов, том IV, с. 303.

457 **Վ. Գրիգորյան,** Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում, էջ 87: Երևանի քրդերը 1765թ. -ին դարձել էին Հերակլ Բ-ի հարկատուն: Տե՛ս **Գ. Աղանյանց,** Դիվան Հայոց պատմության, Գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ ՃՁԴ:



նում քրդերի կողմից հարկատվությունից խուսափելը հանգեցրել էր վրաց արքայի կողմից պատժիչ արշավանքների իրականացմանը, ինչին հաջորդել էր քրդերի վրա իր իշխանության վերականգնումը:

Աղբյուրների հաղորդումների վերլուծությունից պարզվում է, որ Ղուլամ Ալին բավականին հաջող դիվանագիտական գործունեություն է իրականացրել: Նա, հավատարմություն հայտնելով օսմանյան իշխանություններին, ոչ թե նվազեցրել է իր իշխանությունը Երևանում և կախվածության մեջ ընկել օսմանյան սուլթանից, այլ ձեռք է բերել ավելին, քան սուլթանի կողմից ուղարկված նվերները: Օսմանյան կայսրությունը հակավրացական և հակառուսական կոալիցիայի մեջ ընգրկում է նաև Ատրպատականի խաներին՝ Խոյի Ահմադ խանի գլխավորությամբ[458]: Երևանի խանին նամակ է ուղարկվում, որով հավաստվում է, որ Երևանի վրա որևէ հարձակում լինելու դեպքում օսմանյան սահմանային փաշայությունները, Ատրպատականի խաները Ահմադ խանի գլխավորությամբ օգնություն կտրամադրեն[459]: Նամակում նշվում է, որ վերոնշյալ անձինք, բացի Երևանից, պետք է պաշտպանեն նաև Իրանի և Օսմանյան կայսրության սահմանները[460]: Երևանի առանձին նշումը Օսմանյան կայսրությունից և Իրանից նշանակում է, որ այն թուրքերի կողմից դիտվում էր որպես Իրանից անկախ իշխանություն և թուրքերը չէին ճանաչում Իրանի որևէ տիրակալի իրավունքները Երևանի նկատմամբ:

Ղուլամ Ալի խանն իր հերթին պատասխան նամակով տեղեկացնում է, որ Հերակլը Բ-ը հավատարիմ է իր հոր՝ Հուսեյն Ալի խանի հետ կնքած համաձայնագրին և ոչ վրացական, ոչ ռուսական կողմից որևէ ոտնձգություն առայժմ չկա[461]: Միաժամանակ խնդրում է հրամանագիր շնորհել Օսմանյան կայսրության սահ-

458 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 112բ: Սա պետք է տեղի ունեցած լինի այն ժամանակահատվածում, երբ ոչ Ալի Մարդան խանը, ոչ Աղա Մուհամմադ խանը և ոչ էլ Իրանի գահի հավակնորդներից որևէ մեկը իշխանություն չուներ Ատրպատականում:

459 Նույն տեղում, էջ 112ա-112բ:

460 Նույն տեղում, էջ 112ա:

461 Նույն տեղում, էջ 112բ:

մանային տիրակալներին և Ահմադ խանին, իսկ անհրաժեշտության դեպքում իրեն անհապաղ օգնություն շնորհել և չթերանալ այդ հարցում[462]: Ծարունակելով զարգացնել իր հարաբերությունները թուրքական իշխանությունների հետ՝ Ղուլամ Ալին կարողանում է ավելի ամրապնդել իր դիրքերը: Սուլթան Աբդուլ Համիդ I Ղազիի (1774-1789) վեզիր Ազեմին գրած նամակով, շնորհակալություն հայտնելով իրեն ուղարկված գումարի և սամույրե մուշտակի համար՝ հավաստում է իր հավատարմությունը: Ղուլամ Ալին, գովեստի խոսքեր ասելով Չլդրի և Էրզրումի վեզիրների, Կարսի և Բայազետի միրմիրանների հասցեին, մեծ ուրախություն է հայտնում «Անատոլիայի» (տվյալ դեպքում Արևմտյան Հայաստան Վ.Հ.) բեկլարբեկությունը իրեն շնորհելու կապակցությամբ[463]:

Հարկ ենք համարում քննության ենթարկել այս տեղեկատվությունը, քանի որ այն մինչ այս անհայտ և պատմագիտական աշխատություններում շրջանառությունից դուրս է եղել: Բացի այդ, այնքան էլ տրամաբանական չէ այն, որ սուլթանը Ղուլամ Ալիին կարող էր հանձնել ամբողջ «Անատոլիան»: Այնուամենայնիվ սկզբնաղբյուրների ուսումնասիրումից պարզվեց, որ «Անատոլիան» Ղուլամ Ալիին շնորհելու հրամանի վերաբերյալ նամակ եղել է, քանի որ Ղուլամ Ալին սուլթանին ուղարկած նամակով, նշում է, որ որոշ խնդիրների պատճառով անհանգստացած է եղել և երբ լուր է ստացել, որ «սուլթանն իրեն է շնորհել Անատոլիայի բեկլարբեկությունը, մեծ ցնծություն է ապրել»[464]:

